





Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

---

Տ Ա Գ Ն Ա Պ Ը

---

ԱԶԳԱՎԷՊ



ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

---

1 9 0 4

A 7  
15022



# Տ Ա Գ Ն Ա Պ Ը

Ա .

**Վ**ԱՆՐԱՄ իր հօր գեղջկական օճախին առջև նստած մտածկոտ աշուրներով կը գիտէր կրակը, որ իր աղօտ փայլով մեղմ լոյս մը կը ճառագայթէր : Ներսը սրտին խորշերը կրակոտ գաղափարներով լեցուած, կը սիրէր գիտել կրակ, և կրակին վրայ մտածել : Հայրը վախճանած էր : Մայրը և իր երկու եղբայրները անէն հետո՝ գիշեր ատեն լորամարզի սրսալու գացեր էին . ինքը մինակ կը հսկէր, սակայն միտքը մինակ չէր . գլուխը, երկու թևերուն մէջ առած կ'երազէր իրեն հասակակից Հայկանուշի փիլիսոփայական բարոզները : Հայկանուշ վահրամին մտերմացեր էր ժընձովի մէջ ուսանողական տարիներուն . անոնց մտերմութեան կապը միայն գիտութեան օգակով միացած էր . երկուքն ալ կը ջանային

այդ օգակը ամբակուս պահել և բնաւ չի  
 խղել: Երկուքն ալ ազգային նուիրական ա-  
 ւերակներու վրայ երգուեր էին չի մնալ ար-  
 տասահմանի մէջ, այլ հայրենիքի ամենէն  
 խեղճ միջավայրերը թափառելով կազմակեր-  
 պել կրթական հաստատութիւններ և հայ  
 զեղջուկներու մէջ ծաւալել անտեսագիտու-  
 թեան վարդապետութիւնը և ինքնագարգա-  
 ցումի գիտութիւնը: Վեց ասրի ժրնէլլի մէջ  
 այս գաղափարով կը սնանին, և նոյն գա-  
 ղափարը իրենց սրտին անբանարարելի գա-  
 ւանանքը կ'ըլլայ: Գեո նոր հայրենիք վե-  
 րագարձած, փութկոս ետանդով մը գործու-  
 նէութեան կ'ուզէին յանդիլ: Բարին, զեղե-  
 ցիկը, շար ու սպեղ խոշընդոսներու պա-  
 տահած են զրեթէ միշտ, և նահատակուած  
 են անոնք: Երկու գարգացեալ կրթեալ գլուխ-  
 ները կը տեսնէին իրենց գաղափարներու  
 նահատակուիլը: Կրնային տակալ ներքին  
 անգուսպ մղումներուն: Անհնարին էր: Իրենց  
 ներսը բնկած էր հասարակութեան օգտա-  
 կար ըլլալու հրդեհը: Վճուեր էին գործել  
 տապալելով ամէն արգելք, գործել փշրելով  
 ամէն ընդդիմութիւն:



Գիշերը կը յառաջէր. վահրամ նոյն գի-  
 շերը աւելի գժրազգ, աւելի լքեալ էր, իրեն

միլիթարանքը, գիշերային շքնաղ հարսը՝  
 լուսնակը՝ ծածկեր էր գէմքը. անոր փայլով,  
 անոր շողշողուն հրասպոյրով կը սպաննէր գի-  
 շերուան խաւարչաին ժամերը, անոր ճառա-  
 գայթներուն մեղմանոյշ շղարչին տակ կը  
 բանար գիտական, գեղեցկագիտական գրքերը  
 և կ'ընկղմէր գիտութեան ծովին մէջ: Գիշերը  
 լուսնկայ չէր. ու ճառագայթող աստղերը  
 իրեն համար կայծոռիկներէ աւելի բան մը  
 չէին արժեր: Աստղերը իր հոգեկան տաղ-  
 նային վրայ աւելի կրակ կը թափէին: Վեր  
 իրենց աչք նետելէն կը զգուշանար, վասն  
 զի աստղերու գաղանիքը, իրեն միաքը վեր  
 բաշխով, կը հետացընէր, և անձանօթին  
 անսահմանութեան մէջ կը շարչրկէր. խեղճին  
 միաքը խորագանուած ու շուարած վար կը  
 գահալիժէր: Գիշերային շողակրատ միջատ-  
 ները մաղձոտ ու միօրինակ տաղակալի  
 բղղիւններով կը կոտրէին խաւարին սգեսպատ  
 տհարկութիւնը, որուն զարհուրանքի երգը  
 կը հնչեցընէին տանիքներու և սօսիներու  
 գազաթը թառած կկուները ու բուերը: Ա-  
 սոնք էին խաւարին յուղարկաւորները, ա-  
 սոնք գիշերուան սգրանուազ խմբերգունները:



Վահրամին խրճիթին մօտեցաւ ստուեր  
 մը. ճրագը թողուց ջրհորին եզերքը, գիմեց

պատուհանին՝ ուսկից ներս նեակց նամակ մը և հեռացաւ : Աշնանային շոր տերեւները փախստականին սաքին տակ՝ կը պայթեցընէին իրենց գիականային գայրութիւն, սաուերն ալ կը գայրանար անոնց մասնութեան վրայ, բարկացողները իրարու լեզուէ շէին հասկնար. սաուերին հեռապնդող աչք մը շկար. ան հեռացաւ, գիմեց իր տեղը. իսկ Վահրամ նամակը սրտին քսելով գետին փռուած կը տաղնապէր. կը մնչէր կը հասաչէր :

— Ճրագ, ճրագ . . .

Հասկցած ու գուշակած էր թէ ան պիտի բլլար այդ նամակի հեղինակը. ուրախութեամբ սիրազեղ՝ տրտիւմը իրեն ամբողջ մարմինը գիւահարական յուզումի մէջ կը ձգէր. բերնէն ելած միակ ու կարուկ բանն էր.

— Ճրագ . . .

Խրճիթին մէջ շի կար իր ուզած ճրագը. նամակը անյազարար կարդալու համար ճրագ կը փնտուէր. պահ մը մտածելէն յետոյ, կը պատուէ նամակին պահարանը, կը բանայ նամակը, կը մօտեցընէ կրակին. կրակը մոխրով ծածկուած է, կոյր աչքերու պէս կաթիլ մը լոյս չունի. ան շի համբերեր, մասաւրները կը միտէ մոխիրին մէջ, գուրս կը հանէ կրակ մը, քարին վրայ գնելով կ'արծարծէ, կրակ կու տայ պահարա-



նին և անոր բոցով կը կարգայ նամակին  
 Հեղինակին անունը, և անհնչով նոր ստորա-  
 գրութիւն մը կը տազնասօլի. նամակը չէր  
 կրեր Հայկանուշ, այլ Աբմաւենի ստորագրու-  
 թիւնը: Մի էր այդ: Ճրագի պէտքը դեռ  
 անկի զգալի կ'ըլլայ. կը մօտենայ պատու-  
 Հանին, լոյս չի կայ, լուսին չի կայ, բայց  
 Հետուն իր խրճիթին Հանդէպ կը անհնչ գիւղ-  
 ւոր քաղաքացիներուն տունը, սրտդուած պայ-  
 ծաս կանթեղներու, ճրագներու և ջահերու  
 բոցին մէջ. անսնք Հանդէսի մէջ են, կ'ու-  
 զեն պարերով գիշերը լուսընել: Վահրամ  
 դարձեալ կու գայ կը նստի օճախին ասջեւ,  
 Հիմա չի մտածեր, այլ ինքն իրեն կը խօսի.

— Անկարելի է. պէտք է ճրագ մը ճա-  
 րեմ, անպատճաս պէտք է կարգամ այս նա-  
 մակը:

Չեզր կը մօտեցընէ փռան դոնէն կա-  
 խուած նիւարին (կանթեղ). բայց այն շոր-  
 ցած ցամքեր էր. խղը ուսկից գանէր, փռան  
 աջակողմի խորշին մէջ կը միտէ ձեռքը, կը  
 գանէ խղի շիշը, որուն մէջ Հազիւ երկու  
 մաս բան կայ, և սր երկրորդ օրուան ի-  
 բնց Հասարակաց ճաշին Համար պահուած  
 է. կը Հառաչէ.

— Չեանունայն կը մեամ. Հետաքրքրու-  
 թեանս Համար կարելի է գրկել ամբողջ

ընտանիքը . նինարը լիցընեմ արդ խղով,  
վասեմ, Աստուած սղորմած է . վաղը վա-  
ղուան գիտնալիքը . ասնեմ այս անգամ  
բայլը . . . Բայց չէ որ մայրս գիտէ աս  
ամէն ունեցած շունեցածը . թէ հարցընէ Բն-  
պատասխան կրնամ տալ . սուա մը շինել  
կլլեցընել . չէ, այդ նկարագրի մարդու ան-  
վայել է . լաւ է ճշմարիտը ըսեմ իրեն, լա-  
ւ է իր նախաաշական խօսքերու տակ ընկ-  
նուիմ, քան թէ ստեմ :

Վճռական բան մը շի կրնար որոշել, սրով  
գործի շի յանդիր . նորէն մեռելային լաւ .  
թեան մէջ կը թողու խրճիթը . կը մտածէ,  
երկար կը մտածէ, ու գարձեալ ինքն իրեն  
կը խօսի :

— Պէտք է վճռական ըլլալ . քնածալ  
անկարելի է , քանի որ արդէն քունի ա-  
տուածը , անուրջներու աստուածը անգամ  
է ինծի համար . ան իր օրօրները ինծի եր-  
գելու համար քանի որ ձայն շունի, գիշեր  
ինծի գեռ աւելի անտանելի պիտի ըլլայ :  
Անպատճառ պէտք եմ իմանալ այդ անծա-  
նօթին նպատակը , պէտք եմ մերկացընել  
նամակին գաղանիքը : Կը վճռեմ ուղղակի  
սա պարտը բաղբեցուց գիմել , հոն աղա-  
խինէն կը ինդրեմ մում մը , ան շի զլանար,  
գտնէ երիտասարդութեանս սիրուն կը շնորհէ

խնդրածս : Խորճիթին դուր կը բանայ , կը գիմէ որոշեալ տեղը . հոն շի հասած , խիզախ գոռոզութեամբ կը բռնկի միտքը . կանց կ'աննէ , առաջ շերթար : Կը նստի տանձե-նիին թաւ ճիւղերուն տակ . ու դարձեալ ինքն իրեն կը խօսի :

— Մեր կ'երթամ , մուրալու ... ան , եթէ յանկարծ աղախինը երեսս ի վեր պոռայ . ամօթ չունիս , երխաստարդ . ամօթ չունիս մուրալու ելեր ես ... Այո , այս կարելի է պատահիլ . և ինչպէս հնար է որ կարե-նամ ամհնալս զսպել , և ինչպէս ամօթիաժու-թենէս շի պայթիլ , գետին շիյնալ : Ոչ . վը-տանգուոր է գիմումս : Ես սխալեցայ , ծուռ է վճիռս . կը գտնամ տուն , վաղուան խեղ-նութիւնը , այս օր մտածելու պարտք չու-նիմ . մեր պապերը մեզի ըսած են , Աստուած վաղուան սղորմած է . ես կ'երթամ տուն , նաշի համար պատրաստուած խղը կը գոր-ծածեմ նինարիս ըստին . ինչ կարելի է ընել որիչ նար շի կայ :

Վահրամ այդ որոշողութեամբ տուն կը գտնայ . Խորճիթին մէջ , կը լսուէր խանա-նայն աղաղակ մը , որսորդ ընտանիքը դար-նէր էր տուն , և խոտերու խշախին վրայ տա-րածուած , խալով կը քնանար . սապատին տակը բանաուած էր խումբ մը լորամարգինե-

բու, որոնք իրենց մեղմանոյշ մլաւոյ սուլոցք միացընելով երազկոսաներու խալաոցին հետ, բունի կը հրաւիրէին վահրամի երեւակայութիւնը: Բայց սա ջղայոյզ կը մերժէր բուն ու հանգիստ. ճրագ ու նամակ իր խելքը պաշարած էին: Նպատակին հասնելու էր: Չեոքը տարաւ զէպ ի փռան խորշը, սակայն չի գտաւ ոչ նինար, ոչ խղ շիշին մէջ: Խելագար մեղմաձայն հառաչեց.

— Հէ. ողիններն ալ ինձի հետ կատակ կ'ընեն:

Չեոքը օճախին մէջ միեց. տաք մոխիր, և ուրիշ բան չի գտաւ և ոչ կրակի կայծ մը:

— Արեմն ամէն յոյս մարեր է: Բայց ինչպէս. միթէ խղը մաղուան ճաշի համար չէր, ինչ եղաւ այն. գիշեր ատեն ինչ բանի դորձածուեցաւ. բայց եթէ այն չի կայ, ինչ եղաւ նինարը. ան ճաշի կերակուրի հետ ինչ վերարերութիւն ունի: Ալ ծածկապահութիւն պէտք չէ. կը հարցընեմ մամային, կ'արթնցընեմ, կը խնդրեմ կը պաղատեմ որ ի սէր մեր մեռելներուն ինձի ճարէ ճրագ մը. կը համբուրեմ իր ձեռքը, կը պաղատեմ որ զիս առանց ճրագի չի թողու, առանց կարգալու չի թողու, որպէս զի խաւարը չի սպաննէ զիս մտածութեան և երեւակայու-

թեան ճիւղներով: Հէ... մայրը գլծած է.  
 մօրս գութը կը շարժի տեսնելով իմ հիւծած  
 այտերս, տեսնելով արիւնս աւամպս ա-  
 շուրներս:

Կը մրմնջէ աւ կը դիմէ մօր խշախին, բայց  
 երկու եղբայրներուն մարմինը միայն կը շօ-  
 շափէ. մայրը շի կայ: Տագնապը կը բռնկի.  
 կրակը կրակին վրայ կը դիպուի: Խրճիթին  
 տաքութիւնը կը խղզէ խեղճին թոքերը.  
 տագնապած աւ շուարած ան գոնէն գուրս  
 կը վազէ. երկինքէն մխիթարութեան կա-  
 թիւներ շեն Պաթեր. կը տեսնէ ամպերու  
 պատուած շերտեր, որոնք խրոխտ լեռներու  
 բերաններէն գուրս ելլելով, վար կ'իջնեն  
 կուզեն փոսիլ գաշտերուն և արտերուն վրայ:  
 վերէն յոյս շի կայ. իր ներքին հարցերուն  
 ո՛չ աստղերը, ո՛չ լեռները և ո՛չ ամպերը կը  
 պատասխանեն. խաւարը այդ անձուռն շար-  
 բերով կը կրճէ վահարամի ծակձկուած սիրտը.  
 խելագար տան արտերուն շուրջը կը թա-  
 փառի. ջրհորին քով կ'երթայ. անոր ան-  
 գունդին բերնէն վար կը նայի. ջրին յատակը  
 կը ցոլացրնէ աստղերու ծագրոց թրթուամբ.  
 անէձք կը կարգայ բնութեան այդ անսիրտ  
 զեղեցիկ ծագրանկարին. կը հեռանայ, գաշ-  
 տեր կը կարէ, կը փոսի գալարազարդ թում-  
 փի մը վրայ. կրակոտ երեսկայութենէն

ջղերը լարուած՝ կը մտածէ, կը սպասէ գոնէ ձորէ մը, անտասէ մը գլխովեան ձայն մը կու գայ կը հասնի իր շուարեալ գլխին: Քան շի կայ, ան կը տասլարկի. ձայն կը հարցրնէ, ձայն տուող շի կայ, սգիներու հարցութորձի կ'ուզէ գիմել, բայց անոնց գոյութեան արդէն սկիզբիկ, կը մնայ լուս, ոյուսահաս գլուխը գեաին կը զարնէ. մայր ու նամակ ուրուականներու պէս կը քաշկրտակն անոր երեւեկայութիւնը:

✱

Արտերուն վրայէն կը սողումի թեթեւ հով մը, կը մանէ գիւղական գերեզմանին նոճիներուն մէջ և ողբի լալկան մրմունջներու հետ միանալով, կը հասնի տազնապեայ վահրամին. սա կէս զուարթ, իրանը վեր բարձրացրնելով, մուկնոտ հետաքրքրութեամբ ուշ կը գնէ ողբանուագ ձայնին:

— Հով . . . համբոյր բու խորհրդական թեւերուդ, համբոյր գրեզ փշոզ աստուածներուն անոյշ բերաններուն. ձայն տուր. ուսկից է այս ողբը, օր ախար խորշէն կը հասցրնես ահանջիս:

Եւ ոչադրութեամբ լուս կը մնայ. ձայն կ'ուզէ հովէն. սատասխան կը սպասէ: Հովը, բնոհաս գեփիւոր փախեր անցեր է: Չայն շի կայ, սատասխան շի կայ. վահրամ ան-

Համբեր և բուշարովին ջղագար, ամբողջովին  
խոսվայոյզ. կը դիմէ հովին, կ'աղերսէ.

— Չայն սուր զեփխու:

Կանցնի տասը վայրկեան, իսկ վահրա-  
մին համար ժամեր. կը փշէ զեփխուր, ձայնը  
ուղիղ գերեզմանէն կու գայ. վահրամ լսեց,  
իմացաւ, հասկցաւ. և դիմեց շեշտակի գէտ  
ի հոն: Քսամենելի էր տեսարանը, մամու-  
պատ խաչքարերու, կոտրտած շիրիմներու,  
և գիակնակիր հողաթումբերու քովերէն անց-  
նելով, մօտեցաւ պլլպրլացող ճրագին, որ  
կախուած էր ճերմակ երիզներով ծածկուած  
թուփի ճիւղէն. ճրագը մաղձոտ լոյս մը կը  
սփռէր, և կին մը մաղերով արտասուքը կը  
սրբէր ու կը համբուրէր գերեզմանաթումբը:  
վահրամ, արագ ոտաւմով մը պլլուեցաւ  
լաղկան կնոջ, և արտասուքի մէջ խեղդուած  
ձայնով հարցուց.

— Մայր, ո՞ր տխուր, ո՞ր սղբալի մտա-  
ծութիւնը գրեզ այս ժամուս հոս մղեց, ար-  
տասուելու հօրս գիակին վրայ:

— Վահրամ . . . յիշէ՛, այս գիշեր մեր  
օճախին մարեչուն տարեմուսն է:

— Ախ, այ՛. այս գիշեր հօրս մահուան  
տարեմուսն է . . .

— Խղը զոր սրահած էի վաղուան ճաշին  
համար, կը վառեմ, կը գնեմ հօրդ ստուերին

առջեւ, այս լուսով հայրդ թող փնտռէ երկնքի ճամբան :

Մայրը այս ըսելով, կը փղձկի. խոշոր արցունքներն աչուրներէն կ'իյնան էրկան գերեզմանին վրայ: Վահրամ բռնելով մօր ձեռքէն, կ'աղաչէ.

— Մամա՛, հերիք է լացդ, սունը Գարեգին և Պօղոս մինակ են. յիշէ որ գիշեր է, անտնք զես աղայ են, կը վախնան. հերիք է, դու ել գնա. ողբի կոծի պարաքը իմ վրաս. թող որ ես լամ իմ հօրս մահուան տարեմուտը.

— Շարունակէ լացս Վահրամ. հողիններու մեղքը կը սրբուի մեր արցունքներով: Լաց սրտանց, լաց հառաչելով, որ ամպերէն վեր հասնի ձայնդ:

Պատուիրեց, և զգեստին փեշէն կտոր մը պատռելով, կապեց զայն գերեզմանի թըփին, և խաչքարի մը առջեւ երեք անգամ երկրպագելով հեռացաւ: Վահրամ որքան որ Եւրոպայի մէջ մեծցած, ունէր սկիպաիկ գլուխ մը, սակայն ընտանեկան սուգը իր երեւակայութիւնը յուզեց, հաւատարմարար լացաւ, հառաչներ քաշեց: Վերջ ի վերջոյ հետաքրքրութիւնը չի կարենալով զսպել, հողելոյս լուսով կարգաց նամակը. ստորագրող Արմաւենին կը յայտնէր Վահրամին.



— « Գաղափարներուդ աւետարանը մը-  
տերմութից Հայկանուշ շորս ամսէ ի վեր ինձ  
կը կտրդայ. ես սրբեայրի երեք զուակով,  
թշուառ մայրս, մոռնալով անական աւե-  
րումը, նուիրուած եմ մայր տան բարեւա-  
ւութեան և երջանիկ օրերուն, գաղափար-  
ներուս բազուկներուն մէջ կ'ողջագուրեմ  
սիրաց, ուսկից կը բխի հայրենիքի երակ-  
ները կազգուրելու յեղաշրջող նեկտարը :  
Վազր կէս գիշերին կը սպասեմ քեզ. Հայ-  
կանուշ քեզի առաջնորդ. — Գաղափարնե-  
րուդ սիրահար — Այմաւեհի » :

## Բ .

**Ա**ՐԳԱԼԻԱ հայաշատ գիւղը, ուր կը  
գտնուէր նաեւ Վահրամի պապենական տունը,  
նոյն տարին լեցուած էր Տ. քաղքի հայ ա-  
րխաստերատ բազմութեամբ, կեանքը զուարթ  
էր և շատ ընկերական. պար ու հանդէս  
գրեթէ ամէն կիրակի անպատճառ տեղի  
պիտի ունենար. օտարներ յոյն կամ թուրք  
այդ հանդէսներուն չէին մասնակցեր. ամէն  
ազգ ունէր իրեն առանձին թաղը, ուր խմբուած  
կը կենար առանց խառնուելու ուրիշ ազգաց  
հետ. երեք տարրեր և այլակրօն ազգեր

իրարու ոչ բարեկամ էին և ոչ թշնամի :  
 Հայ բաղաբացի արխատակրատ գաստակարգը  
 բնած էր գիւղի բարձրագիւր կողմը, ուր  
 Հայկանուշի ընտանիքը իր ազնուապետական  
 և ազայական գիրքով մեծ յարգ ու պատիւ  
 ունէր : Անտաններով խորհրդաւոր գեղեցիկ  
 բլրան վրայ կ'իշխէր Հայկանուշի մեծկակ  
 պալատը, ամենուն ուշը իրեն գրաւելով :  
 Այլ միայն հօրը հարստութեամբ, այլ Հայ-  
 կանուշի ընկերական մեծ համբաւովը, այդ  
 պալատը գիւղին հրապոյրը վայելելու իրա-  
 տները ստացած էր :

Շարաթ կիրականամուտի իրիկուրնէ մին-  
 չեւ կէս գիշեր Հայկանուշ գաշնակի վրայ  
 ամէն ազգային երգ կը հնչեցընէր. դրացիք  
 սքանչանալով անոր ունկնդիր կ'ըլլային. ի-  
 բրնց անուրջները, կիրթ օրիորդին մեղամազ  
 ձօտ երգերով կ'օրօրուէին : Գրացուց հա-  
 մար ոչ ձանձրոյթ այլ հաճոյք մըն էր Հայ-  
 կանուշի գիշերային գաշնակահարութիւնը :  
 Մինչեւ կիրակի օրուան արշալոյսը, Հայկա-  
 նուշ կէս արթուն կը տանջուի իր մտածու-  
 թիւններով. ազգային երգերը, անոնց լալ-  
 կան ու կոծոց բերթուածները և յուզող մե-  
 զեցիկները, օրիորդին ջգերուն մէջ հասեցու-  
 ցեր էին մեղամազձիկ գառնութիւն մը. զէմ-  
 բին վրայ մտատանջութեան պայքարը թս-

դած էր աւերակ տեսիլ մը. ան՝ առաւօտեան  
 գուարթ ու սլայծառ արեւը շատ տխու-  
 թեամբ բարեւեց . կիրակի օր, Ս. Յարու-  
 թեան գանդակի ձայնը կը բարձրանար սա-  
 բերն ի վեր, ու բարեպաշտները գէպ ի աա-  
 նար և մտքերը գէպ ի երկինք կը բար-  
 ձրացընէր : Կոչնակի ձայնն ալ տխրագին  
 չնչեց Հայկանուշի ականջին : Ու այն ձայնը  
 ոչ միայն սպաւոր, այլ և շարշարող էր իրեն  
 համար . այն իր սրտին մէջ արթնցուց  
 մանկական օրերուն կոյս կրօնական ներշնչ-  
 շումները . ուզեց կրակ տալ հոգեկան բա-  
 բեպաշտիկ այն կրակին, զոր մարած էր Եւրո-  
 պայի գրականութեան և լուսաւորութեան  
 փոթորիկը . բայց ո՞վ գիտէր իր այն տան-  
 շուող վիճակը, սրտակից մտերիմները, ա-  
 զախիններէն մին և ուրիշ ո՞չ ոք, ոչ ծնողքը  
 և ոչ ազգականները : Անտանելի էր իր հո-  
 գեկան վիճակը, միակ սփոփանքը կրնար  
 գանել իր ծանօթ բնկերութեան մէջ, ուր մի  
 միայն ազգութեան վրայ կը խօսուէր, հոն  
 կրօնական, բնտանեկան ու սիրաբանական  
 զրոյցներ բնաւ չունէին :

\*

Հայկանուշ գրեթէ առանց մէկ ժամ քնա-  
 նալու լուսցուց գիշերը, բացաւ սննեակին  
 դուր, ուր կը սպասէր ազախինը . հրամայեց

որ գրքերը տանի պարտէզ, աւազանին առջեւ պատրաստէ գրասեղան մը, գրակաշ մը և բազկաթոս մը. պատուիրեց որ հոն սպասէ մինչեւ իր գալուստը : Անոր ձեռքը տուաւ Ալիշանի « Տխրունին » և Ռաֆֆիի « Խենթը » : Գուրը գոցեց. բացաւ պատուհանին վարագոյրները, տարածուեցաւ բազկաթոսին վրայ իր առջեւը պարզուած էին բնութեան նկարագիւղ պատկերները. հրապուրիչ էր կիրակի առաւօտը. դաշտերու, բլուրներու կանաչութիւնը կը շողար խումբ խումբ ամբոխին գոյնզգոյն տարազներով. ամբոխ մը առդիէն անդիէն կը խմբուէր Ս. Յարութիւն մաստան բլուրը : Երգ, սերախութեան ձայնք կը տարածուէին զխղին մէջ : Չորս ամիսը անդամ հազիւ պատարագ մը կրնային տեսնել հոն. սերախութիւննին անպատում էր. հայր իր եկեղեցիով կը միտիթարուէր, և այլ միտիթարութիւնն ալ եկեղեցականներու հազուադիւտութեամբ շատ սուղ բան մըն էր դարձած :

Հայկանուշի համար ամբոխին կրօնակած սերախութիւնը իրեն հոգեկան տաղնապան բուն վրայ կրակ կը նետէ : Համբերել տանջուիլ, այլ էր ճակատադրականը : կրելու էր, և կրելու արդէն պատրաստ սիրտ մը սնէր :

Քասարդ մը անցած, Հայկանուշի աղա-

խինք բախեց օրիորդին դուստր. հրաման ա-  
սու և ներս մտաւ գրքերը միասին. ինքը  
չի խօսած Հայկանուշ զարմանքով հարցուց.

— Ինչո՞ւ գրքերը ետ կը բերես:

— Օրիորդ, ադա հայրդ պատասխրեց:

— Ինչ պատասխրեց:

— Այսօր կարդալու օր չէ, այլ ադօ-

թերու:

— Դու ինչ պատասխանեցիր:

— Պատասխանել, ախ հոգիս, դու չե՞ս  
գիտեր որ մենք սարուկ աղախիններ, մունջ  
հնազանդներ պէտք ենք բլլալ մեր աղանե-  
րան կամբքին, կարելի է պատասխանել, չե՞ս  
գիտեր որ որչափ սուղ է այդ պատասխանը:


— Իրե՞մն . . .

— Պարզ է հոգիս, առի գրքերը ետ դար-  
ձայ:

— Իրիշ պատուէր չունի՞ս:

— Էս քեզի չեմ կրնար պատասխրել,  
այլ հօրդ պատուէրները կրնամ հագորակել,  
եթէ ազատութիւն կու տաս:

— Արուս, սիրելի աղախին, դու գիտ  
չհասկցար որ իմ առջեւ չեմ ուզեր որ գիտ  
խնամոց բոյրերս սարկային երկշտաութիւն  
մը ունենան, դու իմին ամենէն մտերիմ բոյր  
խնամակալս, մինչեւ հիմա չբարանեցիր  
իմին սկզբունքներս. ինչո՞ւ գարծկալ այդ



ստրկային բանաձևը գործածելով կը խօսիս  
Հեսս :

— Հոգիդ համբարեմ Տիրուհիս, թէ Աս-  
տուածամայրը շըլլար, ես գրեց կը պաշակի  
իրբե գիցանոյշ : Քանի որ ինձի ազատու-  
թիւն կու տաս, մտիկ ըրէ, ահա թէ ինչ  
պատուիրեց հայրդ : Գնա ըսա, հաղցար  
օրիորդը, զարդարէ հանդիսական թանկագին  
զգեսաներով, սակի ու մարդարիտ զարդերը  
թող զնէ և շուտով թող դայ նախաճաշը ընէ  
որ միասին Ս. Յարութիւն երթանք, կառքը  
պատրաստ է թող շուտ ընէ, ժամասացու-  
թիւնը շուտրտած պէտք ենք ժամ ըլլալ :

— Լաւ, կը հնազանդիմ, բայց զարդա-  
րութիւ մարդարտով, սակի զարդերով . . . չէ,  
բնաւ, կ'երթամ եկեղեցի իմ պարզ զգես-  
տովս : Բեր սա սեւ զգեստս, սեւ գլխարկս  
և սեւ շլարշա :

— Օրիորդ, այս օր ննջեցեալի օր չէ :

— Քոյրս, Ալուս, դու ինձի մտիկ ըրէ :

— Պարտական եմ քեզի հնազանդելու,  
սակայն . . .

— Հնազանդութիւնը մեկնելու կարօտ չէ,  
իրբե քոյր ինամակալ, սիրէ կատարել կամքս :

— Բայց օրիորդ . . .

— Մի ուշանար, զիս կամքէս չես կրնար  
չեղել, վճուիր եմ չի զարդարութիւ :

— Ինչ . . . կուսաստան մանելու միտք  
անխ :

— Արուս, դու կ'երեւի այսօր շատ զուարթ  
ես, ուրախութիւնը կը ծիծաղի սրտիդ մէջ .  
այրէ, միշտ ուրախ այրէ. երանի՛ք քեզ  
որ խորհելու խորաթափանց զիտակցութենէն  
զուրկ ես. կ'այրբիս ինչպէս մայրդ և նա-  
հայեաական նախնիքդ . . . Պարզութիւն,  
նախնական միտք. սէ, ան ալ երանական  
է, ան ալ զգուելի կեանք մըն է, բայց ինչո՞ւ  
խորհողներու համար այն արհամարհական,  
անասնելի բան մը դարձաւ . . .

— Ինծի՛ կը հարցընես, օրիորդ :

— Ձէ՛. ես իմ խորհուրդներուս, խոր-  
հուրդներու շատ անգամ կը մարմնանան  
մտքիս մէջ, որոնք կը շուարեցընեն ու կը  
սարսափեցընեն զիս : Հիմա ժամանակ չի  
կայ, շուտ բեր զգեսաներս :

— Հոգիս, թէ զիս կը սիրես, թէ կը  
սիրես քու սգաշաւելի գաղափարներդ, մտիկ  
բրէ. կոյս հասակդ սեւ զգեսաներով մեռե-  
լական աւազանին մէջ մի թաթիսեր :

— Արուս, բաւական է ճարտասանու-  
թիւնդ. ահա կարուկ մեկնութիւն մը : Մինչեւ  
որ Մայր հարսը իր դէմքէն վար շաննէ սեւ  
ու արցունքաւ շղարշը, ես վրայէս չեմ հա-  
ներ սուղի զգեսաւր : Արեւմն հնազանդէ :

— Սիրով կը հնազանդիմ. ու ես ալ բեզի կը հետեւիմ. ան, ինչ պաշտելի ներշնչումն եր ունիս, ապրիս շատ ապրիս հոգիս Հայկանուշ, ես երջանիկ եմ, երջանիկ որ բեզի կը ծառայեմ. ան, ինչ մտքեր կ'արժնայրնես սրտիս մէջ:

Բոսա ու բացաւ Հայկանուշի դարանը. հանեց սեւ զգեստները. հազցուց իր օրհորդը. զեղջուկ կոյսի մը պէս վայրկենաբար կատարուեցաւ Հայկանուշի արդուզարդը: Հեռացաւ Արուս, իսկ օրհորդը բաշեց գրասեղանին ծածուկ մէկ դարանը. դուրս հանեց փոքրիկ ձեռագիրը զիրք մը, անցաւ պատահանին առջեւ ու զիտեց վահրամին խոճիթը. գոց էր անոր դուռը, սա նշան էր որ ասն մէջ չկայ մարդ. ամէնն ալ եկեղեցի գացեր են: Ան ուշադրութեամբ զիտեց վահրամին հեռքը. ժողովուրդը կանխեր զիգուեր էր մատուան բլրան վրայ. մէկ բանի հոգիներ ուշ մնացեր էին. Հայկանուշ զիտէր որ այդ յետամնացներուն մէջ կրնար գտնուիլ նաև վահրամ, որ իր մարդատեաց բնասորութեամբ չէր ուղեր ամբոխին մէջ աւելորդ խօսակցութեան բոնուիլ, որով ժամերգութիւնը սկսելուն ուղղակի ժամ կը հասնէր, և կրօնական պարտք մը կատարելու համար, եկեղեցւոյ ի նպատակ մտի ափսէն ինքն կը



պատգընէր : Հայկանուշ ուշագիր և հետա-  
բերբերական զննութեամբ գիտեց զաշտերը ,  
գիտեց մացառուդիները , աշուրներով շափեց  
ամբողջ մատան ճամբաները : Վերջապէս  
գտաւ իր զաղափարական սրտակից վահրա-  
մը , որ գեղջկական սարգ զգեստով , գրչ-  
խիկոր կը գիմէր գէպ ի մատուռ . բաւական  
մտ էր ուխտատեղիին , և կը հանգչէր գե-  
րեզմանի դռան առջեւ :

Հայկանուշ սրախ շուարումով քաշուեցաւ  
պատուհանէն ներս , նստաւ գրասեղանին  
առջեւ , ու թաղուած իր խորհուրդներուն մէջ ,  
սկսաւ ինքն իրեն խօսիլ :

— Չարմանքի պատկերները շուարումի  
բառսին մէջ գիտ կ'ուզեն ահաբեկել . ինծի  
համար զարհուրանք մըն է ամէն իր՝ որ մութ  
կը մնայ մտքիս լոյսին : Եւ մութ ահռելիու-  
թիւն մըն է սա վահրամի կրօնականութիւնը :  
Ախ , ինչո՞ւ ուշացայ , ինչո՞ւ մինչեւ ցարգ չի  
զարկի անոր կրօնական դուռը , ու չի զննեցի  
թէ սրբան անկեղծ էին և սրբան միամիտ իր  
կրօնական սկզբունքները : Ես շուարած եմ ,  
և կրնամ բսել համոզուած չեմ որ վա-  
հրամ սա մեր անուս գեղջուկներու սար-  
գութեամբ հաւատքի խորան մը կանգնած  
Ըլլայ իր գլխուն մէջ . գլուխ մը ուր նխթա-  
զաշտութեան քարոզները անաարակոյս փլու-

ցած են ամէն երկիւղած բարեպաշտութիւն,  
 գլուխ մը, ուր՝ ուսանողութեան օրերուն՝ բժշ-  
 կական բեմը հոսեցուց Հեքելի, և թրանդ-  
 ֆօրմիզմի ոմբակոծող գաղափարները. որոնց  
 առջեւ կարելի էր որ զիմադրէր մանկական  
 կրօնքը, այն իր կրօնական գիւրարեկ գի-  
 տակցութիւնը: Ոչ, ես չեմ համոզուիր: Ս-  
 այս մասին մինչեւ որ իրեն հետ երկարօրէն  
 շի խօսիմ, որոշ գաղափար մը շատնեմ, բա-  
 ւական անտանելի պիտի ըլլայ մեր ընկե-  
 րական, հասարակական գործունէութեան  
 սերտ մտերմութիւնը: Սակայն . . .

Խօսքը առաջ շի տարած, կը զարնուի  
 դուր. Արուս ներս կը մանկ և կ'ըսէ.

— Օրիորդ, մոռցար նախաճաշի գալու.  
 հայրդ քեզ կը սպասէ:

— Թող շի սպասէ. ախորժ չունիմ. գնա.  
 երբ կառքը մեկնելու վրայ ըլլայ, այն ա-  
 տեն ինձ իմաց տուր:

Արուսի երթալէն վերջը, Հայկանուշ կը  
 բանայ իր ձեռագիր գիրքը: Ան, իր մտքին  
 գղուելի գոհարին ամէն էջը համբուրելով կը  
 կարգայ, հոն մարգարտաշար նաղելի գեղա-  
 գրութեամբ գրոշմած էր կրօնական, հոգե-  
 կան, սկեպտիկ, նիւթապաշտ, արձակ ու  
 ոտանաւոր ներշնչումներ. այդ գիրքը իր  
 մտքին գանձանակն էր, ջղայոյց օրերուն ու

վայրկեաններուն մէջ գրուած . բացի իրմէ , բացի իր աշուրներէն ուրիշ մէկը կարողացած չէր իր խոսվայոյզ ոգւոյն այն խտացած բերթուածները : Անոյշ , բայց տազնատալից յուզումով , սկսաւ կարգալ . Քրէնկ մայրապետներու քով դաստիարակուելու օրերուն մէջ գրած մէկ աղօթքը . շուարած բերնէն թութակօրէն կը բղխէին բերթոզական աղօթքներու բառերն . կ'աղօթէր լեզուով , հոգին խոսվքի մէջ կը տանջուէր , կ'աղօթէր ոչ մանկական ջինջ հաւատքով , այլ բանիմաց խելահաս սկեպտականութեամբ , կ'աղօթէր մեքենաբար .

— « Որքան քնքուշ մայրեր՝ ծնան անուշ սիրուն մանկիկ գառնուկներ . բայց Տիրամայր , քո աննման Քառն երկնային , իր կաթոգին սիրով սիրտս գրկեց և սէրս խլեց . յափշտակուած երգեցի երգ հրեշտակային , ձօնեցի իրեն սրտիս ամէն իղձեր անուշ , կամքս իրեն զոհեցի , արցունքս առջեւ թափեցի : Հոգւոյս կանթեղ հոգիներու հրեշտակներու Քառին առջեւ կը վառի . ախ մայր իմ , մայր գերբնական , հայցէ Քառէն որ վառ մնայ այն լապտեր . կենաց խաւարին այն լոյս թող տայ , որ չի գլորիմ գժոխքին անդունդ , չերթամ մոլար մեղաց ճամբէն . խելագար շատեմ հոգւոյս ինծի տուած անմեռ խրախոյս :

Ախ Տիրամայր , դու մեր հոգին հալանի ,  
 դու մեր երկրին , դու մեր ազգին պաշտելի  
 Հարս , գրկից մէջը գրկէ ամուր սրախ հրեշ-  
 տակ անմեղութիւն , աչքդ մեղուշ՝ մի վեր-  
 ցըններ մեր տան վրայէն , ու ամպերէն կաթիլ  
 սրբուցիմ գութը մեր մարտիրոս Երկրին վրայ  
 խնդրէ կաթողին , սր մեր երկրի ամէն մա-  
 րած կրօնքի լապտեր , դարձեալ վառին , շա-  
 պականին պիղծ պաշտումով : Պաշտելի մայր ,  
 դմեց վառէ ու վառ պահէ , արեւուն հետ ,  
 աստղերուն հետ , լուսնակի հետ մեր հոգ-  
 ւոյն լոյս իրրեւ ճրագ սրբազան բոց թող  
 վառի միշտ արարչական խորանին վրայ : Մեզ  
 տայ Աստուած վարձատրութիւն , հոս կեանք  
 ազգային , հոն կեանք երանական » :

Աղօթքի արտասանութիւնը վերջացընե-  
 լուն , զարմանալով ինքն իրեն սկսաւ խօսիլ .

— Ո՛հ , մանկութեանս մէջ որքան ան-  
 կեղծ սիրտ մը բարախեր է . պիտի գտնան  
 այդ աստուածային անարատ յուզումները ,  
 գիտութիւն . . . անողո՞ք գիտութիւն , դու  
 սրաէս խլեցիր ջնջեցիր հոգւոյս գերբնական  
 գիտակցութիւնը : Աւերակ մը թողուցիր , ու-  
 րուն վրայ կ'արտասուէ գաղափարներու  
 շուարումը , գիտութիւն . դու ինչ գրական  
 ճշմարտութիւն մը տուիր մտքիս . կրցա՞ր  
 հարցումներուս պատասխան տալ . կրցա՞ր

կանգնել ճշմարտութեան խորան մը, որ անկեղծօրէն առանց վարանումի հանէի գաղափարներու սրբութիւնը և պաշտէի գիտութեան աստուածը : Գիտութիւն, դու պիտի տարածես շուարումի ազանդը, քու առաքելներդ պիտի ըլլան համալսարանական բեմերը, և սկեպտիկ մամուլը, քու տաճարներդ ամէն տեղ կանգուն կը մնան, ամէն խորհոյ ու մտքին հետ կոտորոյ վիճարանոյ գլուխներու մէջ պիտի հնչեն տարակոյսի օրհնութիւններդ . . .

Ձի կրցաւ շարունակել իր յուզուած մեծախօսութեան պոսթիկումը, արիւնը խցեց իր սկար շունչը, աշտերը աժգոյն փոսկրային սպիտակ փայլ մը առնելով, գլուխը իր գրքին զարկաւ, խոշոր արցունքներ սկսան սողոյել գրասեղանիկը :

Ողբերգու գրութեան վերջ տուաւ Աբուս. սենեակէն ներս շմտած, խմացուց որ կառքը պատրաստ է. ծնողքը կը սպասէ : Բայց ներս մտնելուն, տեսնելով օրիորդին թալկացեալ ախար ու լալկան վիճակը, յուզուած զնաց գրկեց իր տիրուհին ու ըսաւ.

— Զախջախուի սա մելամաղձօտ ճիւղաներուն ուժը. ա՛խ, Հայկանուշ, կ'երևի թէ զարձեալ միաքոյ կապկպուեր է տխրութիւն զարանոյ սղինքի մէջ : Կ'երևի

թէ դարձեալ մի և նոյն սա խաւարի նիւ-  
ւազները զբեզ կը շարշարեն :

— Չես սխալած Աբուս, մելամաղձաւու-  
թիւնը իր ամէն թափով կ'աշխատի մոխիր  
դարձնել զուարթութեան ոգին, ես կը տան-  
ջուիմ, անբնութիւնը կը զօրացընէ տխու-  
թեան ոգին, որուն ճանկերուն մէջն եմ, և  
ազատիլը անհնարին է :

— Քաջալերուէ օրիւրդ . հիմայ գտիր  
ինքզինքդ . ժամանակ չի կայ որ զբեզ սփ-  
փեմ . բաջալերուէ . սրբէ արցունքներդ . արի  
երթանք :

Հայկանուշ հեանցաւ Աբուսի խրատին :



Գիւղի հայ թաղերուն մէջ ձայն, շշու՛ղ  
չկար, չկար մարդու մը, աղու մը հեռք,  
Ամէն կողմ լռութիւն. և այդ խորհրդակած  
երկխոյզած ամեհութեան մէջ կը լսուէր Հայ-  
կանուշի կառածից ձիերուն դափր ու թնդին :  
Կոչնակի ձայնն ալ կարկեր էր, տաճարա-  
կին ըլուրէն մերթ ընդ մերթ հողմին բնաց  
համեմատ կը տարածուէր ժամերգութեան  
նուագոյ ներդաշնակութիւնը, կը լսուէին բա-  
րեպաշաներու կուրծքէն ձայն տուող աղօթք-  
ներու, հառաչներու սրբենի մրմունջները :  
Հայկանուշ այդ տեսարանի մագնիսակած  
ապաւորութեան տակ ընկճած էր . լեզուն

բարացած, անմտունչ արձանի մը պէս նստած  
 էր հօրը առջեւ: Բլրան ստորոտը հասնել-  
 ան, լսուեցաւ Փառքի բարձունսի ծննդանե-  
 լա շոտաչը. Հայկանուշի սրտին մէջ շա-  
 աչեց մանկական հոգեհնչակ ձայնին յի-  
 շատակը. ճակատին տարաւ թաշկինակը, գոցեց  
 երեսը, վախցաւ որ մասնուի իր ներքին  
 հոգեկան կրակոտ պատերազմը: Բարեբախ-  
 տարար շուտով կտորէն վար իջան, ստօք  
 ըլլուն ի վեր սկսան բարձրանալ. ինքը ա-  
 ստի անցաւ. սուսնողական օրերուն խիզախ  
 սկեպտիկ ներշնչութեան յիշողութեան ներ-  
 կայացրնելով, ջանաց հոգեկան կշտամբանք-  
 ները խորազանել, հալածել: Աւայլ կեր-  
 քով քաջալերուած, անտարբեր պատկեր մը  
 սուս աշտերուն, աչքերուն, և այնպէս ներ-  
 կայացաւ կրօնասէր ամբոխին: Մտաւ եկե-  
 ղեցի, իրեն և իր ծնողաց համար յատուկ  
 ու պատուաւոր տեղ մը պահուած էր ան-  
 միջապէս աւագ խորանին առջեւ: Խօսնող,  
 մարդատեաց Հայկանուշին համար, այլ ա-  
 ւանձնաշնորհն ալ տազնապալից էր: Ա-  
 ւանձնաշնորհը իրեն գաղափարները կը խո-  
 ցատէր, իրեն համար շկար խտիր աղքատի,  
 հարուստի, ծառայի և տիրոջ. հաւասարու-  
 թիւն, բնկերական բնտանեկան համերաշ-  
 խութիւն, աստուք էին իրեն խնկելի գաղա-

փարները, հիմա ստիպուած էր հակառակ իր  
 կամքին գործել, տազնապը կրկնակի էր,  
 վասն զի հոն առանձնաշնորհաւ անգը ա-  
 մենուն կրնար ուշադրաւ ըլլալ և ինքք ամե-  
 նուն աչքին տակ, կը մտածէր թէ ինչպէս  
 պիտի կարենայ զօպել կրօնական յուզում-  
 ները, կանխաւ կը զուշակէր, որ նոյն օրը  
 նոյն եկեղեցական արարողութեանց ասին  
 ինքք պիտի պոսթկար ներքին հոգեկան խոտզ-  
 քի պայթումը: Ան ինքզինքը, իր տազնապ-  
 ները նուաճելու համար՝ շուտով բացաւ պաշ-  
 տելի ձեռագիր գրքոյկը, և սկսաւ կարգալ  
 ուսանողութեան օրերուն գրած սկեպտիկ և  
 նիւթապաշա քերթումները, փրկութիւնը  
 անոնց ներշնչումէն կը սպասէր, սակայն այդ  
 բանի փրկիչներն ալ նոյն ասին զինքը աւե-  
 լի կը տանջեն: Պատարապը առաջ կ'երթայ,  
 երգերու խորհրդական ներդաշնակութիւնը կը  
 փափկացընէ Հայկանուշի սրտին հոգեկան  
 լարերը, յանկարծական քսամենելի սարսու-  
 մը ամբողջ մարմնով կը ցնցէ անոր նիհար  
 մարմինը: Սարկաւազը բարձրաձայն երկաթէ  
 հաւաարով կը հնչեցընէ հաւատամբը, ժողո-  
 փուրդը իր կոյս բարեպաշտութեամբ և հո-  
 գեմուլ հրափառութեամբ ի նշան իրեն կրօ-  
 նական անկեղծութեան՝ գեանամած երկրպա-  
 զութիւններ կ'ընէ և սարկաւազին հետ կը



կրկնէ հաւատամբք: Հայկանուշ կը զգայ որ  
 հան անկեղծութիւնը երջանկութեան գուռը կը  
 բանայ. ժողովուրդը թէև գեղջուկ, թէև  
 ազբաս, սակայն կրօնական երջանկութեան  
 մէջ կը մեռցընէ նակատագրական ամէն գտո-  
 նութիւն. բայց Հայկանուշ զուրկ է այդ երջան-  
 կութենէն. և կարելի է վերստանալ, վերա-  
 դառնալ իր մանկական հոգեվառ ջերմեան-  
 զական օրերուն. աշուրները գրքին վրայ սեւե-  
 սելով այդ մտածութեանց մէջ կը թաղուի:

II. Գարութիւն մատուր նորոգութեան  
 կարօտ էր. գիւղական խորհուրդը որոշած էր  
 որ մտք պատեցընելով այդ նորոգութեան ի  
 նպատակ գրամ հանգանակուի: Վահրամ այդ  
 պաշտօնը իր վրայ առած ըլլալով սրբագոր-  
 ծումէն առաջ սկսաւ իր պաշտօնը, նախ  
 արխասկրասներուն պէտք էր ներկայացընել  
 իր մտերու ափսէն, ընդհակառակն, ան  
 քնաց սկսաւ ամենէն խեղճ գասակարգէն.  
 ազայական մուշոցներու անուշազիր՝ շարու-  
 նակեց իր գործը. Հայկանուշի ընտանիքին  
 հասնելուն, աճպարարի մտպականութեամբ  
 նամակ մը յանձնեց իր Հայկանուշին, որ  
 մեքենական արագութեամբ ծածկեց իր պա-  
 յուսակին մէջ: Երկու գաղափարական մտե-  
 բիւնները աչքով խօսեցան, միխթարուեցան:  
 Եւ Վահրամ հետացաւ մտաւ աւանդատուն:

Հայկանուշի միտթարութիւնը երկար չի տեսց, սրբասացութեանց հոգեցունց եղա- նակները կամաց կամաց կը ներգործեն իր շուարեալ երեւակայութեան վրայ : Բամբա- նոց արտփում մը կ'որոտայ անոր կարծքին մէջ, հոգեյոյզ փոթորիկ մը կը պատարաս- տուի, իր շանթահարումը մտաաշուտ և ան- խուսափելի կը նկատէ : Խնչպէս ասկալ : Պատարագը սրբագործելու կը մտաննայ : Եւ սարկաւազը կը հնչէ գեղակարկաջ՝ ելեւէջ- ներով :

— « Մի սք յերեխայից, մի սք ի թե- րահաւասից, և մի սք յասպաշխարոզաց և յանմաքրից մերձեցի յաստուածային խոր- հուրցն » :

Կը սոսկայ Հայկանուշ : Ներսը անձանօթ ձայն մը կը խօսի իրեն հետ, զինքը կը կշտամբէ, կրօնական անասրբերութեան տեղ զարհուրանքի սարսուռ մը կը ատրէ սրտին մէջ, սարկաւազի այն ամէն պատուէրները հրեղէն ումբերու պէս կը պայթին սրտին մէջ : կը սարսի, կը յուզուի, անկրօնութեան, թերահաւատութեան և մեղքի ծանրութիւնը ու սարսափը կ'ըմբռնէ, կրօնական գիտակ- ցութիւնը կը բոցաւառի ու կը վառէ իր ե- րեւակայութիւնը, օրհասական ճգնաժամի կը հասնի, ծնկուրները տենդոտ գողգղանքով

կը թուլնան, կ'ըմբռնէ որ երկինք կը հա-  
լածէ զինքը. կ'ըմբռնէ որ իր սկեպտիկ հա-  
ճագութեանով սերտընեան անհպելի խոր-  
հարդին ներկայանալը պղծութիւն մըն է .  
ներհակ ձայներ իր շուարած սրտին հետ կը  
խօսին: Հիւժած մարմինը շի տակար հոգե-  
կան այն բունն կուսին, թիթեռնիկի մը պէս  
նագուկ սաուրնեան վրայ թրթռալով կ'իյնայ  
հօրը գիրկը:

Մարած էր Հայկանուշ:

Ընողք ու բարեկամ՝ ահարեկամ՝ գայն ե-  
կեղեցիէն դուրս կը հանեն, կը տանին պա-  
հարան: Գեղին ծանօթ ու յարգուած բժիշկն  
էր վահրամ, որ գէպքը լսելուն պէս, կայ-  
ծակի արագութեամբ կը խոյանայ գէպ ի  
Հայկանուշը: Եւ առաջին պատուէրը կ'ըլլայ.

— Բազմութիւնը դուրս ելլայ, բացէք  
գատուհանները. օդ, օդ, պէտք է, գաւաթ  
մը ջուր: Միայն ծնողքը մնան, միւսները  
գուրս:

Կը հնազանդին, կը կատարուի վահրա-  
մին կամքը. Հայկանուշ ու ծղնօրէն ձեռքին  
ձեջ սեղմեր էր պայուսակը. վահրամին ա-  
ռաջին գործը կ'ըլլայ, գայն իր աչքէն շհե-  
սացրնել, ծնողքը Հայկանուշի ձեռքէն կ'ուզեն  
լայն առնել, սակայն վահրամ կը փութայ  
իր համոզէ որ փոյթ չէ. թողուն որ Հայ-

կանուշ բոնէ զայն, պէտք չէ բոնի ձեռքը  
ցուցընել: Կը միտիթարէ ծնողքը որ բնա-  
վասնոյ շի կայ, այլայլութենէ առաջ եկած  
թաշկացում մըն է այդ դէպքը, ուրիշ ոչ  
ինչ: Յետոյ ձեռքը պաղ ջուրի մէջ թաթ-  
խելով, կը սրսկէ Հայկանուշի երեսին. սթա-  
փումը շուտով կ'ըլլայ. այսերուն սպիտակ  
երակները վարդագոյն արեամբ կը լեցուն,  
խարտեաշ մազերուն սսկեշող փայլին մէջ կը  
ճառագայթեն ծառի աշուրները սրոնք իրենց  
ամէն մեղոյշ հայեացքով կը թարգմանեն  
Հայկանուշի ներքին պարզ պատկերին լե-  
զուն: Եւ այն վայրկեանին նաեւ աշուրները  
կը խօսէին և լեզուն աւելի վահրամ կը  
հասկնար:

Հայկանուշ սթափելուն պէս, խնդրեց որ  
շուտով աուն վերադառնայ. կառքին մէջ  
առին նաեւ վահրամը: Պատարագը կիտա-  
թողուցին և հեռացան:

\*

Բարեպաշտ ժողովրդեան համար շարա-  
գուշակ դէպք մըն էր Հայկանուշի մարելն.  
հասարակութիւնը բիշ շատ տեղեակ էր Հայ-  
կանուշի կրօնական անտարբերութեան. զի-  
տուած էր որ օրիորդը բիշ անգամ եկեղեցի  
կը յաճախէր, ուստի ժողովուրդը գրեթէ բո-  
լորովին համոզուեցաւ որ այդ դէպքը առ-

առաժային պատուհաս մըն է. ամբոխին մէջ  
 սարածուեցաւ այդ անպատուարեր համա-  
 դուժը: Հայկանուշի ծնողքը բնականաբար  
 սկսաւ տաղնապիլ. բայց դարձան շկար-  
 ժողովուրդը իր համոզումը դիւրաւ շի ֆնջեր:  
 Մտողաց բարութիւնը, արիստոկրատութիւնը  
 ու սիրուն համբաւը, դարձան մը շէր կրնար  
 բնել: Նախատական գանձութիւնը պէտք էր  
 խնել, ուրիշ ճար շի կար: Հայրը ուզեց  
 բողոքացընել այդ գանձութիւնը. ուստի եր-  
 կու ժամ վերջը երբ Հայկանուշ հանգստա-  
 ցած, պարտէզի բացօթեայ առազանին պո-  
 չեւ կը խօսէր իր մօր և վահրամին հետ,  
 զնաց, կանչեց ու անոր ականջին փափսաց.

— Հայկանուշ, կը տեսնեմ որ շուտով  
 վերստացար առողջութիւնդ, մանաւանդ ա-  
 լելի առողջ կ'երևիս ու շատ գոհացուցիչ  
 միխթարութիւն մը ցոյց կու տայ դէմքդ. գիտ-  
 ցած ըլլաս որ մեր ժողովուրդը իր ուսին  
 վրայ բեզի պէս զարգացած գլուխ մը շի  
 կրեր. ան այսօրուան բու մարերդ առտուա-  
 ժային պատուհաս կը համարի. և համոզուած  
 է որ զբեզ պատժեր է Աստուած եկեղեցի  
 շխանախելուդ համար. ու ահա խել մը նախա-  
 տական գուշակութեամբ թէ զբեզ և թէ ամ-  
 բողջ տունը կ'արատաւորեն: Ուստի Հայկա-

նուշ բեզի կը թողում ճար մը ընել, փրկել մեր ընտանեկան պատիւը :

— Կասկածներու դարման չի կայ : Կը խնդրեմ չի բանալ կեանքիս այն ահեղի տաամին վարագոյրը :

Հայրը նկատեց որ Հայկանուշ կը յուզուի, և վախնալով, շուտով խօսքը փոխեց և հարցուց .

— Կ'ուզե՞ս որ ստբղ . վաճառամ այսօր մեզի հետ ճաշէ :

— Հայր, այդ բու և իրեն զխանալու բանն է : Եթէ կը փափագիս ես ընդդիմութիւն չունիմ. տեսնենք ինքը կ'ընդունի՞ մեր առաջարկը . հարցուր իրեն :

Վաճառամ կը փափաքէր հոն մնալ, երկարօրէն խօսիլ իր գրականօրէն պաշտելի մտերմութիւն հետ, մանաւանդ այն օրը շատ ցանկալի էր Հայկանուշին հետ առանձնաբանալ խօսիլ Արմաւենիի նամակի մասին : Ինչպէս նայն տեսն գետ բան մը չէր խօսած, միայն եկեղեցւոյ մէջ տուած նամակով իմացուցեր էր զիշերուան գէպքը և խնդրած թէ ինչպէս և ուր կարելի էր զիրար գտնել և Արմաւենիի տունը հաւաքուելով խօսիլ ինչ որ կը կամենար նոր գաղափարական բարեկամութիւն : Հայկանուշ իր հայրը ազատ կը թողու որ երթայ իմանայ Վաճառամի միտ-

օրն նաշեցու կամբքը . իսկ ինքը բաշուելով  
 սննեակը , հետաքրքրութեամբ կը բանայ  
 վահրամին նամակը . շատ միտթարուած ու-  
 բախութեամբ կը կարգայ Ալմաւենիի առ  
 վահրամ գրած նամակը : Շուտով կը նստի  
 կը գրէ և կ'որոշէ թէ վահրամ նոյն զիշերը  
 որ ժամուն և ուր կրնայ գտնել զինքը : կը  
 մտաբերէ որ հաւանական է , թէ վահրամ  
 կտակածներու բնաւ տեղիք չի աալու համար ,  
 կրնայ մերժել հօր հրաւերը և առանց զիրար  
 առանձին տեսնելու կրնան բաժնուիլ , ուստի  
 ալ պարագային նամակը ամենակարեւոր  
 էր :

Այլ վահրամ Հայկանուշի գուշակութեան  
 համաձայն մերժեց հօր հրաւերը : Աչուրները  
 պարտէզին շորս կողմը գարձնելով , կը խօ-  
 սէր Հայկանուշի ծնողաց հետ , սակայն խելքը  
 միշտ իր նամակին պատասխանին վրայ էր ,  
 կը մտածէր երեկոյեան ակումբին վրայ . կը  
 մտածէր թէ ինչպէս առանց մասնուելու  
 հասարակաց կրթական բարեշրջումի ինպատա-  
 պիտի կարենան միտթարական բաժն մըն ալ  
 տնել : Հետաքրքրութիւնը ծիծաղեցաւ երբ  
 իր աչքին զարկաւ Հայկանուշի պատուհանը ,  
 ոսկից օրիորդը ցոյց կու տար նամակ մը .  
 մտական վարպետութեամբ մը անոնք աչքով  
 գարձեալ խօսեցան : վահրամ սկսաւ մեկ-

նելու պատրաստուիլ. Հայկանուշ թառ հա-  
սառ և ծնողացը հետ վահրամբ ճամբայ գնե-  
լու առնն՝ անոր գրգանբ սահեցուց իր նա-  
մակբ:

Գ.

**Է**ԼԻՍՈՐՈՒԱԿՆ մօտ ժողովուրդը եկեղե-  
ցիէն ելած՝ կրօնական կուշտ մխիթարու-  
թեամբ առն գարձած էր: Կիրակի օրերը  
գիւղսր բաղաբացիներու համար հանգիստ-  
կան սիրուն հրատոյբ մը ունին. բնասանեաց  
գլուխը նոյն օրը միայն կը վայելէ իր շա-  
բաթական արիւն բրաթնը աշխատութեան  
վաղանցուկ հաճոյբը. միայն կիրակի օր գիւղ  
ելլալով կ'ուրախանայ իր օճախին հարա-  
գասներուն և մերձաւոր բարեկամներուն հետ:  
Գիւղսրներու համար ամէն ամառնային կի-  
րակի՝ սսկի կիրակի է: Բլուրներու, գաշաե-  
րու և ծառաղարդ գեղեցկութեանց ստուերին  
մէջ ամէն բնասանիք՝ խումբ խումբ կը հա-  
ւաքուին. ու մեծ հաճոյբով կրակին վրայ  
կը գարձենն կիրակնօրեայ ճաշին գասան  
խորովածբ:

Արդալիտ գիւղն ալ նոյն հրճուանքի մէջ  
էր: Անմեղ հիացումներու ուրախ գուարթ աղ-



Տակները պայծաս արեւուն կեանք ու խրախ-  
 ւանք կու տային . քաղաքացի աղքատ ու  
 չարուստ՝ այդ ուրախութիւնը կը վայելէին .  
 միայն գեղջուկը՝ անկէ զրկուած կը մնար .  
 վաճրատեալ ալ զրկուածներէն էր . Հայկանուշէն  
 բաժնուելուն , ան գնաց նստաւ գիւղի աղ-  
 թիւրին եղերքը . մարդ չի կար . կարգաց Հայ-  
 կանուշին նամակը և ուրախացաւ : Ընդհանուր  
 գիւղի մէջ ախրապետոյ ուրախութեան ա-  
 ղաղակները զինքը շէին կրնար խանդարել-  
 ան մտաւ խորասուզեցաւ մտածութեանց սվ-  
 կիանին մէջ . սաքին առջեւէն կը սահէր կար-  
 կառա առուակը , կ'անցնէր կամ գետի մը  
 մէջ մեծնելու կամ գաշտեր սողելու հա-  
 մար . իր մտքէն անցած գաղափարները ա-  
 սուակին բաղդակից էին . գիշերուան բանա-  
 խօսութեան վրայ կը մտածէր , մտքէն կը  
 բղկէին շատ խորհուրդներ . կը մտածէր թէ  
 իր ուր խորհուրդը կրնայ արգասաւոր ըլլալ .  
 կրնայ արդիւնք մը տալ հասարակական խո-  
 րան գաշտին :

Միեւնոյն կացութեան մէջ էր և Հայկա-  
 նուշ . սա ճաշելէն վերջը կ'առանձնանայ իրենց  
 բարաստանին աւազանին բով . առաւօտեան  
 յուզումը և գիշերուան կատարուելիք բանակ-  
 ցութիւնը միտքը կ'օրօրէին . ան պաշարուած  
 էր իր խորհուրդներով . առջեւը բացած զըր-

բին էջերը չէին դառնար. տազնապամ զիբը մը ունէր, անհանդիսա ու յուզուած. սակզ պարակզին բլրան վրայ բարձրանալով, կէ դիակը աղբիւրը, որուն առջեւ վահրամ նստած կը մտածէր: Հայկանուշի գութը կը շարժի, կը խզնայ. իր մտերիմ ընկերոջ աջ դիրքը սրտածմլիկ էր. կարծեց որ ան կը տանջուի քաղցէն. և տեսնելով իր շոր կողմը տիրապետող սերախուժիւնը, ընտանեկան հանդիսա կերուխումը, շատ ծանր ու դաժան երեցաւ վահրամի այն տիրուժիւնը. անոր շքաւորութիւնը իրեն ծանօթ էր, գիտէր որ ան գեա պատառ մը շոր հաց բերանը դրած չէր, զայն այդ խզնալի գիրքն մէջ թողնելը անգթութիւն համարեցաւ: Պարակզէն վազեց տուն. գտաւ իր սրտակից գաղանապահ Արուսը, և պատուիրեց անոր որ փութայ առանց մէկու մը կասկած աւելու, երթայ կերակուր տանի վահրամին: Արուս կը հնազանդի: Եւ Հայկանուշ հանգրտացած, պարակզի մէջ իր գրքերուն առջեւ կը նստի. Տիրունին չի կարդար, « Խենթ » ի կ'աննէ ձեռքը, գաղափարի ծրագրի ներշնչումներ կ'ուզէ ծծել. նոյն գիշերը՝ կարեւոր էր լուրջ գաղափարներով ներկայանալ Արմաւենիին: Հայկանուշ սքանչացած Բաֆֆի ծրագիրներուն վրայ, կ'ընկզի հասարա-

կական գործերու բարեշրջումի գաղափարնե-  
րան մէջ: Անդին Արուս հասեր էր վահրա-  
մին և կը պնդէր, կ'ազաչէր որ չի մերժէ  
Հայկանուշի այն համեստ ընթրիքը: Վահ-  
րամ թէեւ անօթի էր, սակայն իր մերժու-  
թեան պատասխանը կ'ըլլայ.

— Ախորժակ չունիմ:

Բայց Արուս յամատելով, կ'ուզէր բռնի  
բնգունել տալ իր կերակուրը: Երկար ատեն  
դիմադրեց և տեսնելով որ վահրամ միշտ  
կը մերժէ, կնոջական հեղնութեամբ ըսաւ.

— Չեմ գարմանար ախորժակ չունենա-  
լուդ վրայ, կ'երեւի թէ բնագատուած ևս  
ապրիլ պաղ ջրով և ...

— Արուս ... Հայկանուշ այս նուէրը ինծի  
բնելուն արդեօք կը գուշակէր որ ինձ ահա-  
նութիւն պատճառելու կոյր գործիք պիտի  
ըլլար:

— Ինչ, ... Խօսքերէս կը ահաճիս:

— Այո:

— Բայց ինչո՞ւ. ինչ ծանր, ինչ կծու,  
ինչ լեղի բառ մը բերնէս թոսաւ, ևս չեմ  
զիտեր և չեմ անդրադառնար:

— Արուս ինչ որ դու քեզի և քու հասա-  
կից օրինաւոր կը նկատես, այն իմ վիճա-  
կիս իմ գաղափարներուս ապօրէն և անի-  
րականալի բան մըն է որուն վրայ ևս չեմ

կրնար մտածել. դու դուցէ այդ տեսակ տին-  
արկներով կ'ուզես գգուել, կամ փորձել  
զիս. սակայն գիտցիր որ ոչ միայն շատ կը  
սխալիս այլ կը խոցես զիս:

— Մի կեղծեր:

— Մի գրպարտեր:

— Գժուար է հաւատալը:

— Թէ սիրտս աչք մը սնննար, պիտի  
տեսնէիր որ տարրեր և շատ տարօրինակ  
պատկեր մը կայ հողույս մէջ. և այն տանն  
պիտի ըմբռնէիր գրպարտութիւնդ, ու պիտի  
հաւատայիր որ գաղափարներս իմին սէրս,  
հրատարարս և սնունդս են: Անոնք գրաւեր են  
իմին հողիս և անձնատրութիւնս. անոնք խլիբ  
են իմ ախորժակս, անոնք աշուրներէս վարն-  
տեր են քունի աստուածը:

— Եթէ այդ գաղափարական սիրով և  
հրատարարով կը սնանիս, ինչո՞ւ ուրեմն զքեզ  
միշտ մտատանջութեան մէջ կը տեսնեմ,  
ինչո՞ւ այսերուդ վրայ ժպիտ մը չի կայ, ինչո՞ւ  
աշուրներդ մաղձոտութիւն կ'արտասուեն:

— Արուս, վրայ չեմ գարմանար, հե-  
տաքրքրութիւնը սեռիդ բանալին է, որով  
կ'ուզէք բանալ խորհուրդներու դռները, և  
կ'ուզէք որ ձեր աչքին ամէն բան յստակ  
ու պարզ երեւի, որպէս զի յափրանաք հե-  
տաքրքրութեամբ: Գիտցիր ու հաւատա՛ որ

չունիմ' ո՛չ մէկուն տհաճելի խորհուրդներ,  
 ո՛չ մէկուն փաստակար գաղափարներ : Եւ  
 սրտիս Հայելին արդէն ծանօթ է Հայկա-  
 նուշին, և ինչ որ կարելի է գուշակել, ան՝ այդ  
 Հայելին քեզ ցոյց տուած է : Բայց թէ ինչո՞ւ  
 տխուր եմ ու մաղձոտ, գիտցիր Արուս. չի  
 բաւեր գաղափարական սիրուն սնունդ. երբ  
 կը տեսնեմ որ գործելու ասպարէզս շատ  
 կնձոտաւ է, երբ կը տեսնեմ վայրագ Հա-  
 կասակութիւններ, երբ կը տեսնեմ այլան-  
 գակ կոստիս նախանձը, կարելի՞ է ինդալ,  
 կարելի՞ է ուրախանալ : Բայց սակայն, ո՛հ  
 բնաւ մի կարծեր որ ես չքեր եմ, խորտա-  
 կուեր, սպառներ եմ յարատեւութեան յա-  
 մաոօրէն գիմաղրելու կտրուլս. ո՛չ, ո՛չ, այդ  
 նկարագրի, արի սգւոյ բան չէ. մինչեւ գե-  
 րեզման կ'ուզեմ գաղափարներուս բանակը  
 պատերազմի գաշտին վրայ սաքի վրայ պա-  
 ճել և գիմաղրել խիզախօրէն :

— Վաճրամ կը սոսկամ. այդ ինչ նկա-  
 րագիր է, և ես ինչ տխմար միամտու-  
 թեամբ գինովցած՝ յանդդնեցայ ու փորձեցի  
 զքեզ : Ո՛հ կը զարհուրիմ պատրանքներուս  
 բրտութենէն. դու ներէ, ներէ որ զքեզ վի-  
 բաւորեցի, և ասուշ գանուելով՝ մոռցայ այն  
 նկարագիրդ որ մեղմօրէն ինծի յայտնած էր  
 տիրուհիս Հայկանուշ : Գիտես մեր սեպին

ակարութիւնը, մեր միտքը գրականէն գերաշուականին կը թռչի և շատ անգամ թեթեւ գաղափարներու պատրանքին մէջ կը կալանաւորուի. ու կը խօսի ինչ որ պէտք չէր խօսեր. արգահատելի է մեր միտքը:

— Հիմա քանի որ հասկցար զիս և հասկցար քու սխալը, կ'աղաչեմ որ զիս ազատ թողուս, հեռանաս ու հաղորդես շորհակալութիւններս Հայկանուշիս: Միայն կը խնդրեմ որ իրեն ըսես որ նամակին համեմատ կը շարժիմ:

✱

Աքրուսի մեկնելէն վերջը Վահրամ հոն շատ չի մնաց. շարժեցաւ զիմեց ատուն: Անթութութիւնը անդիմադրելի է. մինչեւ երեկոյեան մօտ Վահրամին բերանը շոր փշրանք մը չէր մտած: Տան ատաստաղէն կախուած զամբիւղը վար ատաւ, ուր իրրեւ Վահրամի բաժին՝ ծնողքը պատառ մը հաց պահած էր. զարիւհ հաց էր այն, աղմի պէս սեւ և ծանր ու թաց: Վահրամին համար կերակուրը անասնական պահանջ մըն էր, ստիպուած և շատ տժգոհութեամբ կարեւորութիւն կու տար ստամոքսի բողոքին: Ան՝ այդ հացէ տիղմը շաղուեց իր ցամքած բերնին մէջ, ու լսեցուց ստամոքսին աղաղակը: Ինքը սրտին խօսքերուն ու շաղիւր էր: Կուժը բերանը տարաւ,

կուշտ կուշտ խմեց սպաղ ջուրը, զսփացաւ,  
 ու գոցեց խրճիթին դուռը. ու մտածկոտ հե-  
 սացաւ: Աշուրները դարձուց զէպ ի արեւ-  
 մուտք, սղտոր էր հորիզոնը, շորս կողմէն  
 կը բարձրանային փոթորկարեք ամպեր, ու-  
 բոնք մօտալուս տեղատարափ անձրեւ մը և  
 աւերիչ կարկուտ մը կը սպառնային: Կէսօ-  
 րէն երկու ժամ վերջը արեւը թաղուեցաւ  
 սեւ ամպերու զազազին մէջ: Առաւօտեան  
 զուարթ կայտառ ժամերուն յաջորդեց ան-  
 սպասելի տխուր երեկոյ մը: Այլ եւս բլուր-  
 ներու, գաշտերու նուազող զուարթագին  
 վայնասունը լռած է. ամբոխը տուն քաշուած  
 կը սպասէ ամպերու բարկաճայթ խաղերուն:  
 Արեւու խղզուած ճառագայթները կրակոտ  
 ներկերով ամպերուն կու տան հիանալի և  
 աննման թափանցկութիւն մը. բայց հիա-  
 ցումի ժամանակ չի կայ, գիւղացին սար-  
 սափած, չի գիտեր ինչ ընելիքը. քամին  
 անտառներու մէջէն ուժգնօրէն կը մոնչէ. ձո-  
 րերու կողերը կը հնչեցընեն շնչող փոթորկի  
 սահմեկող շառաչը որ տարածուելով գաշ-  
 տերու գալար, նազելի մարզին վրայ, կը  
 վրդովէ հարսնազեղ ծաղկանց խաղաղական  
 պարը: Ահա՛ երկարատեւ փայլակներուն յա-  
 ջորդեց ահեղագոտ ամպերու սրտան ու սայ-  
 թում. հրատապ զայրութ մը բոնկած է ամ-

պերու միջիւ . ու ամենէն խիզախ թոշուն-  
ները գէպ ի խիտ անասաները փախուստ ա-  
լով կը սմբին :

Սմբած շէր Վահրամ, վեր երկինք, վարը  
Հայկանուշի տան կ'ուղղէր իր աչքը :

Կարճատեւ անձրեւին յաջորդեց կաղինի  
մեծութեամբ կարկուտ մը, որ կէս ժամուան  
մէջ տապալեց, ջախջախեց լազուտի և ցո-  
րենի արտերը. յետոյ սկսաւ տեղատարափ  
անձրեւը, որ վերջ շունէր, գիշերը վրայ հա-  
սաւ, անձրեւը դեռ աւելի առատօրէն կ'ու-  
ղղէր գաշտերը : Մտատանջութիւնը Վահրա-  
մին գլխին մէջ կ'ըմբոստանար : Ան ինչ բաղցր  
յուզումով օրուան գիշերնալուն կը սպասէր,  
ու սպասածը հասաւ, հասաւ գիշերը, որոտ-  
ընդոտ գիշերը : Հայկանուշ ըստ խոստումնր  
շէր երեւնար, և կարելի էր : Ժամադրութեան  
տեղը՝ աղբիւրին խոշոր ծառին տակ՝ Վա-  
հրամ քարացած սպասեց. շատ երկար սպա-  
սեց. նոյն գիշերը ինչպէս պիտի վերջանար,  
շէր գիտեր : Իր ախար միայնութիւնը, իր  
տազնասպալից գրութիւնը ուզեց կտարել ինքն  
իրեն խօսելով : Վրդովելու տանն՝ ան սովո-  
րութիւն բրած էր լեզուն իր մտերիմը ընել  
ու անոր հետ խօսիլ : Մտաւ ծառին խոտ-  
ջացած մեծ փորուածքին մէջ, իրեն ունկնդիր-  
ները էին խաւարը, շառաչատր անձրեւը և



անապատական լուսթիւնք . լքուած մե-  
լամաղձոտ և ջղագար սկսաւ մենախօսու-  
թիւնը :

— Չնչին հաճոյքն ալ ինծի կը զլացուի :  
Այս ինչ գծրախա գլուխ . ինչն այս գլուխը  
այն մի և նոյն օրը որ հողէն դուրս ընկաւ ,  
փոխանակ անդուժ ճակատադրով օծուելու  
չի պայթեցաւ , չի ջախջախեցաւ : Ախ .  
հիմա որ հետաքրքիր հաճոյքով պիտի մտեր-  
մանայի գաղափարներուս նոր առաքեալ գը-  
րուող կրակոտ հերոսուհիի մը հետ . պիտի  
հրճուէի տեսնելով ծրագիրներուս վրայէն  
սահող , անցնող միտիթարութեան ոգին , որ  
պիտի ցոյց տար ապագայի շողշողուն հո-  
րիզներ , ահա ճակատագիրը կը գիմաղրէ .  
անյուսութեան ոգին կը կարէ յոյսի թելը .  
ես մար ինկած գաղափարներուս , յոյսերուս  
բարձունքէն , հիմա պէտք եմ հառաչել . ան-  
գագար հառաչել . ու հառաչներս ողբի կը  
փոխուին , երբ կը մտածեմ ամպերու անդուժ  
պայքարը , արդասաւոր գաշտերու սգաւոր  
նուաճումը : Գառնութիւն դու զարհուրանք  
ես . հիմա մտիք գիւղացիներուն խրճիթը ,  
պատան մը հացի կարօտ , պատան մը հացի  
համար հիւժող աղքատներու , մշակ բանոր-  
ներուն մօտեցիր , հրճուէ անոնց ողբով ,  
յափրացուք վայրագութիւնդ . պիտի տեսնես

անոնց բարկութեան լեղի լաց ու կոծը, ու պիտի ծիծաղիս, ծիծաղէ, կուշտ կուշտ ծիծաղէ. կը նահատակուի աղբատութիւնը, կ'ողողէ դառնութիւնդ, ճակատագրի սեւ վերարկուն կը պատէ գեղջուկ աղբատներու կոյս սրտերը, որոնք գժբախտութեան յախտնական վէրքերով, պիտի իջնեն գերեզման: Բանգ, ինչո՞ւ անոնց լոյս աուիր, կեանք, ինչո՞ւ անոնց հոգի փշեցիր: Ի՞նչ է անոնց վայելքը, ի՞նչ է անոնց հաճոյքը, ինչ է անոնց մխիթարութիւնը, ի՞նչ է ներկան և ի՞նչ ապագան: Բայց դուցէ անոնք կոյր ծնան և կուրորէն գերեզման կ'իջնեն. կեանքի լեղիութիւնը դուցէ անոնք այնքան շքմբոնեն որքան խորհող միտքը . . .

Վահրամ տազնապէն խոսվայոյզ ու մուկեղնոտ, յտեանտութեան սահմանը թեւակոխեց, անցաւ հոգեբանութեան հորիզոնէն. կը խօսէր՝ ինչ որ ներքին ազատամբ կրակը իրեն կը ներշնչէր: Կէս ժամ աչքաբաց գիտեց խաւարը, անձրևը, և դարձեալ շարունակեց մենախօսութիւնը:

— Չանցնիր գազան մը որ զիս հմայէր իր հրացայտ աչքով. չի գար գազան մը, որուն հրճուանքը ըլլայի հիւժած մարմնովս, գոհացրնէի գայն նեատելով կլափին մէջ, որ ամէն յոյս կը մարի, ու մարողը անժպիտ բողբոս

է, Եւ աշխարհս ինչո՞ւ միայն երջանիկ բաղգա-  
ւորներու համար շեղու, ինչո՞ւ գծրազգններն  
ալ ծնունդ առին ... երջանիկներու եղեմնա-  
կան հրնուանք մը պատճառեղո՞ւ համար ...  
Միտք, մինակ ենք, իօսէ, գառնացած եմ,  
եթէ կրնաս քաղցրացուր զիս . համոզում  
սկեպտիկ եմ, եթէ կրնաս համոզէ զիս . եր-  
ջանկութիւն փափուկ է քու . հմայքդ՝ եթէ  
կրնաս մազնիտացուր զիս, փոխէ զիս, ցնդե-  
ցուր յոսեանսութիւնս :

Տագնապը խոռոխեցուց խեղճ Վահրամի ե-  
րեակայութիւնը . ան իր բնաւորութեան հա-  
կառակ՝ յանկարծ գայրութ մը ունեցաւ՝ մօրն-  
չեց իր այդ յոսեանս խորհրդածութիւնները,  
որոնք երկարաձիգ տարիներու գառնակսկիծ  
կենցաղովը կուտակուած էին սրտին մէջ .  
իր ամբողջ կեանքը գառնութիւն էր, ու կեան-  
քի լեզի բաժակը խմած էր մանկական օրէն,  
մանկութիւնը, պատանեկութիւնը, ուսանո-  
ղական տարին և հիմա իր գործելու տարին  
անբախտութեան մաղձով թունաւորուած էին :  
Տագնապի այս վայրկեանին իր առջեւ կը  
մարմնանար յուսահատութիւնը . ան գեո շատ  
զանգատներ ունէր, գեո շատ լեզի անէծքներ  
զիտի կարգար նակատագրի զլիտին, պիտի  
բանար անէծքի ամբողջ շահմարանը, բոնկած  
կործքէն պիտի թռչէին յուսահատութեան

հրաշէկ բառեր. բայց ահա ծառի մը հան-  
ւէն գիմացը կը կանգնի սառուեր մը, գայն  
կը պապանձեցընէ, կը գոշէ.

— Վահրամ.

Ամայութեան մէջ ահաւոր կը հնչէ այդ  
ձայնը. լոյս չի կար որ տեսնէր, թէ ո՞վ էր իր  
անունը տուողը: Շուարեցաւ, բայց չի լսեց:

— Այս ինքնին Վահրամը — ըսաւ — ես  
ինքն Վահրամը, թշուառութեան փշրանքը,  
հոս եմ:

Անծանօթը իր սովորական ձայնին շե-  
տով սկսաւ խօսիլ.

— Վահրամ մի շուարիր ես եմ, Հայ-  
կանուշ:

Անպատում էր Վահրամի յանկարծահաս,  
անսպասելի սրախութիւնը և չի հաւատա-  
լով երեւակայութեան, պատասխանեց.

— Հայկանուշ . . . կարելի՞ է որ այս  
օդով անէն դուրս ելլէ, խոյս տայ իր հօր  
գրկէն, իր հօր ժանիքներէն. ո՞չ, երեւակա-  
յութիւնս գիտ կը շուարեցընէ:

— Վահրամ, ինքզինքդ գաիր. ահա ամ-  
բողջ քառորդ մը ես Հայկանուշ ծառին ե-  
տեւէն մտիկ կ'ընէի այն իմաստասիրական  
խորհրդածութիւններդ, որոնք սրախ մաղ-  
ձոտ լարերը ներդաշնակօրէն թրթոցուցին.  
Ո՞չ ինչ զուգադիպութիւն, նոյն գաղափար-

ներք, նոյն միաքը, նոյն յոռեանսութիւնը  
 ճշգրիտ ու հաւատարիմ գծերով քանդա-  
 կուած կը տեսնեմ մեր ուղեգին վրայ: Պաշ-  
 տելի՛ զուգադիպութիւն: Հրճուելով ունկնդիր  
 եղայ այն քու սիրուն անէծքներուդ, որ  
 թշուառութեան անազորունութիւնը ըմբոնող-  
 ներուն համար օրհնութիւններ են, որով կը  
 զովանան անբաղդութեամբ բանկած սրտերը:

— Հիմա կը հաւատամ որ երեւակայու-  
 թիւնը զիս չի խարեր. ճշմարտութեան ձայնը  
 որ կը լսեմ, միայն քեզի սեփական է, քեզի  
 Հայկանուշ, շուարուս փարատէ, ինչպէս,  
 ինչ միջոցով կը քար ազատիլ հօրդ ձեռքէն.  
 ինչպէս սիրտ բրիր, ու այս խաւարակուս  
 սրտաբնդոստ անձրեւոտ գիշերը կը քար հաւա-  
 տարիմ գանուիլ խոստմանդ: Զիս կ'ապշե-  
 ցրնէ հաւատարմութիւնդ:

— Խոստացայ պէտք էի կատարել. թէեւ  
 գիտնայի որ գազանները կընային զիս յօ-  
 շտակ այս մթութեան մէջ, սակայն ես հա-  
 տատարիմ պիտի մնայի իմ խոստմանս: Մեծ  
 զարմանքի նիւթ չէ հաւատարմութիւնս, նկա-  
 բարբի տէր եթէ կ'ուզենք ըլլալ, մեր օրի-  
 նաւոր պարաքն կ'ըլլայ հաւատարիմ մնալ  
 մեր խոստումին. թէեւ հաւատարմութիւնը  
 երբեմն անձնագոհողութեամբ կարելի է միայն  
 ի գործ դնել: Բայց հիմա երկարօրէն ան-

ձնական սպարաքերու վրայ խօսիլն աւելորդ է, հոս մօտ հեղեղատին խորշերէն մէկուն մէջ ծածկեր եմ կանթեղս, յուսամ ոչ սք լսեց մեր խօսքերը: Հիմա հետեւէ ինծի, երթանք Արմաւենիին, կէս գիշերը մօտ է, կարելի է ժամուան մը մէջ դու կատարես տեսութիւնդ որ գուցէ առաջինը ու վերջինը ըլլայ:

— Կը հետեւիմ: Բայց ինչո՞ւ առաջինը ու վերջինը ըլլայ:

— Ինչպէս գիտես Արմաւենիին վաղը առտու կանուխ կ'ուղեւորի գէպ ի արասասհման, ինքը անձամբ ինծի յայտնած է որ այլ եւս չի վերադառնար հայրենիք:

— Բայց Հայկանուշ, գիտ տարակոյսնեքու մէջ կը ձգես, այլ ինչ ազգասէր կ'ին է, որ հայրենիք շուգեր վերադառնալ:

— Վահրամ շատ միամիտ ես:

— Ինչո՞ւ:

— Եւ կը հարցնես, ինչո՞ւ . . . Միթէ արասասհման կենալով, կարելի չ'է ազգասիրաբար խորհիլ ու գործել: Դու այս գիշերքիչ տաննէն պիտի ըմբռնես Արմաւենիի ազգասիրութեան անսահմանութիւնը, պիտի հիանաս անոր լուրջ գաղափարներուն վրայ, պիտի գուշակես թէ իր հետաւոր աջակցութիւնը, սրբան պիտի գիւրացընէ մեր Թարեշուցի գործը:

Վահրամ իր այդ հարցումով Հայկանուշի վրայ այն սպաւորութիւնը թողուց, որ ան՝ լաւ ուշաբերուած չէր, ու չէր անցած անոր յանկարծական տազնասպներու խոտվըը, որով խեղճը կը խօսէր իր հանդարտ ու սղջ մօքին ներհակ լեզուով մը: Անոնք հասան հեղեղատի խոտոչին, Հայկանուշ առաւ կանթիւր, անոր մեղմ լուսով քայլերնին ուղղեցին գէպ ի Արմաւենիին տունը: Ճանապարհին Վահրամ վարպետութեամբ փոխեց խօսքը, տեսաւ Հայկանուշը Արուսի զգեստով, բացազանչեց.

— Հօրդ աչաւրներուն գեղեցիկ գաւազրութիւն . . .

— Բմբոնեցիք Վահրամ:

— Քիչ շատ հիմա կրնամ գուշակել թէ ինչպէս ճողոպրեցար հօրդ վանդակէն:

— Վահրամ, որիչ ճար չի կար: Հայրս գիտէր որ այս գիշեր ես իմ մտերիմ Արմաւենիիս այցելութեան պիտի երթայի, ճիշդ այն ժամուն որ ամպերը սպառնացան, գետերկնքի անդուծ շահատակութիւնը չի տեսուած, հայրս մտաւ սննեակս, հրամայական սաստով պատուիրեց որ յետաձգեմ այցելութիւնս: Ոչ հայրական, այլ գաժան սպառնալիք մը կար իր արգելքին մէջ: Ես որպէս զի բնաւ կասկածի տեղիք չի տամ, սիրով

իր կամքին որդիական հպատակութիւն մը  
ցոյց տուի: Ան համոզուած՝ շոյեց զիս, և  
հետացաւ: Վաս մը վերջը կանչեցի Աբուսու,  
խմացուցի իրեն որ հաւասարմարար օգնե-  
լինձի, բարի դաւադրութիւն մը պէտք էինք  
լարել հօրս գլխին, ան շուտով հնազանդե-  
ցաւ, և երբ ծնողքս սենեակնին բաշտած  
սկսան խոր քունի մէջ ընկղմիլ, Աբուսին  
զգեսար հագայ, և իմինս իրեն հազցուցի,  
ու պատուիրեցի որ մինչև իմ վերադարձս  
սպասէ ճրագը վաս՝ գրասեղանիս առջև, ի-  
մացուցի իրեն գիշերուան այցելութեանս  
տեղը ու նպատակը: Բնականաբար ով որ  
գրսէն սենեակս լրտեսէ, պիտի խարտի:  
Աբուս իր նուրբ կազմուածքով, հասակով և  
իր խարտեաշ մազերով ինձի շատ կը նմանի,  
զիտեմ որոշ, որ հետաքրքիրներուն պա-  
տրանքը և միամիտ համոզումը կատարեալ  
կ'ըլլայ: Արեմն իրը այս է, ևս ամփոփելով  
իմին հոգեկան կարօվս, վստահ խիզախու-  
թեանս վրայ և լապտերիս լոյսը ինձի խրա-  
խոյս առած, անձրևը երբ առժամանակեայ  
դադրած էր ճամբայ ընկայ, հասայ քեզի:  
Ան իր այլ խօսակցութիւնը վերջացընն-  
լուն կը հասնին Աբուսինիին տունը:



Աբուսենին տարածուեր է պարսկական



գորգսով ծածկուած սէտիրին վրայ, իր սեւ  
 օւ խոշոր սեւեռուն աշուրները շի հեռացը-  
 ներ պառէն կախուած մայր Հայաստանի  
 խորհրդանիշ պատկերէն: Ամբողջ զգեստները  
 սեւ մեռելային տխրութիւն մը ունին, խիս  
 օւ թաւ սեւորակ մազերը՝ մէկ երկայն հաստ  
 հիւսուածքով, երկնցած են կոնակէն վար,  
 անոնց մէջ գեռ ձմեռուան կաթիլը իր ճեր-  
 մակ բիծը չէ ձխնած. սուգ օւ թախիծ ա-  
 նոր սղորկ օւ լեցուն վարդակարմիր այտե-  
 բուն վրայ՝ խորշոմի դիծ մը շեն կրցած  
 գրոշմել, պէնկ մը միայն կը ցուայ անոր  
 պարկեշտ այտին վրայ, ինչպէս առաջին  
 աստղը վերջալոյսի կապոյտին մէջ: Ան իր  
 պերճաքանդակ ձեռքերուն մէջ բռնած է Ան-  
 տայ սրբատաշ աւերակով շինուած համբիշ  
 մը, զոր մտածկուտ խորհրդականութեամբ կը  
 զարձրնէ:

Սրտաշարժ էր իր նոյն բոսկէական դիրքը:  
 Զատակները քովեաթի սենեակի մէջ մանկա-  
 կան խաղաղ քնով կ'երազէին. խի ինքը կը  
 սպասէր իւր հիւրերուն, անոնց հեռ պիտի  
 խօսէր, անոնց պիտի հաղորդէր իր սիրուն  
 ծրարիրները, որոնք կրնային բարուքել մայր  
 օճախին բարոյական օւ անտեսական հան-  
 դամանքները. կը մտածէր որ բաւական է  
 կամք, եռանդ, բաւական է անձնանուիրու-

թիւն, այն ատեն կարելի է գործել, և գործել ողջմտութեամբ, քայլ առ քայլ տապալելով խոչընդոտները : Գիտացք, պատէն կախուած էր Տրդատայ քաջայանդուզն առասպելական պատկերը, անոր վրայ հեղնական էր Արմաւենիի Հայեացքը, ժպիտով մը հոն կը տեսնէր քաջակորովե Տրդատ, որ հոսովմէական կրկէտին մէջ քառաձի սրաբշա կառքը ձեռքով կը կեցընէ . Հերբելիան պատկերը Արմաւենիին մտածութեան նիւթ կ'ըլլար, նախնի զիւցազներուն վրայ սրանշացող մըն էր, բայց ըմբռնած էր որ առասպելական քաջագործութեանց զարբ այլ ևս անցած է, զրական ուժ, տոկունութիւն պէտք է : Սրամիտ կիներ ողջ գաղափարներով սնած՝ կը մտածէր Հայրենիքի ներկային և ապագային վրայ :

Եւ ահա ժամադրութեան ճիշդ ատենին կը հասնին իր սպասածները : Վահրամ լսած էր Արմաւենիի ազգասիրական ողբոյն համբար, սակայն բնաւ երես առ երես անոր հետ չէր խօսած, անոր չէր ծանօթացած, ու Հայկանուշ երբէք Արմաւենիի մասին վահրամին բացուած չէր. Հայկանուշի և Արմաւենիի միջեւ ազգասիրական խօսակցութիւննին գաղտնի կը մնար : Արմաւենի իր ընդել, պարկեշտ ու համակրելի բնաւորու-

թեամբ շուտով կը գրաւէ Վահրամի փափուկ սիրտը: Պահ մը մտերմական խօսակցութեանէ վերջը, Վահրամին սրտին Արմաւենին կը ներկայանար սրամիտ սրտակառելի արուհի մը: Հսն միեւնոյն աստն Արմաւենի իր լուրջ գաղափարներով Վահրամին մտքին մէջ կ'արթնցընէր մեր վաղեմի արքայազուն Կիլիկիաներու և օրիորդներու բնքուշ յիշատակները: Վահրամ անսահման հիւսսթափութեամբ յուզուած դարձաւ իր Հայկանուշին ա գաշն ձայնով ըսաւ.

— Ուրեմն կարծես դարձաւ Հայկական փառքի մէկ սիրուն ճտաղալթը, որ հոս այս պահուս խաւար միտքս կը լուսաւորէ. և ինձ յիշել կու տայ որ մենք ալ ժամանակին ազգ մըն էինք, մեր մէջ ալ կանանց սեօր ունեցեր է իր քաղաքական գերը, ունեցեր է Տիգրանուհին, այն խորամանկ նազելին՝ որուն շողշողուն շատախղը կը անանեմ գիմացո. Արմաւենի, այս ինչ գաղափարական սքանչելի մարմնացումն է:

— Վահրամ, հիացումդ զսպէ. ես շատ սրտիս եմ որ Արմաւենին շուտով գրաւեց ուշադրութիւնդ: Հիմա մտիկ բրէ իր բարոզներուն, զեռ մինչեւ ցարդ խօսածները ոչինչ են:

Ասանց խօսած ժամանակ՝ Արմաւենին գնաց

գրասեղանին վրայէն բերաւ հասա ինքնագիր հատոր մը: Գարձաւ Վահրամին, և խնդրեց որ իրեն ուշագիր բլլայ:

— Վահրամ — ըսաւ Արմաւենի — կը տեսնես այս հատորը, սա ամբողջովին իմ գրութիւնս է. դպրոցական կեանքէս սկսեալ մինչև այսօր հոս խտացուցած եմ մեր ժամանակակից ու ներկայ պատմութիւնը: Երբ հրատապ ազգասիրութեամբ գիշերները կը թերթեմ իմ այս գիրքս, հաւատա՛, կը հանդիպիմ էջերու, ուր աշուրներս կը ստանն, և ախուր ու մաղձաւ թմբրութեամբ կը բարանամ: Կան էջեր, որոնք իրենց սեւ յիշատակներով բոսամենչի տպաւորութիւն մը կը թողուն վրաս, և այս ժամուս երբ ստիպուած եմ այդ էջերը բեզի ցոյց տալ ու բանալ անոնց յիշատակին արխնոս ծալքերը, երակներուս մէջ սարսուռ մը կը սողոսկի: Ահա այն էջերը ուր արցունքով արձանագրած եմ մեր երխտասարդ կրթական գործիչներու պատմութիւնը. պիտի տեսնես որ տարիներով առաջ հայրենիքի մութ աշխարհներու մէջ գիմեր արշաւեր են լուսաւորութեան առաքեալներ. առոնք նախանձելի անձնանախրութեամբ գործեցին. կովկասի հայութիւնը Գ. Արծրունիի ազգու բարոյներով անոնց օգնութեան հասա: Պիտի տեսնես

չառ մը բնկերութիւններ, որ սուրբ նախան-  
 ձով ծնան ու հրատապ եռանդով սկսան  
 գործել, բարեշրջել գեղջկական գոլրոցները,  
 սակայն անոնց գործունէութեան մոզիչ ա-  
 նիւր շուտով ջախջախեցաւ: Անոնց վերջա-  
 լոյսը մտայլ է: Այժմ կը տեսնեմ այդ նոյա-  
 սակաւ բնկերութիւն մը, որուն դուք զըլ-  
 խաւոր անգամներդ՝ ուրախ եմ որ ինծի  
 սնկնայիր էք հոս ներկայութեանս: Չեղի  
 իրրեւ հարազատ քոյր, իրրեւ անկեղծ  
 մտերիմ՝ խորհուրդ կու տամ, ձեր սիրուն  
 ձեռնարկը նախանձախնդրութեամբ սիրէք:  
 Հեթ անձնական կոխ ու փաստասիրութիւն:  
 Իմ արձանադրած պատմութիւնս՝ թող զգու-  
 շացրնէ զձեզ այն պժղալի եսասպաշտութենէն:  
 Ժամանակն է անձնուրացութեան, ժամա-  
 նակն է եռանդով աշխատելու, խիզախօրէն  
 գործելու, սակայն լուրջ միջոցներ պէտք են:  
 Մեր աւերակներու վրայ սաւաննոց քաջարի  
 զիւցազներու ոգին, թող օրհնէ ձեր գա-  
 զափարները, սուրբ անձնասիրութեամբ կը  
 մաղթեմ որ դուք ձեր կրթական գործը  
 պտղարեւ բնէք: Ես վաղը կը մեկնիմ, կը  
 թողում հայրենի օճախս, կը թողում զայն  
 հայկական նախնի յիշատակներով զարդա-  
 րուած, կը թողում մայրս որ հսկէ այն  
 օճախին վրայ, որ փսոսեց իմ կեանքիս

ծրագրը որ լոյս տուա երեք լասպերներուս, անոնք առած կը մեկնիմ հայրենիքէս. արտասահմանի մէջ անոնք չեն մնար, կը վերագանան հայրենիք. ես իրենց ձեռքը կուտամ այն գործիքները, որոնք բարեշրջում, կենդանութիւն պիտի մտցընեն հայ կեանքին մէջ: Ես իմ ուժս պիտի չի սպասեմ միայն իմին աչքիս լոյս զաւակներուս կրթական զարգացումին համար: Այլ կեանքս ամբողջովին պիտի նուիրեմ, ձեր կրթական ծրագրին աջակցելու և ամբողջ կարողութեամբ պիտի ջանամ ձեզի հասցընել բարեշրջումի հայ առաքեալներ:

Հայկանուշի համար նոր չէին Արմաւենիի այս քարոզները, սակայն Վահրամ յափշտակուած ունկնդիր կ'ըլլար իր նոր մտերմութիւն, որուն ուղղեց իր սրտին անկեղծութիւնը. ան զգածուած բացաւ բերանը.

— Արմաւենի, դու այդ ազգային հրեղէն կայծերովդ, արժանի ես մեր բնկերութեան տիրութիւնը ըլլալ: Ընկերութիւնը կարօտ է համեստ բարքով և խիզախ ոգւով անդամներու. դու այն տիպարներէն ես: Մեզի յիշատակ թողած այս հասարակ, կրթական բնկերութեանս իրրեւ նոր մեհնական օրէնսդիւր մատենանք կ'ընդունինք: Հոն գէպքերը, ազգային այն ներքին կոխները, վէճերը, հոն կու-

տակուած համազգային պայքարները, կրօնական մտնոանդութեան պժգալի մէճերը, պիտի արծարծեն մեր սոսկումը ու մենք զարձեալ ալ աւելի եռանդով պիտի ջանանք ուժգնօրէն անոնց առիթները տապալել, և պարզած ենք համերաշխութեան դրօշակը, նոյն բեւեռային աստղով մենք անգաղար կ'առաջնորդուինք զէպ ի հայկական անապատը ուր կը մշակենք գիտութիւն, յոսաջողութիւն, ընկերական ներդաշնակ կեանք, ևս ու Հայկանուշ ու մեր ընկերները և ընկերուհիները, արդէն անխղելի կապով միացած կ'ամբաստնողենք համերաշխութեան կուսակցութիւնը: Կը գործենք ու կ'օրենք գործել այն ոգւով, ինչ որ կը ներշնչէ մեր անձնուրաց եռանդը և ինչ որ քարոզեց անկեղծ շրթունքդ: Եւ յանուն մեր այդ ընկերութեան, երախտապարտ ենք քեզի ազգասէր տիրուհի, քեզի որ կը խոստանաս կրթութեան առաքեալներ հասցընել մեզի: Եւ մենք ևս քեզ կը խոստանանք հսկել սաներուդ վրայ, և դրոշմել անոնց ուղեղին մէջ անձնուրաց, համերաշխ գործունէութեան գաղափարը:

— Վահրամ կը խնդրեմ ընկերութենէն զորս հանել երախտագիտութեան ակնկալէքը, այն կատարեալ մանկական սլաարանք:

մին է : Ահա այդ պատրանքը շատերու ջղերը յուզեց, շատերը այն պատրանքի վիրասրանքէն ջլատուած, բաշուեցան կրթական ասպարէզէն . անձնուրացութեան հետ չի դուզընթանար երախտագիտութեան ակնկալութիւնը : Աշխատիլ, գործել եռանդով, առանց լքանելու, այս է մեր պարտքը, ու այն վայրկեանին որ մենք միամտօրէն կը սպասենք երախտագիտութեան, և վարձատրութեան, համոզուինք որ սխալ ուղղութեան կը գիմենք, համոզուինք որ մենք կը ջախջախենք յառաջագիմութեան ծրագիրը, համոզուինք որ մեր ազգը երախտագիտութենէ կը խորշի, կը խորշի, որովհետեւ անոր մէջ կը նկատէ փոտասիրութիւն, ետականութիւն, և ոչ անձնանուիրութիւն : Եւ կ'աղաչեմ ատրածել այս գաղափարը մեր կուսակցութեան մէջ : Մեր ամէն անդամները թող հաւատարիմ զինուոր բլլան իրենց անձնուրաց գործունէութեան, երախտագիտութիւնը որ շատ անգամ անկեղծ խորշակով կու գայ փայփայել մեր անձնասիրութիւնը, այնքան զխիթիչ հրատարակ մը չունի, որքան երբ մեր գերեզմանին շուրջը սխալ յախտենականօրէն թոշի խառնած հայկական հիասթափում մը, զոր հայը չի զլանար անոր որ համեստ, անձնանուէր, հաւատարիմ գործիչ



Ճացեր է անարատօրէն ցմիշաւ : Հայկանուշ  
 փութաց պատասխանեց Արմաւենիին .

— Պաշտելի բոյր , բերնէդ թուաւ պա-  
 ասէր մը , զոր երբէք մենք չէինք երազած :  
 Հիանալի է միտքդ . ես եթէ պիտի չի վի-  
 րաւորեմ համերաշխութեան զինուոր եզրայր-  
 ներուս սիրտը , համոզուած եմ որ ընդհան-  
 րապէս մեր եզրայրները սպասելով աշխա-  
 տութեան փոխարէն վարձատրութիւն , ե-  
 րախտագիտութիւն , և սակայն յուսախար  
 ճաւղով , կ'ոչնչացընեն իրենց երկարատեւ  
 վաստակը , կը լքանին կը պատռեն իրենց  
 սիրուն գրոշակը : Արմաւենի , դու շատ լաւ  
 նկատեցիր այդ թերութիւնը : Կը հաւատամ  
 որ մեր ընկերութիւնը հաւատարմաբար պի-  
 տի սղջագուրէ այդ գաղափարդ : Գլուխդ ամ-  
 բողջ գաղափարներով ճոխացած է . դու պէտք  
 էիր մեր ընկերութենէն անբաժան մնալ ...

Վահրամ առանց վիրաւորուելու ընդհա-  
 տեց Հայկանուշի խօսքը .

— Կը հաստատեմ Հայկանուշի անդրա-  
 դարձութիւնը , ես իբրեւ եզրայր չեմ շա-  
 սագունիր իր նկատողութենէն . այս մեզի  
 երխտասարդներուս և հասակաւոր մարդկանց  
 տեսր թերութիւն մըն է եղած շնչին գործի  
 մը փոխարէն երախտագիտութեան աչք տըն-  
 կել : Հիմա կ'անդրադառնամ այդ պատրան-

բին կոյր ու խարդախ սնիրներուն վրայ: Կը  
 համբուրեմ պատուէրդ և զայն կը գրոշմեմ  
 մեր գրօշակին վրայ: Պիտի գործենք առանց  
 վարձատրութեան: Այդ փրկարար ազգու  
 միջոց մըն է, որով պիտի կարենանք յա-  
 բասեւել մեր ծրագրական գործին մէջ:

— Հայկանուշ և Վահրամ գուք ձեր  
 պատրաստական վաստունն ու սիրուն մտքով  
 կը խրախուսէք զիս, կը մխիթարէք զիս, և  
 այս բողէները որ շատ լեզի են ինծի հա-  
 մար, ինծի համար որ կը թողում օրօրանս,  
 կը թողում տաճարներս, կը թողում պապե-  
 րուս գերեզմանը, կը թողում հայրենի բլուր-  
 ները, անտանները, գաշտերը որոնք լսեցին  
 սիրոյ տարիներուս հառաչները, ու վերջը  
 լսեցին սուգերուս ողբը, ինծի հետ անոնք  
 լացին ու խնդացին, ես կը բաժնուիմ ա-  
 նոնցմէ, դառն՝ խիստ դառն է այս բաժա-  
 նումը, բայց գուք այժմ կը քացրացընէք այս  
 դառնութիւնը, մայր հողիս վրայ ես կը տես-  
 նեմ ճարասար մշակներ, փստահ անոնց բաղ-  
 կին, փստահ անոնց մինչև ցարդ ցոյց  
 տուած անսպասելի արդիւնաւոր գործունէու-  
 թեան կը հեռանամ, կը գաղթեմ, ու զիս  
 հեռացնողը օճախիս սէրն է. զայն պիտի  
 սիրեմ հեռուէն, և հեռուէն մխիթարութեան  
 շունչս հեռուէն խրախոյսի կորովս պիտի

նուիրեմ անոր: Հայկանուշ դու կ'ուզես որ  
 ես իմ օգաշանլի ընկերութենէս անբաժան  
 մնամ. կը խօստանամ. ես անբաժան կը  
 մնամ և հեռուէն: Բաժնուիլս գիտես արդէն  
 որ աւելի օգտակար կ'ըլլայ, աւելի արդիւ-  
 նատօր մեր գրօշակին: Նամակներով, տե-  
 ղեկաղիրներով իմ տկար ձեռքնս պիտի հնչէ  
 հոս մեր ահուճքին գաղափարական սրբու-  
 թեան մէջ: Մտերմական, ընկերական նա-  
 մակներս անդադար պիտի երգեն Վահրամիս  
 և Հայկանուշիս սէրը: Գաղափարի մուտան  
 թող յուզէ մեր սրտի լարերը, անոնք պիտի  
 մշին կուսութեան անոյշ մեղեգին, որ պիտի  
 սփոփէ մեր կրակոս ու շարատանջ վաս-  
 տակը: Վահրամ քու կարճ, բայց խմաստա-  
 լից և խմաստասիրական գաղափարներդ շու-  
 տով բացին իմին սրտիս խորշերը, ու ես  
 անկեղծութիւնս քեզի նուիրելու արամաղիր  
 եղայ: Եւ ուրախ եմ. ուրախ եմ որ Հայ-  
 կանուշ դու գտեր ես գաղափարի երիտա-  
 տասարդը որ զուտ անձնանուիրութիւն է.  
 զուտ անկեղծութիւն է: Ապրեցէք անբաժան  
 գաղափարի անարատ այն մաքուր շղթայով  
 որ զձեզ կապեց ձեր ուսանողութեան օրե-  
 բուն մէջ, և դուք բազմ ունեցաք զիրար  
 ձանձնալու: Եւ այն անկեղծութիւնը որ դուք  
 սրտէ սիրտ կը հոսեցընէք, տարածեցէք մեր

կուսակցութեան ակումբին մէջ, անկեղծութիւնը հաստատութիւն սխալի ծնի, ու հաստատարիմ կուսակցութիւնը, կը դառնայ հաստատարակութեան ազդեցիկ մարմինը, սրուն խօսքերը, վճիռները, զաղափարները կ'ընդունիմ Արարատի սրուն բղխած կենսաստեղծագումներ:



Երկուշաբթի արշալոյսին, զիւզի մեծ և բնդարձակ մարդայեանի վրայէն կը շարժը կարաւան մը: Ոմանք թաշկինակով բլուրներէն, զաշտերէն բարեւ կու տային այդ կարաւանին: Յուզարկաւորական սրտաշարժ տխրութիւն մը կը տիրէր. տխուր էր կարաւանի բնթացքը. այդ ամբօխին մէջ շատերը արցունք կը թափէին, զիւզական մեծ սուղ մը կար և սզալին Արամունին էր: Աճամբայ կը գրուի. զիւզին ամբողջ հայութիւնը, թէ քաղաքացիք և թէ գիւղացիք անհուն համակրութեամբ կը սիրէին զանիկա. հիմա սր ան կը մեկնէր, ամբօխը իր մէջ կը զգար անօխարինելի կորուստ մը. անկեղծ էր հասարակութեան ցաւը, վասն զի անկեղծ ազգասէր, հասարակասէր, ազգասասէր սիրուն տիպար մը, մեծ օճախի, մեծ գերդաստանի, համեստ զաւակ ու մեծ սրտի սէր տիրուհի մը կը կորսնցընէր. հասարա-

կութիւնը չէր գիտեր անոր գաղթելու նպասակը, ան հասարակութեան ծանօթ էր իբրև հայ հարազատ համակրելի մայր մը, իր ընկերական կուսակցական գործունէութիւնը խորհրդաւոր գաղանիք մըն էր հասարակութեան համար:

Արմաւենի, արիական կորույտով կը զսպէ իր ներքին սրտածմլիկ յուզումը, կը մխթաբէ իր մայրը, ազգականները, օճախին մերձաւոր բարեկամները, մանրիմները և ամբողջ յուզարկաւոր ամբոխը: Գեղջկական երթաս բարովի լալկան եղանակներ կը լսուին ու գիւղացիները սրտաբեկ երգերով երջանիկ պանդխտութիւն ու բարի դարձ կը մտղթեն: Արմաւենին արտասուածոր մտածկտ աշուրները մերթ ընդ մերթ կը դարձնէ իր հայրական օճախին, արտերուն և Ս. Բարութիւն եկեղեցւոյ վրայ: Սիրտը կուլար, կը հեծէր. վայրկեանը իրեն համար պրալի էր, իրեն համար գերեզման իջնել մըն էր՝ մտաբերելով որ նոյն ատեն յախտենական մեատ բարովը կ'ըսէ իր հայրենիքին իր օճախին և իր ծնողաց:

Գլուղին մինչև սահմանադրութիւնը ամբոխը ընկերացաւ Արմաւենիին, հոն գտնակակիծ վայնասունով, մայրը, բոյրերը, և ամբողջ մանրիմ ու ազգականք բաժնուեցան իրմէ:

Սակայն երկու ձիաւոր, որոնց սլ ըլ-  
լալը արդէն ամբօխին անձանօթ մնաց, ա-  
նոնք երկու մղոն զեռ ընկերացան: Ու ան-  
տատախտ ճամբու մը վրայ, վերջնական  
հրաժեշտնին տալու տակն, երկար տակն  
իրարու կը նայէին յուզուած. երեք մտե-  
րիմներ, Ալմաւենի, Հայկանուշ և Վահրամ  
ընկերութեան սիրոյ կատար միացած այդ  
անձնանուէր մտերիմները, բաժանումի դասն  
կսկիծով կը տոչորուին: Վերջապէս Ալմա-  
ւենին խղեց յուզուած լուսթիւնը. սղջազու-  
րեց երկուքն ալ ու կերկեր ձայնով հրա-  
ժեշտի սղջոյնը տուաւ.

— Մնաք բարով սրախ երկու վաս ջա-  
հեր. ինձի հետ կը տանիմ ձեր սրախն ան-  
կեղծ լոյսը . . .

Վահրամ համբուրեց Ալմաւենին ձեռք  
ու Հայկանուշ մի և նոյն տակն անոր մտար  
անցուց ընկերութեան մատանին:

Գաղափարական սրտակը կատարուած էր:  
Ալմաւենին այլ ևս կը մանկ կրթական ըն-  
կերութեան մէջ, սրախ ու մխիթարուած  
սրտով, կը խօսի.

— Մանկակր դոր մատա անցուցիք, ձեզի  
հետ անեցած թանկագին սէրս կը զօղէ ամ-  
բողջ ընկերութեան համակրանքին հետ .  
երգուէր էի սուրբ պահել ազգային գործու-

նկատմանս , զայն պահեցի սուրբ , հիմա կ'երգնում սուրբ հաւատարմութիւն մը ա- կամբնս . կ'երգնում անձնուրաց աջակցու- թիւն , մինչեւ ցմահ գործունէութիւնս :

Երեք անկեղծ մտերիմները համերաշխ գործի սխառարութիւնը կնքեցին փոխադարձ եղբայրական սղջագուրանքներով , և արցունքը աչքերնին բաժնուեցան . . .

## Դ .

**Ա**ՐՄԱԽԵՆԻԻ տեսակցութիւնը խրախու- սեց զՎահրամ , սա ծածուկ կը գործէր Հա- յաստանի մէջ տարածուած կրթական առա- քեալներուն հետ , սակայն սոցո՛հ էր , գոր- ծը սահմանափակ , սղօրմելի . իր եսանդին համեմատ արդիւնք չունէր , ինքը թէև խի- զախ ու խրոխտ միտք մը , սակայն յուսա- հաս ու միանպամայն մտղձսա էր . Աբմա- լենին զինքը ելեկտրացուց , անոր մեկնելէն վերջը մէկ քանի ամիս գնաց շրջեցաւ Հայաս- տանի կողմերը կրթական առաքեալներուն հետ ուժովցուց իր կապը . անոնք արդէն վստահ անոր անձնուրաց հաւատարիմ գոր- ծունէութեան՝ զինքը բնօրեցին բնկերութեան աւագ խորհրդատու և քարտուղար : Հրապա- րակաւ կրթական մտքիմեայ գոյութիւն շկար ,

սակայն ամէն հասարակասէր ուսուցիչ յատուկ ուղղութեամբ մը օգտակար բլլալու համար, անձանօթ միջոցներով իրենց կրթական նպատակին լուրջ կերպարանք մը տուաւ. վաճրամբ սիրեցին, համակրական կապով զայն նկատեցին իրենց վերահսկող ընկերք:

\*

Կրթական ակումբի գործը միտթարական բայլով կը յառաջագիմէ, և Հայաստանի ամենէն խաւար անկիւնները կը լուսաւորուին անոնց ճառագայթներով: Անոնք կը գործեն ծածուկ, առանց փոքր կասկած մը տալու, գաղանապահ մնալնին իրենց վնասէր, այլ օգուտ: Ընկերութիւնը շատ սեղ հաստատուն վարժարաններ շունենար, այլ ակումբի անդամներէն ամէն մէկը իրեն սեփականուած գաւառին աներուն կ'այցելէ, և օրօր ամենէն հանճարեղները առաջ բաշխելով, զանոնք վարժապետութեան կը պատրաստէ: Ակումբին նպատակն էր նախ վարժապետներ հասցընել, յետոյ աշակերտ: Գործ ու նպատակ շատ բարի բլլալով, բնականաբար առանց դիմադրութեան ակումբը կը շարունակէ իր կրթական առաքելութիւնը: Սակայն Հայկանուշ իր Տ. բազբի պալատին մէջ անմիտթար կը տանջուի: Անոր



ինչ փոյթ իր արխատկրաս ծագումը, ար-  
բանական կեանքը և անական փառքը. այդ  
ամէնը իր գործին խոչընդոտաներ էին, այդ  
փնակը զինքը կը զրկէր իր գեղեցիկ գա-  
զափարներու իրականացումէն:



Արմաւենի արտասահման հասնելուն՝ շու-  
տով գործի ձեռք կը զարնէ, իր մայրական  
ըջութեամբ գրաւելով ուսանողաց համա-  
կրանքը, անոնց վրայ կ'ազդէ և հինգ տա-  
րուան մէջ լսելեայն Հայաստան կը յղէ ութը  
մասնագէտ ուսանողներ, որոնք Վահրամի  
վարչական հովանիին տակ կը գործեն շատ  
միեմարական եռանդով: Սուրբ նախանձ մըն  
է որ կը բռնկի Հայկանուշի սրտին մէջ:  
Վահրամ իրմէ մեկուսացած էր, Արմաւենի  
արդէն հինգ տարիներէ ի վեր գազթած ...  
Հայկանուշ՝ մտածելով այդ երկու պաշտելի  
մտերիմներէն զրկուելը, և միանդամայն իր  
կաշկանդուած գիրքը նկատողութեան առ-  
նելով, կը հիւժէր: Արմաւենիին մեկնելէն  
ի վեր հայրը գաժան բռնութեամբ կը հրս-  
կէ Հայկանուշի վրայ: Ամենաստատիկ բըր-  
տութեամբ կ'արգելէ որ բնաւ չի մասնակցի  
կրթական ակումբին. առարկելով որ այդ  
արխատկրատի գործ չէ այլ տիրացուի, և  
իւր նպատակին հասնելու միակ միջոցը կը

Համարի աղջիկը հետացընել Վահրամի և Աբմաւենիի մահբաւութենէն:

\*

Հինգ տարի ամբողջ՝ Հայկանուշ ի սէր կրթութեան, հաւատարմութեամբ կը կրէ հօրը բիրտ կաշկանդումը, սակայն կը տեսնէ որ հայրը անդրդուելի կը մնայ: Չսհել իր գաղափարները, այդ անհնարին էր: Ան իր անգործ ախար վիճակը Աբմաւենիին մանրամասնօրէն կը նկարագրէ. իր կեանքին բարոյական վկայաբանութիւնը կը կարգանք այս նամակով.

— « Ինձի և Վահրամիս յղած նամակներդ զիս կը մաղնխացընեն. նախորդ նամակներէս զիտես արդէն իմ բանտարկեալ զիրքս, կրնաս գուշակել թէ գործունէութեանդ նկարագրութիւնը զիս սրբան կը յուզէ. այս կը յուզուիմ երբ կը մտարերեմ իմին ամուլ և բանի ծուլութիւնս. ինչ կը իմ կոշումս, ինչն Եւրոպայի մէջ մասնագէտի վկայական ասի, վերաբուժ եղայ, գաստիարակութիւն սորվեցայ. հօրս սկեհամակ սալաններուն մէջ յղփանալու, թուլանալու, մեղկանալու համար . . . Չէ, զիտես արդէն իմ կոշումս, զիտես արդէն թէ ինչ ծրագիրներ սենիմ, բայց հիմա լաց վրաս, հօրս պալատին ախար բանտարկեալն եմ. հայրս

կատարել է ձեռուրներս, ես շուարած եմ, շփոթած կը աանջուիմ և իմ մտերիմներուս գործունէութիւնը զիս կ'աշտպանէ, ես ինքզինքս կը դատապարտեմ, կը մեղադրեմ անգործ մեռած օրերս, կեանքս փառած գիակ մըն է, ինչո՞ւ հողին վրայ մնայ, կամ մեռնիլ, կամ գործել: Ո՞րք ընտրեմ, է՛յ, եթէ ընտրութիւնը ինձի մնա՞ր ... Ազատութիւնը կեանքի արքայութիւնն է, ես աշտըններս աւար սեւեակու ուժ շունիմ, բոնի անգործութիւնը կամքիս բանան է, ես հոն նետուած կը հիւծիմ, և մինչեւ ե՞րբ ... կը մտածեմ, պէտք չէ բմբոստանալ, պէտք չէ յարգել այն խրոխտ ձայնը որ կը խզէ անձնական գերութեանս կատանքները ... Սակայն շուարած եմ, որոշ վճիռ մը չի ներկայանար դատադատեանս: Արմաւենի ես քեզի կը գիմեմ, դու լուրջ մտքովդ լուծէ կեանքիս կնճատութիւնը: Կրնամ արհամարհել սրգիական հպատակութիւնը, դու կրնաս ինձի ցոյց տալ թէ մինչեւ ո՞ւր կ'երկարի հօր մը իշխանութիւնը, ես միթէ այն աստիճանին չեմ հասած որ ինքնազուի վճռելու և գործելու իշխանութիւն ունենամ: Վշտերս և հօրս ինձ լարած դարանները չեմ ուզեր մեղադրել, անձնական զրկանք ու տանջանք սիրով կը կրեմ, անոնք ինձի համար բարոյական մար-

զանք են: Կրածներուս զանգատ շունիմ.  
 այլ զորժուէնէութենէ զրկուիլս է որ կեանքս  
 կը յօշոտէ, այդ զրկանքն իմին անհամեմատ  
 միշտս է, որուն զարմանք քու նամակէդ կը  
 սպասեմ: Գրէ սիրելի Արմաւենի, մի ուշա-  
 նար, փութով պատասխանէ, ես երաշխաւոր  
 չեմ իմ բնկած բնաւորութեանս. պիտի  
 սոսկամ անշուշտ, երբ առանց քու խոր-  
 հուրդներուդ մճռեմ զիմադրել հօրս կամբքն,  
 պիտի սղբամ անշուշտ այն օրը, որ զիս պիտի  
 ըմբոստացընէ ... բայց ինչո՞ւ այսքան թոյլ  
 գաղափարներ: Ճուարո՞ւմ, որքան տկար ու  
 խեղճ է ազգեցութիւնդ. Արմաւենի պիտի  
 փարատես շուարումս: Կը սպասեմ նամա-  
 կիդ, գրութիւնդ կ'ընդունիմ մճիռ ու պատ-  
 դամ. գրէ, խորհուրդ տուր, ու առ իմին  
 տարուկ համբոյրներս »:

Խղճալի էր Հայկանուշի միճակը, այդ  
 նմանակը բիշ շատ գաղափար մը կու տար  
 իր կրածներուն: Հայրը անհանդուրժելի խրո-  
 տութեամբ կը խոցէր իր ազջկան սիրաբ-  
 ՚հին մաղեմի գրութեամբ, իր ասիական գա-  
 առդութեամբ կ'իշխէր անոր վրայ: Հայկա-  
 նուշ իր անտանելի կացութեամբ բախարակին  
 սահմնկած՝ կը սմբքի սենեկին մէջ, իր սփո-  
 փանքն էր սրախօս Արուսի զուարճալի խօ-  
 սակցութիւնը:

Հայկանուշ Արմաւենիի գաղթելէն և վա-  
 ճրամէն զրկուելէն վերջը, կատարեալ մար-  
 գասեաց մըն էր դարձած : Ընկերութիւն ,  
 հանգէս, երգ ու սպար իրեն համար չէին :  
 Մտերիմներէն զրկուելը զինքը առանձնա-  
 ցուց. ամբողջ հինգ տարի հօրը պատուէրով  
 մնաց քաղաք, զիւր շելաւ. նամակ ու զիրք,  
 ահա առանց մէջ սկսաւ փնտռել իր երջան-  
 կութիւնը : Հայրը գոհ չէր աղջկան այդ վի-  
 ճակէն : Ինչ սխալի բլլար Հայկանուշի ա-  
 պագան, ինչպէս սխալի կարենար համոզել  
 աղջիկը որ հնազանդի, հպատակի իր կամ-  
 քին. կը տանջուէր, շատ կը տանջուէր  
 աղջկան այդ տխուր ու անմխիթար վիճակով :

Չմեռուան մաղձոտ օր մը, երեկոյեան  
 բնթրիքէն վերջ, ան կը ներկայանայ իր աղջ-  
 կան : Հայկանուշ բնկզմած է իր իմաստա-  
 սիրական գրքերուն մէջ : Հայրը անոր այդ  
 զիրքը տեսնալով, վայրկենական զայրոյթ մը  
 կ'ունենայ, բայց առանց բարկութիւնը պոսթ-  
 կալու, կը խնդրէ Հայկանուշէն .

— Աղջիկս կ'աղաչեմ, հերիք է, ինչո՞ւ  
 բնասնեկան ուրախութենէն կը զրկես թէ՛  
 զբեզ և թէ՛ ամբողջ ծնողքդ. բաւական է  
 գրքերու այսքան սիրահարուիլդ, միտքդ ինչ  
 գրեր ես, — Մաշտոց մը կ'ուզես բլլալ :

— Հայր, խմին միակ հրճուանքս գրքերս  
են, եթէ անսնցմէ ալ կ'ուզես զիս գրկել...

— Մինչեւ հիմայ կ'երևի թէ գրեց շա-  
բաներէ գրկեցի. Հայկանուշ ինչ կ'ուզես  
հասկցնել:

Հայկանուշ շատագունած էր, ինքզինքը  
սկսաւ մեղադրել թէ ինչո՞ւ անխոհեմ գրա-  
նուեցաւ, ու ածղոհ ըլլալը յայտնեց:

— Հայր ես անփորձ եմ, գուցէ շեմ զի-  
տեր նոյն իսկ թէ սրն է մարդուս բաձ  
գրկանքը. գրքերը զոր կը կարգամ բնակած  
է որ միտքս կը կրթեն, բայց հասակաւորի  
մը փորձառութիւնը ինծի շեն սորվեցընելը.  
կը խօսասովանիմ որ զես ես հօր մը ըմ-  
բրանած կեանքի հոգերանութիւնը շեմ վեր-  
լուծած, և գրկանք համարածներս գուցէ  
բեղի համար շատ ծաղրական երևին, և իմ  
երևակայութեանս մանկական պատրանք:  
Ուստի աւելորդ է պատասխանիս համար  
սալը: Միայն կը խնդրեմ ինծի յայտնելի  
այս ժաման զիս տեսնելուց և ինծի հետ  
խօսակցելուց նպատակը, արդեօք նոր պա-  
տուէր մը ունի՞ս:

— Այ նոր, այլ ան հին պատուէրը,  
զոր գիտես արդէն:

— Պատուէրներդ շատ . . .

— Մտաբերեցիր անշուշտ որ պատուէրն  
է ամենէն հաճելին և ցանկալին:

— Այ՛ս, գիտեմ որ դու կը ցանկաս զիս  
ամուսնական կապով կաշկանդել: Մէջ, բնաւ,  
այդ մասին ես իմ ազատութիւնս երբէք չեմ  
զոհեր. գիտցիր, վճռեր եմ մայր ըլլալ, այ՛ս,  
մայր պիտի ըլլամ անմայր մնացած, ան-  
խնամ մնացած հայրենիքի անհամար սրբե-  
րուն. իմ այս որոշ ու հաստատուն կամքիս  
զիմարեղն փուճ բան է: Հայր ի դուր . . .  
մի ջանար զիս համոզել: Ես կը պատուեմ,  
կը յարգեմ զքեզ. սակայն գիտցիր որ ա-  
պագան, ադու մը ապագան որ կեանքի յա-  
ւիտենականութիւն է, հայր մը բնաւ չի կրնար  
բնութեամբ սահմանել. ես եթէ ըլլայի  
անմշակ գլուխ մը, մտածելու, գաղափար մը  
կազմելու անբնդունակ, շուարած ու շփոթած  
աղջիկ մը, այն ատեն դու կարող էիր ինծի  
գծել ու ցոյց տալ ապագայիս ծրագիրը. սա-  
կայն փաօք երկնքին, աղջիկ կարծեմ ա-  
պուշ չէ . . .

— Հայկանուշ ես վերջին անգամ եւս  
փորձեցի զքեզ, ե ուղեցի որոշ գաղափար  
մը կազմել ապագայիդ մասին: Սակայն դու  
կը յամասիս: Վճռեր ես ամբողջ սրբերուն  
այ՛ս ըլլալ: Մի՛ վրեղի յանձնեց զանոնք.  
մտկորաց այդ պարտականութիւնը դրաւ. սի  
զքեզ կ'ուզէ զրկել օրինաւոր մայրութենէ:

— Գթութիւնը որ գաղափարներուս կուտ-  
բըն է:

— Հայկանուշ եթէ այդ գթութեան լեզուն ամէնքը բեզի պէս ըմբռնէին, եթէ ամէնքը որբախնամ գործը քու գաղափարներովդ կատարէին, ո՛հ որքան խեղճ պիտի ըլլար հայրենիքի վիճակը:

— Հայր հասկցայ միտքդ, դու ըսել կ'ուզես որ եթէ ամէնքը խնժի պէս մայր շուգէին ըլլալ, հայկական մարդահամարը պիտի նուազանար, ո՛չ բնաւ, այդ երկիւզը մի ունենար, իմ գաղափարներուս հետեւողներ շատ շին գանուիր: Իմ համոզումս ուրիշին օրէնք ու օրինակ պիտի չըլլայ, ես իմ կուսութիւնս պիտի զոհեմ որբախնամ գործին, և այն ատեն միայն կրնամ արդար հաւասարութեամբ խնամել որդեգրած որբ զաւակներս: Հայր՝ որոշ կամքիս վճռականութիւնը կարելի է զիւրաւ ապացուցընել, սակայն ինչ որ կը գուշակեմ դու համոզուելու արամադրութիւն չունիս, միայն խնդրեմ այսքան գիտցիր, որ ապագաս իմին սեփականութիւնս է:

— Հայկանուշ, ո՛վ բեզի այդ սեփականութիւնը սուսաւ . . .

— Օրինաւոր սղջմատութիւնը:

— Ո՛չ, ո՛չ, սղջ ու օրինաւոր չէ՛ այդ սեփականութիւնը: Գիտցիր, բանի որ դու իմ զաւակս ես, իմին սեփականութիւնս ալ ես:



— Այո՛, գոյութիւնս բեղի պարտական  
եմ, բայց ոչ ասպարեայիս ասպատութիւնը։

— Ես այդ փիլիսոփայութենէն չեմ հաս-  
կընար. ինչ որ պատկերէս աւանդութեամբ  
գիտեմ, նոյն գիտութեամբ իշխանութիւնս ի  
գործ կը դնեմ. որով գիտցիր որ ասպարեայի  
ասպատութիւն չունիս. դու հօրդ իշխանու-  
թեան հպատակն պիտի մնաս. անէ՛ծք Եւ-  
րոպային որ ասպականեց իմ աչքիս լոյս  
աղջկանս միայրը . . .

Վայրկեան մը լուռ մնաց և առանց խօսքը  
շարունակելու յուզուած մեկնեցաւ։

Հայկանուշ անվրդով սկսաւ գիրքը կար-  
գալ։ Ան այլ եւս ըմբռնած էր որ նահա-  
պետական հայր մը իրեն պէս մտածելու  
կարողութիւն չի կրնար ունենալ. և բանի  
որ հաստատակամ վճռած էր անձին ասպա-  
րան իրեն սեփականութիւնը ընել, իրեն ինչ  
փոյթ հօրը անգօր գիտադրութիւնը։ Սրտին  
տառասպանըք՝ անգործութիւնը և մտերիմե-  
բէն բաժնուածութիւնն էր։



Հօրը մեկնելէն մէկ ժամ վերջը Աբուս  
մտաւ իր տիրուհիին սենեակը, ու ցած ձայ-  
նով աւեակեց.

— Ամէն բան կարգի է, երթանք։

— Հայրս հանգչե՞ր է.

— Անուշ, անուշ կը խոկայ : Ապահով  
 եղիր ամէնքը բունի մէջ թաղուած են, մեր  
 փախուստը ոչ ոք կ'իմանայ, դու երբ ինծի  
 հետ ես, սասանային աչքէն ալ կրնաս ան-  
 վասնդ փախչիլ : Յիշէ որ Պօլիս վարպետ  
 վհուկներու քով մեծցեր եմ, և զիտեմ սա-  
 տանան ալ ցանցիս մէջ ձգել :

— Լաւ, ձիրքերուդ զբուստիքը չեմ ու-  
 զեր լսել, ժամանակը չէ : Աբուս հիմա զիս  
 պիտի տանիս հրատարակին աջ կողմի մեծ  
 իջեւանը :

— Հայկանուշ, այս ժամուս . . . այն  
 աղտոտ տեղը . . .

— Ինչո՞ւ կը զարմանաս :

— Հայկանուշ հոգիս, զբեզ հոն ինչպէս  
 կրնամ առաջնորդել . կ'երեւի այդ տեղը  
 բնաւ բեզի ծանօթ չէ, կը հնազանդիմ, սա-  
 կայն զիտցիր ահա առաջուց բեզ կը յիշե-  
 ցրնեմ որ այդ իջեւանը աւազակ բխրան-  
 բու, կոշա վանցիներու որջն է :

— Ինչ որ կ'ուզէ թող բլլայ, կեանքիս  
 ու պատուոյս գաղտը շրլար, բնաւ այդ մա-  
 սին կասկած մի ունենար, աւազակներուն  
 առջեւ խրոխտ կը ներկայանամ, իսկ կոշ-  
 տերուն՝ ազնիւ : Անփոյթ եղիր Աբուս, բա-  
 ւական է որ շիմացուի իմ փախուստս, և  
 իջեւանին մէջ չի գիտնան իմին ս'իլ բլլար :

— Անուշ, անուշ կը խոկայ : Ապահով  
 եղիր ամէնքը բունի մէջ թաղուած են, մեր  
 փախուստը ոչ սք կ'իմանայ, դու երբ ինծի  
 հետ ես, սատանային աչքէն ալ կրնաս ան-  
 վտանգ փախչիլ : Յիշէ որ Պօլիս վարպետ  
 վհուկներու քով մեծցեր եմ, և գիտեմ սա-  
 տանան ալ ցանցիս մէջ ձգել :

— Լաւ, ձիրքերուդ գրուատիքը շեմ ու-  
 զեր լսել, ժամանակը չէ : Աբուս հիմա զիս  
 պիտի սանիս հրատարակին աջ կողմի մեծ  
 իջեւանը :

— Հայկանուշ, այս ժամուս . . . այն  
 աղտոտ տեղը . . .

— Ինչո՞ւ կը դարձանաս :

— Հայկանուշ հողիս, գրեզ հոն ինչպէ՞ս  
 կրնամ առաջնորդել, կ'երեւի այդ տեղը  
 բնաւ բեզի ծանօթ չէ, կը հնազանդիմ, սա-  
 կայն գիտցիր ահա առաջուց բեզ կը յիշե-  
 ցընեմ որ այդ իջեւանը աւազակ թիւրտե-  
 րու, կոշտ վանցիներու որջն է :

— Ինչ որ կ'ուզէ թող բլլայ, կեանքիս  
 ու պատուոյս պաշտպան շրջար, բնաւ այդ մա-  
 սին կասկած մի ունենար, աւազակներուն  
 առջեւ խրոխտ կը ներկայանամ, իսկ կոշ-  
 տերուն՝ ազնիւ : Անփոյճի եղիր Աբուս, բա-  
 ւական է որ շիմացուի իմ փախուստս, և  
 իջեւանին մէջ չի գիտնան իմին ս'ի բլլալու :

խորհրդաւոր էր: Փախստականները նեղ ան-  
ժանօթ փողոցներէն անցան, զիրենք տեսան  
միայն շուկաներու պահապան շները. Հայ-  
կանուշ սրտազոզ՝ կը կասկածէր որ ծա-  
նօթներու մասնուի, փողոցին հանդիպի  
ճանչուորի մը: Եւ իր կասկածներուն փարա-  
տում կը փնտռէր. սիրար դող հարցուց Ա-  
րուսին.

— Արուս ի՞նչ կը նշանակէ, մարդու  
չենք հանդիպիր. շրջայ թէ պահուլտած կը  
դիտեն զմեզ:

— Չէ՛. չէ՛ Հայկանուշ, այս ցուրափն  
սիլ կը թողու իր տաք անկողինը, չէ՛ ա-  
պահով եղիր, ոչ միայն ծանօթի մը չենք  
հանդիպիր, այլ և ոչ իսկ պահապան զինուորի  
մը: Տե՛ս, նայէ՛ զբեզ սր ճամբաներէն կը  
տանխմ, հոս ցերեկ տանն ալ ոչ միայն ծա-  
նօթ մարդ մը, այլ և ոչ իսկ ճանճ մը կը  
դանուի: Հիմա թող վախկտաութիւնդ: Ինձի  
բսէ, սա երեւցած սոչաւոր աստղը շարա-  
գուշակ չէ . . .

— Ի՞նչ շար. աստղերով զուշակութիւն-  
ներ բնելու ժամանակը անցեր է . . .

— Բայց աստղերը մնացեր են, մնացեր  
է նաև իրենց սոչը: Հայկանուշ դու զար-  
մանալի ես, զխաութեամբդ կարծես աստղե-  
րուն սպաննալիքն ալ կ'ուզես ուրանալ. է՛հ

անսնք սիրա շունին, իմ վարպետ վհուկս  
անսնց ամէն սպառնալիքներուն նշանները  
ինձի սորվեցուցած է: Տես սա լայն պոչը,  
որ այն խոշոր աստղէն կ'երկննայ, այդ նշան  
է որ Պաթումէն կամ Մոսկովը պիտի գայ  
նուաճէ մեր երկիրը, կամ այս ամառ քաղ-  
քին մէջ ժանտախա պիտի տիրէ:

— Արուս հոգիդ սիրես սա առասպելներդ  
մամերուդ ու պասպերուդ պատմէ: Չիս հան-  
դիսա թող, վրաց խնտալու ախորժ շունիմ...

— Հայկանուշ իրաւունք ունիս ես կը  
լռեմ, ու կը խնդրեմ ալ չի խօսինք. այս  
փողոցը վտանգաւոր է, ընդհանրապէս շատ  
անցուղարձ կայ, կարելի է ծանօթներ ալ  
գանուին, բարերազգարար և ոչ իսկ անծանօթ  
մարդու հետքն ալ կը տեսնուի, բայց սա-  
կայն լուռ մնալնիս լաւ է:

Անսնք լուռ ու անշուկ անցան, տեղ տեղ  
լապտերները այդ երկու փախտականներուն  
սրտին մէջ երկխոյ կը ձգէին, ճանչուորի  
մը յայտնուելնին իրենց համար մահ կը  
համարուէր: Անսնք անցան երկու երեք  
սրճարաններէ, ուր մարդ չկար, առկայժ  
ճրագ մը միայն կը վառէր, վերջապէս մտան  
մութ փողոց մը, քիչ մը առաջ գացին, մո-  
տեցան մեծ երկփեղկ գոան մը, ներսէն խաղի  
ու պարի ձայն կու գար: Արուս դուռը հրեց

բացաւ. հասեր էին ուզած իջեւաննին. բառանկիւնի մեծ շէնք մըն էր, երկու կամարակապ յարկերով. վերի յարկը իջեւանած էին վանէն եկած գաղթականներ. իջեւանին կեդրոնը, մեծ բակին մէջ, տկճորով և սրինդով վանցի հայեր ու քիւրտեր բնած էին ետքըրջտա՝ կոչուած պարը. այդ՝ ուրախ ու եռանդուն պարին Հայկանուշ ուշադրութիւն չի դարձուց. ըսաւ Արուսին.

— Արուս դու զմայլեր ես այդ պարով, սակայն ժամանակը չէ. եկուր ինձի հետ վերի յարկը. հոն գործ ունինք և մեծ պարտականութիւն:

— Հա, հասկցայ դու ինչ նպատակով այս ժամուս հոս եկար: Աստուած սա մարգասիրութեանդ բիշ մը շնփ գնէր... հա, շափ գնէր, էհ ինչ կ'ըլլար: Հասկցայ հիւանդ տեսի եկար, ախ Հայկանուշ, ինչու մինչեւ վաղը չի սպասեցիր. ես հիւանդնեքը սարգ կը բերէի:

— Խորամանկ, շատ ուշ հասկցար զի-

1. Կարբըրջտա կոչուած սրգ պարը Ալաուգուրականի տեղական գուարնալի խաղ մըն է. գիմացէ գիմաց կը շարուին երկու պարոպ կարգեր, երգելով կը հեռանան կը մտտեման, և ափ ափի ու մոգին կը զարնեն մինչեւ այն ատուիւն, որ ափերէն արիւն կը վազէ:

աւարութիւնս . Հիմա դու եկուր ինձի հետ .  
գիտ խրատելու ժամանակը չէ :

Անոնք կամարակապէ մը անցան , աեսան  
խումբ մը հանդիսականներ որ երկայն գա-  
ւազանէ գլանիկներով ծուխ կը բաշէին . պա-  
րը զանոնք կը զուարճացընէր : Ծեր մը աե-  
սաւ զՀայկանուշ , մօտեցաւ , անոր ականջին  
բան մը փսփօաց : Խօսակցութիւնն շուտով  
վերջացուցին : Երկրորդ յարկը ելլելու ա-  
տեն՝ սանդուխին վրայ՝ Հայկանուշ հարցուց  
Արուսին :

— Արուս ճանչցա՞ր այդ ծերը :

— Ո՛ր :

— Հիմա ինձի հետ խօսողը :

Այ՛ն ան աչքիս զարկաւ , սակայն իմ ու-  
շադրութիւնս պարին էր . ախ սա մեր վան-  
ցիները ինչ լաւ , ինչ բաջարաբ կը խաղան .  
Հայկանուշ ուրախութեանս շափ շի կայ .  
մեր վանցիները բխրտերու ափերէն արին  
Ֆշացուցին : Հէ՛ . ապրին մեր վանցի աղ-  
պերները :

— Գու գարձեալ պարով հիացած ես ,  
այդ ինչ շտեմութիւն : Արուս այն ծերը Հու-  
մակը , ճգնաւոր Հումակն էր , խմին նամա-  
կարերս :

— Հա՛ սա ծերուկը , ձեր բնկերութեան  
անդամը :

— Այ՛ն նոյն ինքն, արդէն ինքն էր զիս  
 Հոս հրաւիրողը, զիտէր որ ես հիւանդ աե-  
 սութեան անսանձ փափաք մը ունիմ, ու Հոս  
 կան հիւանդ տառապեալ բոյրեր, վանցի  
 բոյրեր, վիրաւոր ցաւազար եղբայրներ, իրեն  
 թեւադրութեամբ ես սիրով Հոս եկայ: Հիմա  
 հարցուցի իրեն թէ Հոս զիս ճանչցողներ  
 կան: Կարելի է ըսաւ. ուստի նայէ՛ Աբուս,  
 ամէն ճարտիկութիւն բանեցընենք շի մաս-  
 նուինք:

— Հայկանուշ կեցիր բիշ մը, ես այդ  
 խումբին ուշադրութիւն շի դարձուցի, հիմա  
 ես ծածուկ մը կը զիտեմ կը տեղեկանամ  
 որ իրօք ճանչուորներ կան թէ ոչ: Խմին  
 աչքիս ճանչուսր շի զարկաւ:

Գնաց ուշադրութեամբ զննեց այդ խումբը,  
 իր յատուկ ու ճարտիկ բնութեամբը աչքի  
 անցուց զամէնբը. ու դարձաւ, ապահովացուց.

— Հայկանուշ, ապահով եղիր, զու չես  
 մասնուիր, զբեզ ճանչցող շի կայ:

Հայկանուշ ուրախացած, արագարար  
 սանդուխներէն վեր թռաւ: Կամարակապ  
 պատշգամներու մէջ խոնուած էին շատ մը  
 վանցի հայ բնատնիքներ, շատերը այն ցուրտ,  
 սասուցիկ եղանակին՝ առանց վերմակի, ա-  
 ռանց ծածկոցի կը բնանային, շատերուն  
 զգեստները հազար կարկտանով ծածկուած



չալեր էին, սաուրնին, կուրծքերնին, բազակնին մերկ։ Ամբողջ երկայն սրահը մէկ սորմեղի խզէ լապտերով լուսաւորուած էր. գաղթականներուն գերեզմանական սրահները կը լուսաւորուէր այդ կաթիլ մը լոյսով, բայց հոն կաթիլ մը գութ շկար. սարսուղները վարը սրախ էին, անտարբեր վերի սարսուղ սրահածներուն. ժողովուրդը թշուառութեան ասին չի մոռնար զուարճութիւնը, և այդ բնութեամբ կ'ուզէ թմրեցընել չաղբատութեան կսկիծը։

Տասապեալներու այդ սրահին մէջ շատ անկիւններէն հառաչներու մեղմ վայնասուն մը կը լսուէր. աղաքներ իրենց ծնողաց պլուսած կը բնանան, մանուկները սեղմուած են իրենց մօր կուրծքին։ Հայկանուշ պահ մը խիտ յուզուած բարացաւ, յետոյ հետուէն սուր հառաչ մը լսելուն, սթափեցաւ, դիմեց հոն։ Քսանըհինգ տարեկան երիտասարդ մըն էր ճաւացողը, ան աշուրները գործուց իր բովը մօտեցող երկու օտարականներուն։ Հայկանուշ, մշտելով Ալուսին.

— Աբուս, ճրագը մօտեցուր։

Հայկանուշ տեսաւ երիտասարդին աղերսող աշուրները, անոր խղճալի գիրքը. անոր չիւծած ալտերը, վրան լաւ տպաւորութիւն չի թողուցին։ Մօր մը բնատանի գթութեամբ հարցուց.

— Եղբայր, ինչ է ցաւդ :

— Ծննդ, շննդ, կը խղզուիմ...

— Հայկանուշ գրականէն հաննեց կրծաւ  
դէտ եղջիւրը. հիւանդին կուրծքը ուշադրու-  
թեամբ զննեց. և դարձաւ Արուսին, խիստ  
ախարհ շեշտով ծածուկ մը փափացց.

— Չայնը խոստա է, շատ խոստա. թե  
բախտը այնքան յառաջացած է որ դարձաւ  
նեղը անհնարին է: Մէկ շարթուան կեանք  
ունի: (Յեցոյ հիւանդին): Եղբայր ես բեզի  
հիմա դեղ կու տամ, դու աւելի լաւ կը շնչես:

Պայուսակէն հաննեց տուաւ անփնաս դեղ մը.

— Աս խէ, հանդիսա կ'ըլլաս:

Ու Արուսին դարձաւ բուռ.

— Արուս, տուածս մխիթարութեան դեղ  
մըն է, անկարելի է այս տառապեալը հոս  
ձգեմ. նայէ, սա սրահին մէջ կայ պարագ  
պատասպարուած սենեակ մը. հիւանդը հոս,  
այս բաց պատշգամին մէջ, կը ստոի և ոչ  
այս դիշեր կրնայ հանել: Ըարէ, բան մը  
ճարէ:

Արուս գնաց անձամբ բննեց սենեակները.  
վեց բայլ անդին գտաւ հատ մը, ուր կար  
ունելոր ու կորովի ծերունի մը. տարածուած  
տաք մինտերին վրայ, թմբած կը մտածէր.  
Արուս իր ստիտրական արխութեամբ և առանց  
խղնելու բարեւեց ու խնդրեց.

— Աղա պապա , երկնքի սիրելի առաջարկ մը ունիմ :

— Աղջիկ դու սիլ ես :

— Աննշան աղախին մը , հոս եկեր եմ գաղթական հիւանդները մխիթարելու . իմ սիլ ըլլալս նշանակութիւն շունի , ես քեզի կարեւոր խնդիր մը ունիմ . կ'ազաչեմ , հոս երկու անկողին աւելի կը աւանեմ , դուքսը կը գանուի շատ ցաւալի երիտասարդ հիւանդ մը . որ եթէ հոն բացօթեայ մնայ , անտարակոյս այս գիշեր փայտ կը կարի . անոր խղճալի կացութիւնը ինձ իմացուց այցելու բռնիկ մը . կը խնդրեմ այդ հիւանդին անկիւն մը շի զլանաք :

— Աղջիկ դու սխալ տեղ եկեր ես : Էս ծեր եմ , անհանդիստ շեմ կրնար ըլլալ : Գնա , փնտռէ օւրիշ սենեակ մը . իջեւանին մէջ սենեակ պակաս ...

— Աղա պապա ամէն կողմ բռնուած է , միայն հոս պարսպ է . միայն հոս կարելի է պատասպարել խեղճը :

— Շատ աղէկ . բայց ես գիտեմ այդ ըսած երիտասարդից հիւանդութիւնը : Հէ , կեանքը թանդ է թանդ . ինչպէս կ'ուզես որ ես զայն բախտ աւանեմ , ինչո՞ւ ատողջութիւնս վատնուեմ . Աստուած իրեն համբերութիւնը և իմին ալ ատողջութիւնս երկարէ ...

— Ազա պապա մի վախեր, անոր հիւանդութիւնը ծերերուն և ոչ իսկ հարբուխ կը պատճառէ. այժ շատ լաւ. դու գիտես որ ան թորախտաւոր է. բայց արդեօք չե՞ս գիտեր որ թորախտին ճճիները ծերերուն թուրքին մէջ սննեակ չեն դաներ ...

— Մ'երկնցըններ, այդ Բ'նչ լեզու. հեռացիր դուրս ելիր:

Աբուս հեռանալով.

— Անգութ ծեր. հոգի կուրծքէդ դուրս չելած, դու լաւ քու առողջութիւնդ. այսքան ապրեցար չի կշտացա՞ր ...

Հայկանուշ հիւանդին քով նստած կը խօսէր ու կը մխիթարէր. Աբուս եկաւ, մերժումը յայանեց: Տխրեցաւ Հայկանուշ. և Աբուսին հետ հեռացաւ, հոս հոն թափառելով վերջապէս գտաւ լաւ ծածկոց մը, զայն բերաւ տարածեց հիւանդին վրայ. պատասխարեց խեղճին սառած մարմինը. անոր առողջապահիկ զգուշութիւններ պատուիրեց և հեռացաւ:

Յրատուութեամբ հիւանդացածներ շաւկային, բայց մեծ մասը բուժելի, անվտանգ. խղճալի էր վիրաւորեալներու դիրքը. Հայկանուշ մեծ խանդավառութեամբ սկսաւ առնուն այցելել: Երկար ատեն նստաւ իրեն հասակակից նոր հարսի մը քով, խեղճը

սրտածմլիկ զիրք մ'ունենալով հանդերձ սկսաւ Հայկանուշին հետ խօսիլ և ամէն մէկ խօսքին երկար հառաչ մը կ'արձըկէր: Հայկանուշ կը խնդրէ.

— Քոյրս, պատմութիւնդ վերջը, հիմա թող սր վէրքդ դարմանեմ:

Այդ հարսին մէկ թեր ուսէն կարած էր. Հայկանուշ լուաց, խնամքով դարմանեց զայն. հիւանդը զարհուրելի սղորով ճուաց. մերձաւորները կը յուզուէին ու կու լային, և ամէն կողմէն կը լսուէր ... խեղճ հարս, խեղճ Սիմա, մեղք քեզի կարին՝ Սիմա ... Ողբի կսկիծի այս սփոփիչ մրմունջը աղօթքի օծումով արձագանդ կու տար: Հիւանդին ուսէն սկսաւ վազել առատ, սեւ արիւն մը, զայն ցամբեցընելը շատ դժուարին էր. Հայկանուշին կարեւոր իրեր կը պակասէին. սակայն ամէն ջանք տարաւ ու առջեւը առաւ, ամէն բերած լաթերը արխնոտ աղատաած էին, ալ լաթ չէր մնացած. Աքուս իր մէջքի մաքուր գոգնոցը հանեց, տուաւ Հայկանուշին որ անով կապէ հիւանդին վէրքը: Հայկանուշ առանց տատամսելու, համբոյր մը տուաւ Աքուսի երեսին, և մխիթարուած սրտով պատեց վէրքը: Յետոյ զհիւանդը խրախուսեց.

— Քոյր, բաջալերուէ. հիմա վէրքդ վրտանդէ աղատած է, քեզի համբերութիւն և

արիութիւն կը մաղթեմ: Ես վրան զեղ մը  
դրի. հիմա ցաւ շեռ զգար: Պատմէ՛, գիւցազ-  
նականն է այդ վէրքդ թէ պատահական:

Սիմա մէկ բազուկով պլլուեցաւ Հայկա-  
նուշին, համբուրեց երկար համբուրեց անոր  
այտերը ու լալով սկսաւ իր պատմութիւնը:

— Մեր կարաւանը Խոշօղլանի աւազակ-  
ներուն հետ ընդհարում մը ունեցաւ. կեան-  
քի կոխ էր, պատիւն ալ մտածելու էինք:  
Մեր կարիճները, կատաղարար պաշտպանե-  
ցին զմեզ. մենք շատ զոհ չունեցանք. հինգ  
կարիճ միայն նահատակուեցան, անոնց մէջ  
էր խմին մարդս, երիտասարդ Չատիկս, երբ  
անոր գլուխը գնդակներով ջախջախուեցաւ,  
մրէժինդրութիւնը զիս բռնկեցուց. Չատիկի  
ձեռքէն բաշեցի սուրը և իր սպանողներէն  
մէկը գետին փռեցի, երկուքը միրաւորեցի,  
ինծի օգնութեան հասան Տօա եղող քոյրերս  
և եղբայրներս. ազատեցայ կուռի գաշակն,  
մէկ բազուկս և հոգեոյս լոյս Չատիկս միայն  
հոն մնաց:

— Ապրիս, դու շատ ապրիս Սիմա, Աս-  
տուած աչքիդ լոյս՝ հոգեւոյսիդ հոգին լու-  
սաւորէ. բաջ գանուեր ևս. հիմա բաջարար  
համբերէ այն կսկիծին՝ զոր կու տայ խիզա-  
խութեանդ վէրքը. համբերէ, կ'առողջանաս:  
Մնաս բարով քոյր, Աստուած ու բաջու-

թիւնդ բեզի հետ ըլլան. ես կ'երթամ քու միւս բոյրերուդ և եզրայրններուդ վշտերը սփռփելու :

\*

Երբ Հայկանուշ կը շարունակէր իր այդ բռնկական այցելութիւնները, Հայրը խոտոված անկողինին մէջ նստեր կը նայէր ծերու մը երեսը : Քունը գլուխն էր. ծերէն լսելով Հայկանուշի նոյն ատենուան այդ փախստական այցելութիւնը, բոլորովին այլայլած ինքն իրմէ գուրս ելլելով կրկին կրկին կը հարցնէ.

— Ծերուկս, կառանկ կ'ընես, բերած գուժդ ի՞նչ է. ըսէ՛, ես կարծես կ'երագեմ...

— Աղա, մի խոտովիր. պատահածը մահ չէ, կործանում չէ. աղջիկդ իր Արուսին հետ հրապարակին իջեւանին մէջ գաղթական հայերուն այցելութիւն կու տայ :

— Բայց այս ատեն... այս ժամնու, ի՞նչ բարեկամներ, ի՞նչ գլխացուեր, այդ ի՞նչ անիծեալ ընկերութիւն է, հէ՛ գու ալ յանցաւոր ես, այս գու ալ...

— Աղա՛ մինչեւ հիմա բեզի անհատաւորիմ եղանկ : Ինչո՞ւ այդպէս կը խօսիս :

— Մ'երկնցըներ, կարուկ պատասխան տուր. Հայկանուշը հիմա հոն ի՞նչ այցելութիւն է որ կու տայ :

— Աղա չըսի՛. գաղթականներուն կ'այցցելէ, ահա երկու օր է որ անոնք հոն իջեաւներ են, ոմանք կը պարեն, ոմանք կը հանգչին. գաղթականներու գործը ինչ:

— Աղան երկինք կը նայի, խաչակներէ լոյլ, կը հառաչէ.

— Չարխափան, Չարխափան... էհ, Հայկանուշն ալ պարելու գնաց ...

— Պարելը շեմ գիտեր, ես միայն զինքը հոն տեսայ:

— Ախ, ծունը դլխուս, այս ինչ անուանարկութիւն, սէ ես շեմ հաւատար խօսքերուդ. Հայկանուշը իր պատուին տէր աղջիկ մըն է ... սակայն ես մինչեւ որ եղելութիւնը չի ստուգեմ, ինձի համար գիշերս գծսիք կ'ըլլայ:

Վրան կ'առնէ մուշտակը, աճապարելոյ կը կանչէ ծառան: Յետոյ դառնալոյ ձերուն, կ'ըսէ.

— Էս ծառան հիմա կը խաւրեմ այդ իջեաւներ, ամէն բան կ'իմանամ և աղջիկը շուտով հոս բերել կու տամ:

— Բայց աղա խնդրեմ, ես չի մեկնած Հայկանուշ չի գայ, այն ատեն ինչպէս կ'ուզես որ ես քեզի հաւատարմաբար հաղորդեմ աղջկանդ գործերը:

— Կերուկ դու մի վախնար, Հայկանուշ



Հոս շահասած, գրեզ կը ճամբեմ: Ի՛նչ, ուրիշ հաղորդելիք ունի՞ս:

— Այո՛ մէկ քանի բան, բայց կ'աղաչեմ քեզի հաւատարիմ՝ ըլլալուս կասկած մը չի տաս:

— Ապահով եղիր, դու վարձքդ կ'առնես. ս'հ առանց քեզի ես ի՛նչ պիտի ըլլայի, աղջիկս իր ազատ մտքով ով գիտէ ծածուկ գետ ի՛նչ քայլեր պիտի առնէր: Ապրիս ծերուկ, ապրին:

Նրառան ննջասենեակի առջեւ կանգնած՝ սարկային զիրքով բարեւ բռնեց ու կեցաւ: Աղան զայն տեսնելուն հրամայեց.

— Յուսիկ, կը բնանայի՞ր, այդ ինչ ապշութիւն է, գիշեր ատեն Հայկանուշ և Աբուս ծածուկ փախուստ կու տան, անէն կը հեռանան և դու կո՛յր կը մնաս. հէ՛... ես քեզի քանի՞ անգամ պատուիրեցի որ զօրծղ արթնութիւն պիտի ըլլայ. եթէ քու տեղդ կատու մը դոնապան դնէի, այդ ապերախտ կենդանին քեզմէ շատ աւելի երախտազէտ կ'ըլլար, քեզմէ շատ աւելի արթուն, տանս մէջ ամէն բան կը սատահի, շատ անախորժ բաներ, դու թմբած, դու ողորմելի պառաւ հաւու մը պէս խոհանոցիս կուտը ուտելուն միայն կը ծառայես ...

— Տէր, ծառանիդ պատրաստ է ձեր հրա-

մանին. գլուխս շատ կը ցաւէր, այս գիշեր  
ես շուտով պահկեցայ . . .

— Հոս պանդոկ չէ, հոս ծառայելու տեղ  
է. ես գլխի ցաւ չեմ գիտեր, դու բու տեղդ  
ուրիշ մը կրնայիր պահտպան գնել. պար-  
տիզպանը հոս չէր . . .

Յուսիկ լռեց, և վայրկենական լուսփեան  
վերջ տուաւ ազան.

— Յուսիկ, եղածը եղած է, բեզ տես-  
նամ, յանցանքդ կրնաս բաւել, եթէ երթաս  
հրատարակի իջեանը, հոն պիտի բլլան  
Հայկանուշ և Աբուս, ապրիս եթէ կարենաս  
իրենց մասին տեղն ու տեղը ինծի լուր բե-  
րել. բայց ուրիշ կարեւոր պատուէր մը ու-  
նիմ. գիրենք գանալուդ, ըսէ Հայկանուշին  
որ հօրը հրամանն է, շուտով թող տան  
գաննայ: Եթէ բեզի հարցնէ թէ ինչպէս ես  
խնայայ արդ փախուստը, լուսփեան պահէ,  
այս ձերուկին համար բնաւ կասկած մի տար,  
թէ ոչ վաղը դու այլ ես իմ ծառաս չես . . .

— Աղա ներէ . . . հիմա կ'երթամ հա-  
ւատարմարար կը ծառայեմ ու կը բաւեմ  
յանցանքս:

Յուսիկին երթալուն, ձերուկը կը մօտե-  
նայ Հայկանուշի հօր, ու ցած ձայնով  
կ'ըսէ:

— Աղա ունիմ նամակ մը:

— Ի՞նչ նամակ, վաճառման Հայկանու-  
շին ...

— Ո՛չ, Հայկանուշ այս կէսօրին յանձնեց  
զայն վաճառման յանձնելու համար:

— Հա՛, զեւ շէ մոռցած իր վաճառմը:

— Ո՛չ, ոչ, ամէն անգամ զիւղ երթա-  
լուս, քու մասից վաճառման շատ գանդա-  
ներ կը հաղորդէ, սակայն ես քեզի հաւա-  
տարիմ մնալով, վաճառման բնաւ բան չեմ  
հաղորդեր, ու հակառակը կը խօսիմ:

— Ի՛հ, հաւատարմութեանդ կասկած  
չունիմ, բայց տեսնենք, սա իմ հիւանդ  
Հայկանուշս նորէն ի՞նչ երազներ կը տեսնէ:  
Նամակը բանալով, կը կարդայ.

— «Վաճառմ քու այսքան ամուսն  
լուծիւնդ զիս մօտեցուց յուսահատութեան  
անդունդը, ուրիմն քեզմէ ալ պիտի լքուած  
մնայի ... կենացս վերջ տալու յետին վճի-  
որ կ'ուզեմ . . . որոշել, բայց կը սոսկամ,  
մահէն ... ոչ, կը սոսկամ որ զազափար-  
ներուս ներհակ քայլով գերեզմանին կը մօ-  
տենամ, կը սոսկամ որ դու, Արմաւենին ե  
ամբողջ ընկերութեան անգամները կը զար-  
գացրնէք մեր կրթական գործը, կը սոսկամ  
իմ մոռցուցած ժամանակէս, կեանքս նեխե-  
ցաւ, գարշանք մըն եմ ալ, ս՛հ ե ինչո՛ւ զեւ  
ապրիմ . . . կրթական գործը սկսանք մի ե

նայն հրատապ եռանդով, դուք գիւղեր լուսա-  
 ւորեցիք, հիւանդանոցներ շինեցիք. հիւանդ-  
 ներ առողջացուցիք, Եւրոպայէն աշակերտներ  
 կը հասցընէք, իսկ ես . . . սէ հ ես ալ գիւ-  
 ցազն եղայ . . . գիցա՞զն — ամբողջ հինգ տա-  
 րուան մէջ հինգ փոքրիկ բոյրեր կրթեցի,  
 ընկերութեան հասցուցի երեք բժիշկ, երկու  
 գեղագործ . . . կը սոսկամ, այժմ կը սոսկամ,  
 այսչափ եղաւ իմ բուն եռանդիս և իղձերուս  
 պատուները. սէ անոնք ալ սրբան ահու-  
 դողով հասցուցի. ծածուկ, հօրմէս ծածուկ  
 դասեր տալով . . . Տես վահրամ, նայն իսկ  
 դաս տալը հօրմէս արգիլուած է. ան նա-  
 խատինք կը համարի վարժուհի ըլլալ: Ախ  
 ես ինչպէս շանիծեմ ազնուականութիւնս,  
 սէ, այս տեսակ ազնուականութիւնը կոպիտ  
 բռնակալութիւն է, ու աւանդ որ հայրս ա-  
 մենէն մեծ բռնաւորն է: Էհ, այդ բռնաւորը  
 օր մը պիտի սղբայ իր բիրտ բռնաւորութիւնը,  
 սակայն ի դուր, իր արցունքները պիտի  
 բաւեն մեղքերը. կեանք պիտի ստն այն  
 գիտկին որ բիշ օրէն վհի մը մութ խորշե-  
 բուն մէջ պիտի հանդչի . . . Ես յուսահա-  
 տութեան ճիրաններուն մէջ, ես անձնաս-  
 պան . . . Էհ խիզախութեան օրեր, ես՝ որ  
 կեանքիս ամբողջ թշուառութեանց վրայ կը  
 ծիծաղէի, ու կսկիծներս կը հաւեցընէի խրոխ-

առթեանս կրակով. ես այսքան թուլցած, այսքան լքուած ... խղիղախութիւն, արհամարհութիւն, խրոխտութիւն, է՛հ սէր թոան ալ իմ երեւակայութեանս ողեղէն գիւցաղները ... Վահրամ գուցէ նամակս կարդալուդ, գու ափսոսալով ըսես — խեղճ Հայկանուշ, հիւանդ է գաղափարական սիրահարս — ու գուցէ լսու Սայր վաց, լաց վրաս, ու ... մի սոսկար ... յախտեանականօրէն լաց ... Մնաս բարով, շեմ գիտեր, ժամանակ պիտի ըլլայ, ուրիշ անգամ առիթ պիտի ըլլայ, պիտի ըլլայ ժամանակ, որ յախտեանականօրէն կարենամ քեզի գրել վերջին « սեւ գիշեր բարին » ... Ընկերութիւնը, իմ սիրելի ընկերութիւնը թող չի մոռնայ իմ յիշատակս, թող չի մոռնայ որ հայր մը իր աղջկան գաղափարները, սուրբ գաղափարները խղղեց. ես ընկերութեան կոյս նահատակը՝ յուսահատութեան գերեզմանին մէջ թաղուած պիտի փտիմ, պիտի որդնտաիմ ... Բայց գիտեմ՝ գիտիս ձեզի զգուանք չէ. Վահրամ հառաչներուդ օրհնութիւնը պիտի օձէ գերեզմանիս ձորը, և ստուեր մը եթէ ունենամ ան պիտի չի հեռանայ երեւակայութենէդ . . . »

Հայրը նամակը այլ ես առաջ չի կրցաւ տանիլ. հառաչեց գողգոջուն.

— Այ ծերուկ, այս ի՞նչ նամակ է. Ս. Չարխափան հասն օգնութեան. ծերուկ, ես կայծակնահար կ'ըլլամ. ծերուկ, խորհուրդ մը տուր, ի՞նչ ընեմ, ես աղջկանս պատիւը պահելու համար ամէն ջանք ըրի. է՛հ հիմա, հիմա, եթէ վճուր է անձնասպան ըլլալ... ս'հ ի՞նչպէս կրնամ միտքը փոխել. ես շուտ-րաժ եմ . . .

— Միակ դարմանն է . . .

— Ըսէ՛ ս'ր . . .

— Միակ դարմանն է ազատ թողուլ զինքը . . .

— Ազատ այդ հասակին աղջիկը, ազատ . . .

— Աղա՛, կը ցաւիմ վիճակիդ, ես այդ ազատութեան մէջ միայն կը տեսնեմ ընտանեկան տխուր կացութեանդ փրկութիւնը. Ներէ՛, հիմա կրնայ զալ աղջիկդ. ես պէտք եմ հեռանալ. Աւրիշ կարեւոր բան մը, պատուէր մը ունիս . . .

Ազան բսակէն կը հանէ երկու ոսկի.

— Ան հաւատարիմ ծեր. Աստուած տունդ այս փորձանքներէն ազատէ. ախ եթէ կարենայիր այս ձեր ընկերութեան արմատը շորցընել . . . է՛հ այն ատեն կ'ազատէր աղջիկս . . .

— Աղա, մեր մէջ ընկերութիւնը երկար

կեանք շունի, համբերէ այն ալ կ'ըլլայ .  
հիմա մնաս բարով :

Ե .

**Վ ԱՀՐԱՄ** ալ հերիք է . նայէ առող-  
ջութեանդ, ոչ քան ունիս ոչ հանգիստ, վար  
զիր դրիշդ, բերանդ բան մը զիր, խօսէ, բիշ  
մըն ալ ընտանեկան յարկին տակ մտիր ու  
այրէ :

— Մայր, թող զիս ազատ . գործերս  
ստիպողական են . ստամոքսի պահանջը եր-  
կրորդական է . համբերէ, ես քեզի հետ խօ-  
սելու ժամանակ կը գանեմ . դու ուրախացիր  
երբ ես կը գործեմ գրչով կամ թափառե-  
լով զիւզէ զիւզ, դառաններէ դառա . ահա  
կը տեսնես որ ես այժմ շատ միտիթարուած  
եմ . ես ուրախ եմ . անտարակոյս իմ սփո-  
փանքս հաճելի է և քեզ :

— Շատ լաւ Վահրամ . բայց անյազարար  
գործելդ, անսանձ աշխատանքդ քեզ տուժել  
կու տան . դու գեռ անփորձ ես . տաք արիւնդ  
զքեզ կը մզէ և դու կուրօրէն մտիկ կ'ընես  
եւանդիգ . այո՛ գովելի է անձնատուէր փութ-  
կոս գործունէութիւնդ, կը սիրեմ ազգասէր,  
կրակոս ժրութիւնդ . բայց կը վախեմ որ դու

չի կարենաս ստկալ, ու վախա կազմուածքդ  
հիւժի, աշխատութեանցդ ճնշող բեռան տակ:

— Ո՛չ, ո՛չ. մայր, դու անփոյթ եղիր.  
երխտասարդը ըստ մեր պապերուն՝ ուղտի կը  
նմանի, մենք որչափ բեռ բանանք, այնքան  
աւելի կ'ուժովանք, ու շենք զգար աշխատու-  
թեան ծանրութիւնը:

Այս ընտանեկան խօսակցութիւնը կը  
լսուի Վահրամի յարկին մէջ. այդ անակը  
այլ եւս գրագէտի մը սենեակ դարձած էր.  
կրթական գործի յառաջադիմութիւնը կրկնա-  
պատկած էր Վահրամին գործը: Արմաւենիին  
մեկնելէն փերձը, Վահրամ մոռցաւ իր մագ-  
ձոտութիւնը. Արմաւենիի հոգեցունց բանա-  
խօսութիւնները և Եւրոպայէն խաւրած մտեր-  
մական եռանդուն նամակները, խրատները  
ու խրախոյսները, բաջալերեցին զՎահրամ:  
Սա անդուստ սկսաւ գործել: Լքումը միայն  
զինքը պահ մը պաղեցուց իր եռանդէն, և  
այն օրէն որ ցնցուեցաւ Արմաւենիի մագ-  
նիսացուցիչ խօսքերէն, ան այլափոխուած  
կրթական վարչապետ մը դարձաւ: Ընկե-  
րութիւնը յարգեց, աստուածացուց այդ մշա-  
կուած գլուխը, ամէն անգամ յարգանօք ու  
պատկասելով ունկնդիր կ'ըլլայ այդ համեստ  
ու ընդել աջակցին: Ընկերութիւնը գայն  
ընդունելով իրբեւ իրեն գլուխ ու առաջնորդ



օրէ օր անոր վրայ սկսաւ հիանալ. սակայն վահրամ միշտ կը մերժէ աւագութիւնը. իր բարոզը կ'ըլլայ հաւատարութիւն, և հաւատարութեան մէջ կը նկատէ ընկերական միութիւնը, սէրը, անխղիւի կապը: Եւ այդ սկզբունքը ո՛չ միայն կը բարոզէ, այլ և կը գործադրէ. բարոզներուն հաւատարմութիւնը նախ ինքը ցոյց կու տայ, ու այդ մտղական ձիրքով, բնականաբար ան իր կրթական աւելն անդամներուն անխտիր սրաշտելի կը մնայ: Իր ճակատին բրտինքով վահրամ կը բարուրէ և տան նխթական վիճակը. եղբայրներուն գաստիարակը ինքը կ'ըլլայ. զաշտէն զանաւնուն գիշերները զանոնք կը կրթէ, անոնց կը հաղորդէ անտեսագիտութեան տարրական կարեւոր գիտութիւնը: Ինքը կը մնայ ամուրի, սակայն եղբայրները լաւ հայրեր ըլլալու ճանապարհին մէջ կը զնէ. ազգ ու ընտանիք անոնց սիրցընել կու տայ. և իրենց կ'իմացընէ որ լքումը թշուառութիւն է, իսկ խիզախութիւնը երջանկութիւն:

Փոքրիկ եղբայրը ընթրիքէն վերջը կը մօտենայ իրեն և կը խնդրէ որ ինքը անոր դրածը շարունակէ. վահրամ զգուելով զայն.

— Գարեղին, ինչ շուտ վարժապետ դարձար.

— Հէ. ինչ կայ, տուր գրիչդ ևս գրածդ

առաջ կը տանիմ, մեղք ես, դու գնա՛ս պատան մը հաց կեր։

— Ձէ՛ հոգիս, գրածս ընդօրինակութիւն չէ. կարեւոր պատասխան մը, որուն կը սպասէ քաղքի կրթական ընկերութիւնը։

— Հա՛, ես նամակ գրել չե՛մ գիտեր...

Պարեգին գետ ութը տարեկան էր, շատ սրամիտ, խելացի գեղեցիկ տղայ մը, վահրամ համբուրեց զայն, սիրեց ու ըսաւ.

— Պարեգին, դու նամակ գրել կը սորցիս, բայց հիմա նամակ գրելու տանն չէ. դու գնա՛, անտառին բերանը, մտիկ ըրէ, կը լսուի՛ կարաւանին ձայնը. այս գիշեր քաղքէն պէտք է հասնի բարեկամներէս մին, որ անպատճառ այդ կարաւանին մէջ կը գանուի։

Պարեգին առանց նայելու որ դուրսը մութ է, ազուհաները արդէն կ'սոնան, քաջարար ցատքեց առաւ կոտակին (տեսակ մը կացին), սրինդը մէջքը անցուց. և գործաւ վահրամին ու հարցուց.

— Աղպար, բարեկամին անունը ինչ է. գիտէ՞ մեր տունը։

— Կարաւանին մէջ կը գանես ճգնաւոր Հումակ անձը, այն Հումակը դոր շատ կը սիրես։

Պարեգին թառ գնաց։ Մայրը շատ ու-

բախ էր որ Քարեղին իր այն փոքր հասակէն ցոյց կու տար անվախ, ու խրոխտ սգի մը. վահրամի ակնարկեց.

— Տես վահրամ, Քարեղին կարծես և ոչ մտքէն անցուց գիշերուն երկիւղը:

— Հա, այո՛. նկատեցի. խիզախ է, խիզախ. անոններ բազմը ինչ ցոյց կու տայ. խելք ունի, ուժ ունի և արիական սգի, ես կը ցաւիմ որ զինքը զեռ աւելի կրթելու ու դաստիարակելու ժամանակ չունիմ. բայց անպատճառ չորս հինգ տարիէն կարելի է զինքը արտասահման յղել. հոն կրնայ լաւ մասնաճիւղ մը առնել. ապագան կրնայ իրեն յաջողիլ:

— Վահրամ, այս ինչ նորելուկ բան մը դարձուցիք սա արտասահմանը, և սա մասնաճիւղը. հա, մենք զաւակներ կը բերենք օտար երկիրներու մէջ դարձուց մնալու համար ...

— Ղարխալութիւնը երկար չի տևեր. բաւական է որ զաւակները հայրենիքի կրակ ունենան, անոնք հոն չեն փճանար, կը դասնան իրենց օճախը, կը նստին իրենց ընտանիքին բոլ, օգտակար կ'ըլլան թէ անձին և թէ ընտանեաց: Մայր, մեր ազգը դիզացի է բայց բազարացիէն աւելի խելացի է. ինչո՞ւ Քարեղինի պէս խելացիներու միաքը

խղղուի դաշտերու խաւար սղխաութեան մէջ, ինչո՞ւ ազգը միշտ մշակ մնայ, գիտես թէ այդ սղապենական վիճակը, այդ հովուական կեանքը մեզի սրբան աննպաստ է: Ահա գետ Եւրոպացին կը կարծէ թէ հայը վայրենի ազգ մըն է, բիւրտերէն շատ ցած, գիտութեան անընդունակ ազգ մը. ինչո՞ւ, վասն զի մինչև ցարդ մենք մեր ամէն գեղեցիկ յատկութեամբ հանդերձ, շուգեցինք յեղաշրջել մեր կացութիւնը, ուղեցինք դութանով ու բահով սպրիլ: Եւրոպան կորուստի աշխարհ նկատեցինք, Եւրոպան գծտիք համարեցանք, և ուղեցինք անոր լոյսէն հեռի մնալ, ու կեանքը յեղաշրջող կազդուրիչ միջոցները շքնդունեցանք: Մենք անձանօթ մնացինք, և այդ անձանօթութիւնը մեզի համար մահ կգաւ. հիմա մենք կը մտածենք դարձանել մեր սխալը, պէտք է ճանչցընենք մենք զմեզ, այս կ'ուզենք որ Եւրոպան ճանչնայ զմեզ. ճանչնայ որ վայրենիներէն շատ վեր ազգ մըն ենք և աւելի Եւրոպացիին մօտ և իրենցմէ ալ վեր ազգ մը, մենք եթէ յետամընաց ենք, այդ մեր կզգիացումէն առաջ կու գայ. հիմա Եւրոպայի ուսանողները Հայաստանը կը կապեն լուսաւորութեան աշխարհին հետ. ուսանողները սխաի ճանչցընեն հայութիւնը, ուսանողներու ընդունակ ու

յառաջագէմ գլուխները պիտի խնայենն  
Եւրոպային, որ հայր իրեն զաւակներուն պէս  
գիտէ գիտել և սիրել լոյսը, յառաջագիմու-  
թիւնը, կրթութիւնը, գիտէ սիրել անասա-  
կան և բաղաբաղական զարգացումը ...

— Է՛հ, տղան, այս ի՞նչ երկար բարոզ,  
ինքզինքդ ո՞ւր կարծեցիր, բաւական է: Հայ-  
աստան և Եւրոպա բաները մէյքը բերնէզ  
չելլան, ա՛լ անոնց վրայ կարելի չէ որ զսպես  
անզուսպ բերանդ, թութակի պէս կը ճառես  
անոնց գովեսար: Գու բու համոզումդ ունիս  
ես ալ իմն:

— Բայց, մայր, դու դեռ նահապետական  
զաղափարներով կը մտածես:

— Այո, և դեռ նոյն զաղափարներով  
կ'ուզեմ մնալ: Ես համոզուած եմ որ մեր  
առաջին կեանքը աւելի լաւ էր, աւելի Աս-  
տուծոյ հաճելի, առաջ մեր օճախները օրհ-  
նուած էին, մեր օճախները չէին մարեր.  
Հիմա՛, հիմա Աստուծոյ օրհնութիւնը չենք  
տեսներ. Եւրոպայէն հայուն զաւակները մէկ  
մէկ անկրօններ կը դասնան, և ի՞նչպէս կ'ու-  
զես որ Աստուած օրհնէ այդ գիտուններուն  
օճախը: Է՛հ ես ալ երբ սկսիմ այդ ուսա-  
նող բուած գիտուններուդ պատմութիւնը, ար-  
գեօք վերջ կ'ունենայ ... Այո՛ ես գիւղացի  
կին մըն եմ, գրբէ, գրչէ գրկուած մայր մը,

բայց բիշ շատ բաղաբացի գիւղերնեքէն իմացեր եմ այդ բու գոված ուսանողներու պատմութիւնը : Է՛հ ազատ . կարծես ամէն ուսանող բեզի՞ պէս կը մտածէ ու կը գործէ . . .

— Մայր, ես ուսանողներու անհատական պատմութիւնը նկատողութեան չեմ առներ . այս երբէք անոնց խայտառակ կենցաղը չեմ կրնար գովել . բայց թէ ինչո՞ւ ես մեր ազգին բարոյն համար ուսանողներու գոյութիւնը անհրաժեշտ կը համարիմ, ասոր պատճառը դու և բեզ նման ուրիշ շատեր կարող չէք բմբոնել :

— Ինչ որ ալ ըլլայ, ինչ զօրաւոր պատճառներ ալ որ ունենաս, այդ փոյթս չէ . ես իրին կը նայիմ, ու գործէն կը դատեմ : Ես բեզի պէս գիրք չեմ կարդացած , Եւրոպա չեմ պտրտած , սակայն փառք Աստուծոյ գատելու կարողութիւն մը ունիմ, այն մէկ բանի ուսանողները որ հոս գիւղ կու գան, կրնամ անոնց կենցաղէն հետեցընել, թէ ինչ է հայ ուսանողութիւնը : Ատոնք ո՛չ կրօնք ունին, ո՛չ ծնողասիրութիւն , ո՛չ պատիւ և ո՛չ իսկ ազգասիրութիւն : Ո՛հ , որքան միամիտ պիտի ըլլամ, երբ այս տեսակ արարածներու վրայ դնեմ Հայաստանի յոյսը . . .

— Բայց մայր, երբ ամէն ճիգն թափելով

բարեհշրջենք ուսանողներու այդ սխուր բար-  
բը, և երբ ջանանք զանսնք օրինաւոր ինք-  
նաձանաշութեան պատուաւոր շաղկին մէջ  
գնել, և աշխատինք անոնցմէ օգուտ քաջ  
ղեւ . . .

— Վահրամ այդ երազ է:

— Կան երազներ որ կ'իրականանան .  
եթէ կ'երազեմ, ու օր մը պիտի յուսախար  
ձեամբ, փոյթ չէ. աշխատիլը իմ պարտքս է.  
առ այժմ աշխատանքս զիս և իմ բնկերու-  
թիւնս կը վարձատրէ. մենք մէկ քանի տա-  
րուան մէջ շատ միտիթարահան արդիւնք կը  
տեսնենք, և եթէ օր մը պիտի ջլատուինք,  
պիտի քաշուինք մեր յայտերու ծիծաղկոս  
միժնոլորտէն, սակայն գոնէ առժամանակեայ  
օգուտ մը և արդիւնք մը թողած կ'ըլլանք .  
Մայր, լքումը, յուսահատութիւնը մեռելու-  
թիւն է. ո՛չ, ո՛չ, գեռ գերեզման շիջած, մենք  
պէտք ենք զիմադրել կենաց պայքարին տհա-  
լի զօրութեան, կեանքը յանդուզն, ողջամիտ  
յարատեւ գործունէութեան մէջ է: Գու քանի  
որ իմ մայրս ես, չեմ ուզեր որ խորհիս  
ուրիշներու յոսի, յոսեալս գաղափարներով-  
բուական է յուսահատութիւնը. այն յու-  
սահատութիւնն է որ կաշկանդեց հայուն  
ձեռքը, ու զայն լքուած սարուկ մը թողուց  
մինչեւ վերջը: Եթէ սիրելի է սարկութիւնը,

յուսահատէ, արհամարհէ յարատեւ աշխատութիւնը :

— Վահրամ, տայ Աստուած որ ապագան զիս խայտառակէ, կշտամբէ իմ յուսահատութիւնս, ու դու սղասկուած տեսնես քու աշխատութիւնդ :

Մայրը խօսքը վերջացրնելուն, հասաւ Ճգնաւոր Հումակը, հետը կար նաեւ քանրհինգ տարեկան հումակրելի դիմադծով երիտասարդ մը. սա Հումակէն առաջ վազեց սլլուեցաւ Վահրամին. տաք տաք համբուրուեցան. երիտասարդին առաջին խօսքը եղաւ.

— Վահրամ, Աստուած մեզի հետ է. դործերը շատ լաւ կ'ընթանան :

— Վաղարշ, շատ հիասթափած եւ սքանչացած կ'երեւիս. ուրախ եմ որ դաւառներէն ականատես սուրհանդակ մըն ալ յղեր են : Անտարակոյս Աարպատականէն ալ տեղեկութիւններ ունիս : Բայց վայրկեան մը սպասէ, տեսնենք բանրեր Ճգնաւորնիս ինչ նորութիւններ ունի :

— Վահրամ, Հայաստանէն նամակ չի կայ, Արատասահմանէն են բերածներս :

Եւ ծրարէ մը կը հանէ տասնրհինգ նամակ, զանոնք կը յանձնէ Վահրամին : Ճգնաւոր Հումակը վաթսուներ անցած միջա-



Հասակ ծերունի մըն է, կզակը գուրս ընկած, աշուրները նկնդաւոր, ընքուրները թաւ, բիթը աղեղ՝ մինչեւ լայն բերանը երկարած, զգեստները գունատ և կեղտոտ: Բանի ու անընական ծիծաղով մը անուորանքուն բարեւ կու տայ, կը շոյէ Քարեղինը: Հայկանուշի մաանիչ ծերն էր ան. հիմա ներկայ Հայկանուշին սրտին սիրելի վահրամին:

Վաղարշ աչք կ'ընէ վահրամին, որ հեռանայ Հումակը: Վահրամ նախ չի հասկնար թէ ինչ է պատճառը, սակայն Վաղարշի վրայ լիովին համակրանք ու վստահութիւն ունենալով, կ'ուզէ կատարել անոր կամքը: Պարզ ու բնական շեշտով կ'ըսէ.

— Բարի, շատ բարի է ձեր գալուստը բարեկամներս. ձեզի հետ երկար չի խօսած, նախ կ'աղաչեմ քեիչ մը բան զբէք բերանիդ. գուք բազցած պիտի ըլլաք. կերակուրը պատրաստ է, աղքատ ճաշ, բայց ճանտան ճաշ:

Հումակ առանց ընդդիմութեան գնաց բազմեցաւ սեղանին առջեւ, իսկ Վաղարշ սեղանէն հեռու քաշուեցաւ վահրամին քով, չուզեց ճաշել: Քարեղին Հումակին քով իր սուր ձայնով կը խօսէր, կը ծիծաղէր. Վաղարշին համար զատ նպաստաւոր եղաւ Քա-

բեղինի շարանճիութիւնը, ազատ սկսաւ խօսիլ Վաչրամին հետ .

— Վաչրամ, Հայաստանի կրթական դարձն առաջ, ես ուրիշ կարեւոր հաղորդելիք լուր մը ունիմ, ախար լուր մը որ ինչ որ կը գուշակեմ բեզի ծանօթ չէ, և այդ մասին զու մինչեւ ցարդ միամիտ գտնուած կ'երեւիս :

— Ինչ լուր . և ինչ է այդ իմ միամտութիւնս :

— Զգուշացիր Հումակէն ...

— Հումակէն ... որ Ճգնաւորի ածականն ալ կը կրէ : Ինչ, կասկածաւոր է . հաստատուն անդեկութիւն մը ունիս : Գիտցիր սիրելի Վաղարշ՝ զուրիշը կասկածաւոր ներկայացրնելը շատ ծանր և կործանիչ բան մըն է . մանաւանդ եթէ միամիտ փաստերու վրայ շինուած է զազափար մը : Խնդրեմ, մեկին և որոշ յայտնէ եղելութիւնը :

— Վաչրամ, ահա ինչ որ գիտեմ՝ վեց ամիս է որ հոս գիւղի մէջ քաշուած ես . չես գիտեր անշուշտ վարը քաղքին մէջ ինչ կ'անցնի, և ինչ կը գտնուի : Եւ կը լսեմ նոյն իսկ որ այս վեց ամսուան մէջ և ոչ նամակ մը առած ես :

— Այո՛ ճիշդ են բոսածներդ . սակայն այս վեց ամսուան մէջ ինչ պատահեցաւ :

— Անհատաաւարտութիւնը , ժամանակի

խնդիր չէ: Գիտցած ըլլաւ որ ընկերութեան նամակները կը բացուին:

— Ինչ . . .

— Այո կը բացուին, և բացողը ձգնաւոր կոչուած Հումակ արարածն է: Մեր ընկերութենէն դուրս չէզոք անձեր, իմ բարեկամներէս ոմանք աչքով տեսեր են եղելութիւնը, և եթէ անոնց աչքին չես հաւատար, իմին աչուրներս վկայ են:

— Ինչ, դու ալ տեսար:

— Այո, մեր կարաւանը երբ ծովեզերէն ապաին մէկ քիչ հանգիստ կ'տոնէր, Հումակ բաշուեցաւ հասա ծառի մը բունին ետեւ, ևս ուշադրութիւնս շար ծերուն վրայէն չէի վերցընեմ, ծածկուեցայ մացառի մը մէջ և գիտեցի զինքը: Ան գրեթէ ամէն նամակ յատուկ վարպետութեամբ մը հանեց պահարանէն դուրս, կարգաց ամէնը, մէկ բանին պատեց նետեց, մնացածները դարձեալ պահարաններուն մէջ դրաւ: Պատմութեանս ստուգութիւնը կրնան վաւերացընել Հայկանուշ նամակները. . .

— Ձիս կը յուզես, այդ ինչ եղեան . . . Ինչ կը նշանակէ Հայկանուշի նամակները, ինչ . . . իր նամակներն ալ կը բացուին:

— Մեր էր թէ միայն բացուէին:

— Հասցւ . . .

— Մի շուարիբ, գիտէ, Հումակին յանձնած նամակներուն մէջ կը գանաւ Հայկանուշի նամակը :

— Այդ փաստ մը չէ. վասն զի Հայկանուշ արդէն դադրեի է նամակագրութենէ :

— Այ. Հումակին ամէն գալուն ան իր նամակը տուեր է անոր, որ բեզի յանձնէ, սակայն միշտ նամակները իր հօրը կը մատնուին, և հայրը փոխարէն այդ ազատ մատնութեան, լաւ մը կը վարձատրէ նենգաործերը :

Վահրամ կը բննէ հասած նամակները, և երբ չի գանար Հայկանուշինը, ախար հասաչով մը կ'ափսոսայ :

— Այ, խորամանկ շարժեր : Վաղարշ, ստոյգ գիտե՞ս. Հայկանուշ այս սուրհանդակով նամակ գրած էր :

— Այո՛ աչքովս տեսայ, ամենաստոյգ է անդեկութիւնս : Այս գէպքը առաջինը չէ, բարեկամներս նոյնը ստուգեի են ամիս մը առաջ, և առաջին անգամ որ գիտ տեսան, բնտաներար խօսակցելու ատեն առանց մեծ կարեւորութիւն մը տալու, յայտնեցին նաև այս մատնութիւնը. բնականաբար իրենք կը կարծեն թէ մտերմական նամակներ են որ կը մատնուին, վասն զի զեռ բարեկամներս չեն գիտեր որ կայ Հայկանուշով կազմուած

կրթական ընկերութիւն մը . և շին գիտեր  
նայն իսկ թէ ինչ է իմ և բու իրար հետ  
մեր ունեցած ընտանութեան պատճառը :

— Ախ, Վաղարշ, եթէ Հումակին պէս  
մեր կորովի արիւնը ծծող այլպիսի աղատտ  
վամբիրներ, ցեցեր շրջային, հիմա մենք  
վաղուց զարգացած, լուսաւորուած, բու-  
զաքականացած ազգ մը կ'ըլլայինք . մենք  
զաննութեամբ չէինք հիւժեր, չէինք սղբար  
յախտենականօրէն, էհ զեռ քանի որ մենք  
մեր մէջ կ'ապրեցրնենք այլ տեսակ ցեցեր,  
բնական է որ վերածնունդի յոյս շինք կրնար  
ունենալ :

— Բեցերու զարմանք զխրին է :

— Ինչպէս :

— Ձնջելով անոնց ճեար :

— Այդ անկարելի է : Սիրելիս, արիւննիս  
ապականուած է, վաղուց թունաւորուած է  
մասնութեան զարշ թունով : Հաւատա, ինչ  
որ ալ մեզի համար բռնն, ինչ նախաախնք  
որ ալ մեր երեսին նեանն, իրօք կարծես  
իրաւունք ունին : Բայց սակայն դու մի կար-  
ծեր որ խօսքերս լքումի հաւատախիք կ'ըլլան .  
ոչ, փոյթ չէ մասնութիւնը . խոչընդոսաներ  
մեր առջեւ կը ծագին, և զեռ պիտի ծագին,  
մեր ընկերութեան հերոսութիւնը պիտի կա-  
յանայ զիմադրութեան և յարատեւութեան

մէջ : Ինծի թող Հումակի խնդիրը : Ես կը մարբեմ այդ աղատա արարքը : Ան այսօրուրնէ իմ ծուղակիս մէջն է , աղատում չի կայ : Իր մասնութիւնները բնաւ էական վնաս մը չեն կրնար հասցընել ոչ ինծի և ոչ ընկերութեան սեւէ մէկ անդամին , վասն զի ան դաւաճաներ է օրինաւոր գործ մը , արդար աշխատութիւն մը , որ ոչ մէկ տեսանի տոջեւ չի դատապարտուիր : Մեր գործը կրթութեան բարոզութիւնն է , և կրթութիւնը առաքինութիւն է , որով կ'ազնուանայ մարդը , կը բարձրանայ հոգին : Կը տեսնես զիս վրդալիւծ , այն ևս մէկ բիշ յազուած եմ , բայց սպաճառը մեր գործունէութեան մասնուած ըլլալը չէ , այլ այլ մասնիչն է որ զիս կը սոսկացընէ : Կը սոսկամ մասնութեանէն , մանաւանդ երբ կը մտածեմ որ այլ ամենազարչ արարքը մեր ձերունի ու փորձ անդամներէն մին ի գործ դրած է . . .

— Շատ լաւ կը խօսիս վաճառմ , սակայն վճիռ մը չես տար , այն մասնիչը ինչպէս պէտք ես պատժել :

— Ո՛չ , պատժելէն առաջ ևս կ'ուզեմ , որ ինքը իր բերնով խոստովանի իր յանցանքը , ընկերութեան դատաւորը ևս եմ , սակայն պէտք է արդար դատաւոր ըլլամ : Թող ինծի

փրկածինդրութիւնը, հիմա ահա ինքը փերջա-  
 ցուց իր կերակուրը, պատճառով մը դու  
 Հեռացիր, ես մանրամասնօրէն կը տեղեկա-  
 յամ այս տխուր եղելութիւնը, իրօք եթէ բնա-  
 ստելու ախորժ չունիս, դնա հանդիստ առ,  
 փաղն առաու կանուխ սուրհանդակս կ'ըլլաս,  
 ես այս գիշեր կը պատրաստեմ նամակնե-  
 բուն պատասխանը և Հայաստանի բնկերու-  
 թեան կ'իմացընեմ եղելութիւնը, ինծի համար  
 այս գիշեր բուն շի կայ, պէտք է խանդա-  
 բուած գործը փութով կարգադրել, մասնու-  
 թիւնը ինքնին բնաւ կասկածի տեղիք պէտք  
 չէ տալ, սակայն մտածելու ենք որ Եւրո-  
 պայի մէջ շենք . . .

Մերը մէկ բանի բաժակիկ օղի կ'սնծեր  
 էր, շուարած ուղեղով ու դուարթաղին՝ եկաւ  
 նստաւ Վահրամին պարզուկ գրասեղանին  
 աջիւ, սկսաւ ծխել: Բնաւ շի կասկածեցաւ  
 երիտասարդին փրայ, վասն զի երբէք չէր  
 գուշակած որ իր արարքը, իր մասնութիւն-  
 ները կը յայտնուին, սոյորական բնաանի  
 սնով հարցուց Վահրամին.

— Խե՛ր է, արտասահմանէն ինչ լուր:

— Հումակ, դեռ չեմ բացած նամակնե-  
 րը: Անտարակոյս ամէն անգամ հաւատար-  
 մարար կ'աշխատի մարդ ըլլալու և մարդ  
 հացընելու:

— Էհհ. իրաւցրնէ, շատ պարտաճանաչ անդամներէ կազմակերպուած է մեր բնկերութիւնը. շիտակը բսելով կը զարմանամ թէ ինչպէս մինչեւ հիմա այսքան սերտ համերաշխութեամբ առաջ կ'երթայ մեր գործունէութիւնը:

— Ինչո՞ւ կը զարմանաս:

— Կը զարմանամ, վասն զի պատմութիւնը, գէպքերը միայն են մեր ազգին անմիաբանութեան: Չէ որ մեզի համար ըսուած է երեք հայ երեք օրուան մէջ տասուիբեք անգամ կը կուսին, կը պառակտին: Եւ զարմանալու իրաւունք չունենամ: Անտարակոյս մեր հոգեկան պատմութեան կարծեմ իմ հասակովս աւելի փորձառու եմ:

Վաղարշ որ սաք ելած մեկնելու միայն էր, շի կրցաւ զսպել ինքզինքը և ըսաւ Համակին.

— Ծերունի բերանդ խեր բաց. բու այդ փորձառութիւնդ բեզի ըլլայ ... Գիշեր բարի վահրամ ես յոգնեք եմ, թոյլ տուր որ երթամ հանդշիմ:

— Հանդիւր Վաղարշ. մի մրդովիւր Համակի խօսքերէն. ձերերը ունին միակ զեղահաս մը — փորձառութիւնը ... որ յարմար անյարմար առնն ինքնաբերաբար կը ներկայացընեն:



— Է՛հ կ'երևի թէ իրենք ալ իրենց երիտասարդութեան պէտք ունեցեր են այդ զեղահատին : Մէ՛շ, շարժեր ծերերու այդ միամիտ պարծանքին վրայ երկար խօսիլ : Գիշեր բարի բարեկամ, քեզի ալ գիշեր բարի փորձառու ծեր ...

Վաղարշ շատ տաք բնատրուածեան տէր էր. Վահրամի սիրուն՝ ապտակ մը շիջեցուց Հումակի ճաղատ գլխուն . անոր կեղծաւորութիւնը իրեն համար այլ եւս սթգալի դարձաւ . մատնիչ մը իրեն գիմաց փորձառութեան քարոզիչ ... այդ անաւանելի էր. ահա այս մտածութեամբ ան յուզուած մտաւ անկողին :

\*

Մութը կը խտանար, խոր գիշերուան մէջ ահռելիօրէն կ'սոնային աղուեաները . ամէն իրճիթ ճրագը մարած էր . հետու լերանց բարձունքը՝ հոս հոն ամխաղորձ փուռերու բոցը կը փայլատակէր . ձմեռնամուտ գիշերը, անամպ երկինքը հմայիչ աստղերով Արդալիայի վրայ ներդաշնակ խաղաղութիւն մը սփռած էին . սակայն Վահրամի տան մէջ խռովութիւնը կը տիրէր : Հումակ կէս ժամ կը շարշարուի . Վահրամի վարպետ հարցերը զինքը շատ կը նեղեն, ան այնքան կը տագնապի, որ չի կրնար ժխտել բրած մատ-

նութիւնները: Վահրամ շատ կիրթ ու խորամանկ ազնուութեամբ կ'աշխատի որաւայն նենգաւոր ծերը: Անոնք փոփոալով կը խօսին, անդին ննջարանէն ոչ ոք կ'իմանայ անոնց խօսակցութիւնը, Վաղարշ սկզբանէ կը հեաաքքբբութի, անոնց խօսքին ականջ կը դնէ, սակայն բան չի լսեր, և արդէն շուտով աշուրները կը զօցէ կը քնանայ: Հումակ Վահրամի ստիպողական հարցերէն շատագունած, երկար ատեն անպատասխան մունջ կը մնայ: Վերջապէս Վահրամ վճառ կանօրէն կը հարցնէ:

— Հումակ որոշ պատասխան մը ունիս:

— Բարեկամ դու կ'ուզես որ խոստովանիմ... թէ մասնիչ եմ:

— Ուրեմն ի՞նչ կը նշանակէ լոսութիւնդ. մերձէ կասկածները: Ըսէ, Հայկանուշէն ինձի յանձնելիք նամակ մը ընդունեցա՞ր:

— Ոչ. Հայկանուշ ինչ որ պիտի գրէր, ինձի բերնով կը հաղորդէր և ես իր ըսածնեբուն քեզի միշտ հաւատարմաբար սուրհանգակ եղած եմ:

— Հումակ, գարձեալ կը ստե՞ս, ես ականաակ փկայներ ունիմ, որոնք տեսեր են որ Հայկանուշի նամակները դու փոխանակ ինձի բերելու, հօրը յանձներ ես . . . կրնա՞ս ժխտել:

Հումակ այլայլեցաւ. դինով էր, շի կրցաւ մեղքերը պարտելեւ, շի կրցաւ վարպետ պատասխաններով ուրանալ, դարձեալ լոնց, տկոտները սղմած քար կտրեցաւ: Վահրամ այլ եւս ուրիշ դրական փաստերու պէտք չունէր. Հումակ այդ լուսթեամբ արդէն իսկ մասնեց ինքզինքը: Ուրբի ելաւ, մէկ քանի անգամ սենեակին մէջ ժուռ գալով, դարձաւ չար ծերուն:

— Է՛հ ուրեմն . . . ուրեմն բոլորովին ստոյգ էին իմ ստացած այն ամէն տեղեկութիւններս որոնք կը մերկացընէին ըստ մասնըչութիւնդ: Է՛հ ցաւալի ծեր. հիմա առջեւ դու այլ եւս աւերակ ես, մեր ընկերութեան համար փլած շէնք մը . . . Արդարութիւնը կը բողոքէ. ես պիտի կարենամ դիմադրել անոր վրիժառու ձայնին: Գթութիւնը պահ մը պիտի մոսնամ, պաշտօնիս պարտքն է շարերուն գթած չըլլալ: Հումակ պատիժդ դուցէ թեթեւայ, եթէ խոստովանիս յանցանքդ, ուրանալ անհնարին է. այո՛ շեւ կարող ժխտել մասնութիւններդ, դէմքովդ դիրքովդ արդէն ինքզինքդ մասնեցիր, բայց բւրանդ, արութիւն ունեցիր, խոստովանէ յանցանքդ:

— Ո՛հ վահրամ, գիտեմ թէ մեր ընկերութիւնը ինչ ծայրահեղ պատիժներու կը

գիմէ . դազանային է անոր պատուհասը ,  
անինայ է անոր վրիժառութիւնը :

— Ո՛չ , վստահ եղիր իմ պաշտպանու-  
թեանս . բաւական է որ հաւատարմօրէն խոս-  
տովանիս և շուրանաս բրած մատնութիւն-  
թիւններդ . գիտցիր քու խոստովանանքիդ  
պէտք շունիմ . սակայն եթէ կ'ուզես որ վրէժ-  
խնդրութիւնը թեթեւնայ , եթէ կ'ուզես ըն-  
կերութեան , արդարութեան օրինաւոր պա-  
հանջը մեղմանայ , խելք ունեցիր , մի ուրա-  
նար մատնութիւնդ : Ահա վերջնականօրէն  
կը հարցընեմ , մասնեցի՞ր ընկերութիւնը ,  
մասնեցի՞ր իմ և Հայկանուշիս նամակները . . .

Կազմերի կտարած տերեւի մը պէս՝ ծե-  
րուն գլուխը ծոցեցաւ կուրծքին վրայ . օրհա-  
սականի մը թոթովանքով մնչեց .

— Այո՛ . . .

— Մասնի՞չ ես :

— Այո՛ . . . ստակի սիրուն . . . մատ-  
նիչ . . .

— Հումակ մի խոսվիր . վստահ իմին  
խոստմանս . ես քու պաշտպանդ կ'ըլլամ .  
պիտի չի ձգեմ որ եղեանագործութիւններդ  
վարձատրող հրաշէկ գնդակներ տաղեն ու-  
ղեղդ : Կեանքդ իմ ձեռքս է . ես զքեզ պիտի  
փրկեմ . պիտի ասնես պատիժդ . բայց պա-  
տիժ ստատակում պիտի չըլլայ : Ողբի աս ,

բաց աշաղբութիւնդ , մտիկ ըրէ : Միամիտ  
 ծեր , հիմա զո՛հ ես վիճակէդ . . . փորձա-  
 սութիւն բառը լեզուիդ համեմն էր , հիմա  
 այն բա՛ղցր է , թէ թո՛յն . միամիտ ծեր , ինչո՞ւ  
 ապերախտ գանուեցար , շխշեցիր որ քեզի  
 հետ ոչ ոք կրցաւ բարեկամանալ , ամէն տեղ ,  
 ամէն պաշտօնի մէջ կրակ ձգեցիր , ամէն  
 կողմ ապականեցիր , ամէնքը քեզի երես  
 զարձուցին , զու բաղցած լքուած մնացիր .  
 ես ու ընկերութիւնս վրայ գլթացինք , քեզի  
 բարեկամութեամբ , միջնորդութեամբ և պաշ-  
 տօնով օգնութեան հասանք . յարգեցինք զի-  
 սութիւնդ , վարիչ գաստիարակ ըրինք , զու  
 զարձեալ ներքին զազիր ախաերուդ լսեցիր ,  
 շորթեցիր խեղճ որբերու և աղքատ աղոց  
 ստակը . մտխեցիր վարժարաններու գրամա-  
 զլուխը , ապահովցուցիր քեզի յատուկ գրա-  
 մազլուխ մը . խեղճ գանուկ , անմեղ երիտա-  
 սարդներ գլխէ հանեցիր , գայթակղութիւն  
 ցանեցիր , թունաւորեցիր արդար , բնքուշ  
 սրտեր . փլցուցիր մեր շէնքին ամենէն կա-  
 բուոր սխները . և մեր ընկերութիւնը զարձեալ  
 աչք գոցեց , ներողամիտ եղաւ , քեզի յանձ-  
 նեց ընկերութեան գաշտերը , և քեզի յանձ-  
 նեց սուրհանդակութեան ամենէն փափուկ  
 ու պատուաւոր պաշտօնը . . . և կը տեսնես ,  
 կ'ըմբռնես երախտագիտութիւնդ . ո՛հ ինչ տար-

օրինակ ներշնչումներ ունիս. այդ ինչ կեդ-  
տոս, այդ ինչ նեխած արիւն է որ երակ-  
ներից կ'ապականէ: Գու մեր ընկերութեան  
ապականած զիակը . . . ո՛հ կը սոսկամ  
խօսքերէս. իմ բերնէս այսպիսի անազնի-  
բառեր բնաւ չէի ուզեր արտաբերել. բայց  
արդարութեան լեզուն կը շարժի, կ'ուզէ  
կշտամբել արարքդ. արդարութիւնը կ'ըսէ  
մասնիչներուն զթութիւն, ազնուութիւն պէտք  
չէ. պահ մը ես անդում պիտի բլլամ. մատ-  
նիչ, բու մասնութիւններից պիտի շուարե-  
ցընեն մեր ընկերութիւնը, սակայն մենք  
անխոսով պիտի մնանք ու պիտի գիտնանք  
յստաջ վարել մեր գործը: Հիմա մտիկ բրէ  
ինձի և հարցերուս որոշ պատասխանէ: Կը  
խոստովանիս մասնութիւնդ, լաւ. սակայն  
պէտք է յայտնես թէ ինչպէս և ինչ մատ-  
նեցիր. պատասխանդ շուտով և կարուկ աւեր-  
փախուստ չի կայ, զիս գոհացուր, և գիտցիր  
որ ինձի անկեղծ բլլալով, բեզի նպաստա-  
ւոր կ'ըլլաս:

— Վահրամ դու զիս կը կշտամբես. այժ  
շարութեանս խայտառակութիւնը այլևս զար-  
հուրանք է. սակայն, զղջումը արժէք չունի,  
արդարութեան սխերիմ թշնամին եղայ, ար-  
դարներու արիւնը մտայ, փափուկ սրտերը  
պղծեցի, անոնք ալ իմ վիճակիս մէջ զրի,

և անոնց վախճանը ա՛հ, անոնց վախճանը  
զեռ եւս աւելի դժոխային բլլայ . . . կ'ափ-  
սոսամ, կը սոսկամ . . .

— Հումակ այդ զղջումդ, այդ ապաշխար-  
հանքդ ընկերութեան գառնութիւնը չի բաղ-  
ցրացըններ. աւերակն որ ձգեր ես, ապաշխար-  
ութեամբ չի կանգնիր. ապաշխարութեան  
լեզուդ միայն քահանան կը հասկնայ. ես  
այդ լեզուն հասկնալու պէտք չունիմ. իմին  
հարցերուս պատասխանին կը սպասեմ :  
Կարուկ պատասխան . . .

Հումակ այլ եւս ըմբռնեց որ վահրամին  
գիմազրեկը անկարելի է, և թէ իր լուսութիւնը  
աւելի մտանգաւոր. ըմբռնեց որ վահրամ  
ամէն բանի լիուլի տեղեկութիւն ունի, ուզեց  
պարզ բլլալ և խոստովանեցաւ յանցանք-  
ները. բացաւ բերանը և զողբողալով սկսաւ  
դուրս թափել ներքին զարշութիւնը :

— Կարդացեր եմ գաւառներէն և ար-  
տասահմանէն եկած ամէն նամակները, ստակ  
պարունակող նամակները ծածկեր եմ, բո-  
ղոքաղիրները պատուեր եմ. Հայկանուշին և  
բու նամակներդ յանձներ եմ Հայկանուշին  
հօր ու գրամով վարձատրուեր եմ . . .

Վահրամ զսպելով իր բարկութիւնը, իր ի-  
րաւացի գայրութիւնը, անխոտով գիմազծով, հրա-  
մայեց .

— Հումակ, առաջ տար խոստովանանքդ, մի ծածկեր, խնացար արդէն որ ես արարք-ներուդ լիովին տեղեակ եմ. անկեղծ եղիր զոնէ այս փլամ վիճակիդ մէջ : Արիացիր, բաջութեամբ խոստովանէ յանցանքներդ . յիշէ որ անկեղծութիւնը բեղի նպաստաւոր պիտի ըլլայ :

— Վաճրամ, ինչո՞ւ բժիշկ ըլլալու տեղ դատաւորի բեմը շքնարեցիր :

— Դու հարցերուս ուղիղ պատասխանը տուր . . . Ծեր, ծեր, միամիտ մ'ըլլար. բնքուշ կեղծաւորութեամբ զիս շեռ կրնար սրտալ : Առաջ տար խոստովանանքդ :

— Կը խոստովանիմ զբոլորութիւններս, ոչ ստարին, այլ մեր կասկածաւոր ազգային ազաներուն յայտնի է. անոնց յայտներ եմ մեր բնկերութեան գաղանիքը, և մեր բնկերներուն անունը. ու բնկերութիւնը աւելի բազաբական ներկայացուցեր եմ քան թէ կրթական . . .

Վաճրամ ստեղծով վեր ցատքեց, ահա բիշ մնաց իր փափուկ ու ջղուտ ափերուն մէջ պիտի ջախջախէր Հումակին գլուխը . մոնչելով երկար շունչ մը առաւ, աշուրները բոցափառ, վարդազոյն այտերը կակաշ գարձած, մազերը ելեկարացած, երերուն, խոսովքը ահաւոր և սակայն մէկ քանի ան-



գամ շրջանն բրաւ սենեկին մէջ, նուաճեց  
իր զայրութիւնը և բացաւ բերանը:

— Ո՛հ մասնութիւն չէ միայն, այլ և  
զրպարտութիւն: Ո՛հ զազիր, սասախօս ծեր.  
ինչ էր այդ զրպարտութեանդ նպատակը,  
մեր նամակներուն մէջ երբ շեռ գտած քա-  
ղաքական յեղաշրջումի բնաւ նշոյլ մը իսկ  
և սակայն այդ ահակալի զրպարտութեան գի-  
մեր ևս, դու նենդաւոր, դու մարմնացած  
չարութիւն, դու որ ամբողջ կենօրդ սպա-  
կանութեան, մոլութեան և գայթակղութեան  
կեղտոտ գրօշը բացած, արժանացաւր մեր  
անյիշաչարութեան, արժանացաւր մեր վար-  
ձատրութեանց, արժանացաւր մեր ամենէն  
սպառուաւոր անդամներէն մին բլլալ, ինչ  
սրտով այդ կործանիչ զրպարտութեան գի-  
մեցիր. սէր էր քու խիղճդ, այն էր այն քու  
խիղճդ որ ընկերութեան սկեօղաթիկ անդամնե-  
րուն խիղճ, արդարութիւն, հաւասարութիւն,  
աղօթք, ջերմեհոանդութիւն կը քարոզէիր. սէր  
էր այն քու խիղճդ, որ զգուցիւ կեղծաւո-  
րութեամբ Նարեկէն աւելի մաքուր ու անա-  
բաւ կը ներկայանայիր. սէր էր այն քու  
խիղճդ, երբ ամենէն վայրագ ժամուղ՝ զրպար-  
տութեանցդ ահաւոր վայրկենին, շի շորցուց  
լեղուղ. է՛հ. եթէ խիղճդ, այն քու կեղծ  
սրբութիւնդ քեզի գթաց, զքեզ բոլորովին

միտիմարեց ու չի սոսկացուց, սակայն — մեր արդար ու անպարտ ընկերութիւնը, վրէժ-խնդիր պիտի ըլլայ իր օրինաւոր գատին, Գատաւորը ես եմ, և գատակնիքը որ պիտի վճռեմ, թէ եւ ընկերութեանս բաշտինն գո-հացուցիչ պիտի չըլլայ, սակայն ես հաւա-տարիմ պիտի մնամ խոստմանս, կեանքիդ պիտի խնայեմ, բայց պիտի ընդունիս ար-ժանաւոր ու մեզմ պատիժդ : Հիմա գնա՛, մէկ բանի ժամ հանգչէ, զիս ազատ թող. եղելութիւնը պէտք է նկարագրեմ մեր ըն-կերութեան գլխաւոր անդամներուն : Գնա հանգչէ փառասէր, արծաթասէր, նենգաւոր ծեր, գնա հանգչէ, հաւատա՛ որ կենացդ խնայողը ես եմ :

Վազարշ կը խոկար, բարոյապէս բայ-բայուած ծերը անոր բով գնաց փութեցաւ, բնանալը անկարելի էր. խղճի խայթ, պա-տուոյ խայտատակութիւն, և կրելիք պատու-հասները իր երեւակայութեան գծոխքը կը պատկերէին, հոն ընկած, նեաուած էր իր գիակը, կը շարշարուէր հասաշելով կը սոս-կար : Գիշերուան ժամերը իրեն համար յա-ւիտենականութիւն դարձան, կամաց կամաց արբեցութենէն սթափեցաւ, զեւ աւելի սոս-կալի, զեւ աւելի տանջող, խայթող երեցաւ

իր այն զիբբը. յիշեց զբայարտութիւնները՝  
 որով անուանարկած էր շատ մը արդարներ,  
 մասն էր շատերուն արիւնը, վիրաւորած  
 սպաննած էր շատ երիտասարդներու պա-  
 տիւր, փլուցած էր արժանաւորներու նա-  
 խանձելի ապագան. որոշ որոշ մարէն կ'ան-  
 ցնէր իր այն ամէն խարդախ դարանները,  
 որով կ'որոտար միամիտ սրտեր, կը կազմա-  
 կերպէր անպատկառ կուսակցութիւն մը, ըն-  
 կերութիւնը, վարչական կարգ ու կանոնը,  
 կրթական յաստատարութիւնը ջլտասող այն  
 զգուելի ընկերութիւնը. որուն օրհասակա-  
 նութիւնը, որուն խայտառակութիւնը այն  
 ժամուն այլ եւս սղբալի էր. կ'սղբար թէ  
 իր անձը, և թէ իր գայթակղեցուցած, մն-  
 լորցուցած կորիսնները : Իր կրօնականու-  
 թիւնը թէեւ կեղծ էր, սակայն ունէր կրօն-  
 թի կայծ, որ իր այն վայրկենին արժարժե-  
 ցաւ, ու բանկցուց խիզճը. սա բողոքեց,  
 բսամեկցուց, խայթեց, անգթարար խայթեց :

\*

Վահրամ կէս զիշերը արթուն անցուց,  
 գրեց շատ մը նամակներ, խոսովքի ժամա-  
 նակ գրիչը անսաց տոսջ կ'երթար, միտքը  
 բաց ու բանկած կը գործէր. սակայն գաղա-  
 փարներուն ազդարարին — սղջմտութեամբ  
 հաստատարիմ կը մնար : Նամակները վեր-

ջաջընելուն, զնաց ձայն տուա Վաղարշին. Հումակ թմրած՝ իր ասնջանքներուն զփոխքին մէջ, բանդադուշելով կ'երազէր: Արթնցաւ Վաղարշ, սրուն Վահրամ պատուիրեց որ զայ իր գրասեղանին առջեւ նստի և գրածները կարգայ. պատուիրեց.

— Վաղարշ, ալ յոգնեցայ. ես քնանալու պէտք ունիմ. պէտք եմ մէկ քիչ հանգստանալ. զու հսկէ գրասեղանիս. բունս երկար շի տևեր: Կ'աղաչեմ նամակներս զգուշացուր ձերուն ճիրաններէն:

— Շատ լաւ. ի՞նչպէս, գարշելին խոստովանեցաւ յանցանքները:

— Կարգաւ նամակները, կը հասկնաս: Գիշեր բարի:

Վաղարշ առանձին մնաց, մեծ հետաքրքրութեամբ սկսաւ կարգալ նամակները. անոնց մէջ ձերուն ծանօթ մասնութիւնները շատ այրած շեշտով նկարագրուած գտաւ. անոնց մէջ տեսաւ Վահրամի գատախաղական վարպետութիւնը, հիացաւ ձերուն բերնէն ասած խոստովանանքի նկարագրութեան վրայ. զինքը սքանչացուց այն ծրագիրը, որով յետ մասնութեան, խաղաղութեան մէջ կը պահէր բնկերութիւնը. տեսաւ որ Վահրամին գրաւոր խորհուրդները կ'ապահովընէին բնկերութեան անդրդուելի կեանքը.

բայց երբ ընթերցման այն տեղը հասաւ, որ վահրամ վճռած էր մատնչին պատիժը, բմբոստացած, մեզմ ձայնով ժխտեց.

— Ոչ, ոչ այդպէս. մեր ընկերութեան գարշելի առնէաք պէտք է այրել, ողջ ողջ այրել: Ես համոզուած չեմ, համոզուած չեմ վահրամի ներողամտութեան: Դեռ մեր վարիչները, մեր գլուխները շրմբոնեցին որ շատ անգամ զթութիւնը հասարակութեան անգութ բելխարը կը ծնի, որուն ժանիքներուն զոհ կ'երթան արդարները և անմեղները: Բայց կը ցաւիմ որ վահրամ իր վճիռը, իր գիրը ետ պիտի շաննէ ու պատիժով մը միայն զոհ պիտի մնայ: Ոչ, ոչ, կատարեալ վրէժխնդրութիւն պէտք է. ախ թէ ինձի ազատութիւն արուեր, հէ՛, ես առանց տատամսելու պիտի հաւարէի մեր ընկերութիւնը, որուն աչքին առջեւ ողջ ողջ պիտի այրէի այդ զազիրը: Ախ, ոչ, կը խնդրեմ, կ'աղաչեմ որ վահրամ ընկերութեան սիրուն զոհէ իր կամքը, զոհէ իր անյիշաչարութիւնը, մոռնայ իր զթութիւնը, և արդար պատիժ տայ այդ նենգաւոր զազանին:

Վաղարշին խօսելու առնն՝ Հումակ կ'արթննայ, կ'ուզէ փորձել որ զարձեալ թմրի ու շիմանայ իր խղճին և երեսկայութեան ահաւոր տանջանքը. սակայն ի զօր, կար-

ձեռն կասկարայի վրայ տափկուած ձուկ մըն է զարձած. խղճալի է ան, թէկեւ զթութեան անարժան: Տեսաւ որ ննջարանէն դուրս, դեռ ճրագ կայ, դեռ կը վառի վաճառմին լսող տերը. կարծեց որ հոն դեռ վաճառմ կ'աշխատի: Միտքը ընկաւ երթալ իյնալ վաճառմին սարք, ու ապաւինիլ անոր զթութեան: Շարժեցաւ, գիմեց դէպ ի հոն: վազարչ զայն տեսնելուն՝ հեզնական զայրութով, հարցուց:

— Հումակ, ճգնաւոր Հումակ, փորձառու ծերունի . . . ինչպէս, լաւ քնացա՞ր. հա՛, ինչ կ'ուզես հիմա:

Հումակ թթու, նողկալի կերպարանք մը տանելով, հազիւ կրցաւ պատասխանել:

— Գո՛ւ ես վազարչ . . . Մնա՞լի մարի, խորամանկ աղուէս. ծակ կարաս, գլխիդ մէջ բան չի մնար, դուրս կը թափես գիտցածդ չի գիտցածդ: խորամանկ աղուէս . . . ճանապարհին դու միտմտութիւն կը կեղծէիր, սակայն ամէն ստանալական միջոցներով զիս կը գիտես եղեր. է՛հ, բաղդս, ինչ ըսեմ. հիմա ես ձեզի ծաղրածութիւն եւ խաղալիկ եղայ . . .

— Ինչ . . . միայն խաղալի՞ կ. սպասէ՞ փորձառու ծեր. դու անշուշտ փորձ ու տեղեակ ես, գիտես անշուշտ որ այդ քու յանցանքդ

ինչպէս կը պատժուի... և դեռ կը յանդրդնիս իմ հաւատարմութիւնս ալ այդպէս, հէ... կ'ուզէիր որ լռէի, շի յայտնէի մատնութիւններդ... Այդ ինչ երեսի կաշի է, շեռ ամէնար, շեռ խաղիւր. էհ, ինչ բաներ — աներեսութիւնը աննկարագիր շարերուն ազատա ախտն է։ Սպասէ ճգնաւոր, սուրբ ճգնաւոր, սպասէ՛, արդարութիւնը իր լուսանաճանչ պսակով կը վարձատրէ բելիարական առաքինութիւններդ։

— Ինչ, զիս Մերութանի թագօ՞վ կ'ուզես պսակել։

— Ո՛չ, այն բեզի, բու ախրագին վաստակոցդ շատ անարժանավայել, ստոր վարձատրութիւն մըն է. մենք նկատողութեան կ'առնենք մտլի և եղբունական ախոյեանիդ բազմամեայ անհուն գարշութեանց արժանիքը։

— Փառք Աստուծոյ, որ վաճառմին ձեռքը ընկեր եմ. թէ ոչ ահա հիմա զիս շորս անդամ խաշեր էին... Բայց դեռ, դատակրնիքս չեմ իմացած. սակայն վաճառմ խոստացաւ կեանքս ինձի շնորհել. կը հաւատամ, ան օրինաւոր և խօսքին հաւատարիմ երիտասարդ մըն է. կը հաւատամ որ ան կը յարգէ իր խօսքը։

— Ո՛չ, շար ծեր, դու ինքզինքդ մի միտ-

թարեր, ես գիտեմ վաճառման սրտած պատիժը, սակայն ընկերութիւնը այս մասին վաճառման համակարծիք պիտի չըլլայ, ընկերութիւնը գաւաճաններուն ներողամիտ չըլլար, մենք ազգային ընկերական գործերուն մէջ յայտ յայտնի բմբունեցինք գաւաճանութեան կործանիչ հետեւանքը: Մեր, նենգաւոր ծեր, դու գիտես արդէն թէ մասնութիւնը ինչպէս հիմնադրատակ փլցուց մեր դարաւոր կեանքին շէնքը, մեզի համար այդ բու արհեստը եղեանագործութեան ամենէն զազիր սճիրն է, զթալ, ներողամիտ ըլլալ, սճ մի երազեր, յիշէ որ ամբողջ ազգը, ամբողջ հայութիւնը յախտենականօրէն կը շարչարուի, մեր աներէն լացը, ողբը, սուգը անպակաս է, նահատակութիւն, թալան, հրկիզութիւն, օճախներու փճացում, տարագրութիւն և հայկական ամէն լիկանք, ամէն վիշտ ու կոծ... այս ամենուն պատճառը մասնութիւնն է եղած, առանց մասնութեան մենք այս ճգնաժամին չէինք հասներ, դու փառասիրութեամբ, դու արծաթսիրութեամբ գինովցած՝ մասնեցիր մեր ընկերութիւնը, վասնեցիր ընկերութեան դրամը, դրողարակցիր մեր արդարութիւնը, ազստամբեցուցիր ընկերութեան լուսավառ յայտերը: Մտածէ՛ դժօխքի մնակ, ծեր, մտածէ թէ մաս-



նութիւնդ որչափ կսկիծներ կը բորբորէ . մտածէ՛, խելք ունիս, մտածէ թէ մասնութեամբդ որչափ մահացու հարուած մը կուտաս մեր կրթական գործին :

— Վաղարշ, թէեւ դու շատ վերաւորական ես, թէեւ խօսքերդ շատ կուպիս, սակայն ես կ'ուզեմ՝ զքեզ հանդարտեցընել : Դու իմ մասնութիւններէս շափազանց վրդոված կ'երեւիս . է՛հ, դեռ տղայ ես : Վահրամ քեզի պէս չի մտածեր . վահրամ խիզախ է, գիտէ խոչընդոսաները տապալել և առաջ երթալ : Բայց դու դեռ անփորձ ես, անոր համար երախայական վառ ու խռոված լեզուով կը խօսիս, և կ'այսպանես, զիս : Հանգիստ եղիր, իմ մասնութիւններս բնաւ ընկերութեան գործին արգելք չեն . ես այդ արհեստսիս կրցայ քսակիտ օգտակար ըլլալ, առանց ընկերական գործին փլասելու :

— Այ խարդախ, կեղծաւոր ծեր, դարձեալ նոյն նենգաւոր լեզուով կ'ուզես արգարացընել վատութիւններդ . բայց ես միամիտ չեմ : Ի՛նչպէս կը յանդգնիս և առանց խրպնելու կ'ըսես թէ մասնութիւններդ ընկերութեան բնաւ փլաստակար չեն : Դու շինծու ճգնաւոր, երբ մեր ընկերութիւնը կը ներկայացընես ոչ — կրթական առաքեալներ այլ . . . քաղաքական գործիչներ . . .

— Ի՛նչ, վատութի՛ւն է այդ գործը, վատ  
բան մըն է գործիչներու կատարածը...

— Վատը դու ես, վատութիւնը քու նեն-  
գութիւնդ է, որով կ'ուզես կասկածաւոր ընել  
մեր ընկերութիւնը: Եւ ահա այնքան լիբր  
ես, որ կ'ուզես խեղաթիւրել միտքս. դու կեղ-  
ծաւոր — բարեպաշտ, արդէն կարող չես գու-  
շակել որ հիմա զմեզ իրբեւ քաղաքական  
գործիչ ներկայացընելով, որչափ կրթասէր  
բարերարներ՝ կասկածաւոր չի համարուելու  
համար, ես պիտի կենան իրենց նուէրնե-  
րէն. և այս փո՛քը փնաս է. դու չէ՛ր գիտեր  
թէ այս մէկ բանի տարուան մէջ ընկերու-  
թիւնը բարերարներ գտնելու համար որչափ  
աշխատանք է. գպրոցներ բանալու համար  
ի՛նչպէս նահատակուեր է...

— Ընկերութիւնը թող շարունակէ իր այդ  
աշխատանքը, և ս'ի իր ձեռքը կատող...

— Հէ՛յ — Մերութանի ծնունդ, դու գես  
այս կացութեանդ, այս փլած վիճակիդ մէջ  
ասկաւին հեղնելու, ծաղրելու կարողութիւն  
ունիս: Ո՛չ, ս'չ. ես պիտի չի թողում որ  
ընկերութիւնը քեզի գթայ. լրբութիւնդ ար-  
ժանի է հրաշէկ գնդակի մը:

Երկուքը շարունակեցին իրենց բանա-  
կախը. երկար տեւեց իրենց վիճաբանու-  
թիւնը. վաղարշ երթալով կը զայրանար,

իսկ Հումանի գազանային վայրագութեամբ բու-  
լարովին շղատոյզ, անմտօրէն կը բաշտակէր:

=

Գարեգին արթնցաւ, փափուկ ձեռուրձե-  
րով սկսաւ աշուրձները արօրել, ուրախ, հրեշ-  
տակային քաղցր ժպիտով նստաւ անկողնին  
մէջ, գիտեց շորս կողմը, ամէնքը կը բնա-  
նան, լսեց ներսէն վաղարշի և Հումակի  
փսփոսացող կրակոտ վիճարանութիւնը, գնաց  
գոնէն գանձնք գիտեց և միամիտ բնքշու-  
թեամբ հարցուց.

— Ի՞նչ է ձեր կտիւր, այժմ գնելու գին  
կը կտրէք: Չէ՛, չէ՛, ես պիտի չի թողում  
որ դայն անէր տանիք:

Անոնք պահ մը Գարեգինին վրայ հիա-  
նալով ժպտեցան, և վաղարշ, գուրգուրալով  
պատասխանեց.

— Գարեգին, գնա՛ հանգիստ եղիր, մենք  
բու այժմ քեզի կը թողունք, եթէ կ'ուզես  
ես քեզ գանձուկ մ'ալ կը գնեմ:

— Ապա՛, ինչո՞ւ չէ, ա՛խ գնէ՛, գնէ՛, ես  
չառ ուրախ կ'ըլլամ, հէ՛, կը գնեմ:

Եւ գնաց վաղարշին ծնկուրձներուն պլլուե-  
ցաւ, իր խոշոր սիրուն ու անարատ աշուր-  
ձներով գիտեց վաղարշը, ուսկից համոզիչ  
պատասխան մը ուզեց աննել: Վաղարշ համ-

բութեց Պարեգինի կարմրցած վարդագոյն աչակերբ, և հանդստացուց.

— Գնա Պարեգին — ըսաւ վաղարշ — գնա հանդիսա եղիբ, վաղը կամ միւս օրը դու գոհ կ'ըլլաս, գովին մէջ գտնուի մ'ալ կ'ունենաս. հաւատա՛ ինձի, հաւատա՛ որ խոստումս կը կատարեմ:

Պարեգին ուրախութեամբ հեռացաւ, գնաց քնացողներուն բով. պատուհանը գոցող հասա ջուլը մէկկի տանելով, դիակեց Ս. Յարութիւնը, մատրան այն բլուրը զեռ բոլորովին անորոշ սեւ ստուեր մը կ'երեւար. աշուրները դարձուց հեռաւոր լեռանց, տեսաւ արշալուսային մեղմ կարմիր փայլ մը, և այդ փայլը մօրմէն ըսած էր որ առաւօտեան նըշանն է. ուրախացաւ և գնաց քնացող եղբօրը բով և սկսաւ արթնցընել.

— Պօղոս, զեռ կը քնանաս, ել, ել տաւարը անհանդիսա է, ել, առաւօտ է, արեւը հասեր է լեռանց վիզը, հիմա իր կարմիր երեսը ցոյց կու տայ:

Պարեգինի այդ խօսքերէն արթնցան ամէնքը:

Վահրամ սովորաբար գրեթէ ամէն առաւօտ արթննալուն՝ կը զրկէր Պարեգինը և զայն կը համբուրէր. հիմա արթնցած էր, բայց մտոցաւ իր սովորութիւնը, խոր մտա-

ծախմամբ աճապարելով հազաւ զգեստները :  
 Չարաճճի Գարեգինը եկաւ նստաւ առջեւը,  
 բայց Վահրամին գիրկը նետուելու սիրա չը-  
 բաւ . մէկ բիշ լուռ մնաց, յետոյ աշուրները ամ-  
 սպանեցան . ան սկսաւ լալ : Վահրամ հասկը-  
 ցաւ պատճառը, մաղձառութեան յաղթելով,  
 սիրա բրաւ, շոյեց Գարեգինը . և ըսաւ :

— Գարեգին ի՞նչ ունիս . գէշ երազներ  
 տեսար :

— Հա՛, ապա՛ . շատ գէշ երազներ :

— Ի՞նչ . տեսներ, շուտով կրնան պատ-  
 մել :

Գարեգին փաթթուեցաւ Վահրամի վզին  
 և սկսաւ անոյշ ձայնով պատմել :

— Ախպար, գիտես ինչ երազ տեսայ :  
 Դժոխքի մէկ դոնէն՝ ծեր, հոտած ահաւոր  
 սատանայ մը ելաւ եկաւ մեր տունը . մենք  
 ամէնքնիս վախեցած, քաշուեցանք մեր վեր-  
 մակներուն տակը . զու ուզեցիր անոր հետ  
 խօսիլ . ան բեղի հետ բարեկամացաւ . վերջը  
 զուք զացիք հեռացաք սա զխմացի սարերուն  
 վրայ բարձրացաք . և երբ զու միամտու-  
 թեամբ վեր երկնքի աստղերը կը զխաէիր,  
 ան վզիդ շուան մը անցուց ու սկսաւ բա-  
 շել, զբեղ կախեց վհին բերնէն, մենք սոս-  
 կալով կը զխաէինք վերմակին մէկ ծակէն .  
 խղզուած ձայնով ահաբեկած կը ճուա-

յինք և կ'աղօթէինք . ահա՛ Աստուած լսեց  
մեր աղօթքը . վհին մօտ՝ անտառէն վազեց  
երիտասարդ մը , քաշեց շուանը , գրկեց զբեզ,  
ու սկսաւ կոտիլ այն շար սասանային հետ :  
Ես արթնցայ . ալ բան չեմ յիշեր :

— Հոգ մի բներ Գարեգին . Աստուած  
պապան մեզի հետ է . թէ՛ երազներու եր-  
կիւղէն և թէ՛ բնական վտանգներէն կը փրկէ :  
Գու շարունակէ սիրել այն բարի Պապան :

Եւ մէկ քանի արցունք կաթեցընելով,  
համբուրեց զԳարեգին ու հեռացաւ . պատու-  
հանին առջեւ մէկ բիշ կանգ առնելով փրս-  
փոաց .

— Հէ , երազով ալ կը ստուգուի շար  
մասնչին անշնորհքութիւնը , ու երազողը  
անմեղ մըն է . անմեղ Գարեգինս :

Վահրամ երկար հառաչ մը քաշեց . գեռ  
մտի էր , և աւելի մթնշաղ . հոն պատու-  
հանին առջեւ մտածեց իր բնելիքներուն  
միայ . մտածեց թէ ինչպէս կրնար անխախտ  
բռնել բնկերութեան կեանքը , և թէ ո՞ր ա-  
տեն պիտի պատուհասէր զՀումակ : Աստու-  
տեան թարմ ու խաղաղ բնութիւնը կը նը-  
պաստէ Վահրամի մտածութեանց . ան հան-  
գարտ և լուրջ գաղափարներով ծրագրեց  
բնելիքը ու մօտեցաւ դուրսը վիճարանող-  
ներուն : Խոհեմ լրջութեամբ կարեց անոնց  
խօսակցութիւնը .

— Հերիք է, շատ երկար խօսելու ժամանակ չի կայ: Հումակ դու խմ բոլոս հիւր կը մնաս. խի վաղարշ առ այժմ մեր սուրհանդակը կ'ըլլայ: Վաղարշ սիրելիս, երէկ իրիկուան գրած նամակներս քաղաք տա՛ր սուրհանդակին յանձնէ. գնա, տես Հայկականուշը, յանձնէ նամակս, մանրամասնօրէն խօսէ տխուր դէպքերու մասին, խնայիր հօրը արամազրութիւնները և Հայկանուշ եթէ բերանացի չի կրնար իր գործերու մասին տեղեկութիւն տալ, խնդրէ որ նամակով յայտնէ իր վիճակը և կրթական գործին սլամութիւնը:

— Շատ լաւ, շուտով կը կատարեմ, ամենայն հաւատարմութեամբ կը հպատակիմ. սակայն մեկնելէս առաջ, խնդիրք մը ունիմ.

— Փութիւն:

— Նամակներէդ ինչ որ հասկցայ, Հումակին շատ ներողամիտ կը գանուիս: Ընկերութիւնը սխալի մեղադրէ զթութիւնդ. բայտիս այն անարդ ծերը սէտք է կախել և արցանով ամէն օր միսը՝ բզրբտել, տանջել չարչարել, և մեանելու առնն ողջ ողջ կրակ տալ այդ հոտած գիակին:

— Քաղափարներդ միջնադարեան են, Լենկթիմուրեան. դու շատ մանկական սխալալութեամբ կ'ուզես վրէժխնդիր ըլլալ. ո՛չ.

գովեստի ու պարստի մէջ, վարձատրութեան և պատժոյ մէջ՝ մարդ պէտք չէ կորսընցնել ողջմատութիւնը: Կը տեսնես որ զինքը պատժելու՝ ևս այնքան զթած պիտի շերելիմ, պատիժը որ նկարագրեր ևմ նամակներուս մէջ, այնքան թեթեւ չէ, բայց և զազանային ալ չէ: Գու սիրելի վաղարշ, ինձի հաւատարիմ եղիր, դու կը տեսնես որ ևս զխտիմ բնկերութեան ամէն իրաւունքներուն վրէժխնդիր ըլլալ և արդարութեամբ պատժել բարոյն զզուելի թշնամիները: Ժամանակը սուղ է սիրելիս, փութա սուրհանդակին հասցուր նամակները, պատուէրներս կատարէ և շուտով դարձիր, զես արատասամանի նամակները չեմ կարդացած և բուրբած տեղեկութիւններդ չեմ ըսած:

— Վահրամ, ևս տժոհճ կը մեկնիմ, հաւատարմութիւնը մեր պարտքն է, կը հնազանդիմ, բայց ուր էր թէ երբեմն մեր զլուխները միայն իրենց համոզումով չի գործէին: Պաշտելի վահրամ, դու սրտշողութեանցդ մէջ յամառ ևս, և դարձեալ յամառ կը մնաս, և կը զթաս անթծեալ Հումակին: Ներէ որ այսքան ուժով կը խօսիմ, վասն զի մատնութիւնը ինձի համար ամենէն զարշելի ու աններելի յանցանքն է: Ես հպատակութեանս մէջ կը մնամ, մի և նոյն տաք սիրով



կը սիրեմ, կը յարգեմ զբեզ, Մնաս բարով,  
 կը կարգազրեմ ամէն գործ և շուտով կը  
 վերագտնամ: Մնաս բարով շնոր ճգնաւոր,  
 մնաս բարով փարխեցի Հումակ, պաշակ  
 այս երիտասարդը որ անգթութեանց զթա-  
 ցող է, գուցէ դու դաճնութեանցդ ահաւոր  
 ժամերուն ունենաս խղճմտանքի արդար ու  
 ու անկեղծ բուզներ, այն վայրկենին բա-  
 րեխօս բռնէ այս գաղափարական սուրբը ...

Վահրամ անժպիտ լուս կը մնայ, իսկ  
 Հումակ շառագունած ու խոսված գետին կը  
 նայի. Վաղարշ կը համբուրէ իր Վահրամին  
 ճակատը և կը մեկնի:



Չմեռնային առաւօտ մըն էր, շատ սիրուն  
 առաւօտ մը, ձիւնապատ շղթաներէն կը փշէր  
 չոր ցուրտ բամի մը. գեղջկական ուժով  
 կուրծքերը անյագարար կը շնչէին այդ ա-  
 սողջ օդը, այն կեանք կենդանութիւն էր բա-  
 րեկազմ ուժեղ լեռնցիներուն համար: Գաշ-  
 տերու մէջ գիւղացին շատ գործ շունէր.  
 բնութեան հետ մշակներն ալ կը հանգչէին  
 իրենց ամառնային բրանաթօր աշխատութե-  
 նէն. միայն անտանները և տաւարը կը մտա-  
 ծէին. այս եղանակին սմանք իրենց անա-  
 սունները փոխանակ տան ախոսին մէջ պա-  
 հելու, հեռաւոր գիւղեր հայլայ կոչուած տե-

ղեր յղած էին : վաճառմի տան կենդանիները հայլայ շէին գացած . Գարեգին զանոնք անէն հետո տարած ընդարձակ գաշտի մը մէջ կ'արածէր . Գարեգինի տաւարը աշունէն մնացած վախա խոտով կը գոհանայ : Խակ վաճառմի մայրը և միւս եղբայրը տան մերձաւոր բլուրներէն և անտառներէն փայտ կտրելով, փռան և օճախին պաշար զիգելու հակէ էին : Տան մէջ վաճառմ Հումակի հետ մէկ ժամ կը խօսի : Հումակի բիրտ ու կոպիտ բնաւորութիւնը վաճառմի կիրթ խօսքերով բաւական կ'ազնուանայ, ան ինքզինքը երկնաւոր տաեանին առջեւ կը կարծէ, անկեղծ ապաշխարողի մը պէս կը խոստովանի իր յանցանքները . վաճառմ կը լսէ շատ զարհուրելի արարքներ . կը հառաչէ, սակայն կ'ըմբռնէ որ շարութիւնը շարութիւն է, անկից վերջը իրեն խոհեմութեան կը մնայ գարմանել ծերուն վատութեան հետեւանքները : Չի լքանիր, կը վճռէ անսասան ու անփորձ պահել ընկերութեան գործը ու պատիւը : Հումակ երբ իր խոստովանանքը կ'աւարտէ, վաճառմէն կը լսէ այս հարցումը .

— Ուրեմն թափեցիր, սրաէդ հանեցիր փատութեանդ վերջին կաթիլ թոյնը :

— Ես առջեւդ բացի սիրտս, ես ապ-

նասպած խղճի անողորմ խայթէն, յայտնեցի  
իմին ամէն այն ծուռ գործերս, որ այժմ  
ինձի սոսկում ու սարսուռ կը պատճառեն:

— Մեր, գիացիր յախաննականօրէն լու-  
թեան պատապարտուելու ժամդ մօտեցաւ,  
մէկ քանի բոսկէն դու այլ եւս չես կրնար  
խօսիլ . . .

— Ուրեմն զիս պիտի մեղքընես:

— Ոչ, հաւատարիմ կը մնամ խոստ-  
մանս: Ոչ, դու պիտի չի մեռնիս:

Խօսքը հազիւ թէ վերջացուց, առաստա-  
ղէն կախուած շուանի ծրարը վար առաւ,  
մօտեցաւ Հումակին, և բռաւ.

— Հումակ, երկնցիր սա տախտին վրայ-  
փռուէ շորացած, քարացած դիակի մը պէս:

Հումակ սկսաւ դողողալ, գունաս ու այ-  
լայլած նայեցաւ վահրամի աչքին մէջ: Իսկ  
վահրամ վճռական շեշտով հրամայեց.

— Հումակ խոստացածէս աւելի գթած  
չեմ կրնար բլլալ, աշուրներդ կ'ուզեն գութս  
շարժել, սակայն անհնարին է. քեզի ներս-  
զամիտ բլլալով, անգութ կը համարուիմ  
ամբողջ ընկերութեանս, և մեղսակից ահու-  
լի մատնութեանց:

— Կադաշեմ վահրամ . . . ընկերութեան  
սիրուն . . . կ'ադաշեմ, գոնէ պատժուելէս առաջ  
գիտնամ թէ ինչ պիտի բլլայ պատիժս:

— Ճամանակն է, հիմա կ'իմանաս . . .

Եւ այլ եւս առանց համբերելու, զձերը կը փոէ տախտին վրայ: Անոր վերջին աղերսը կ'ըլլայ.

— Վահրամ հասկցայ, սրտշոգութիւնդ վճռական է. վայրկեան մը ինձի շնորհէ. թող պատուհանէն դիտեմ Ս. Յարութիւնը . . .

— Ազատ ես Հումակ, գնա՛ Աստուած կը կանչէ զքեզ. իր ատեանին առջեւ մեղքերուդ բաւութիւնը խնդրէ:

Հումակ պատուհանէն նայեցաւ դէպ ի Ս. Յարութիւն. արցունքները հեղեղօրէն վազցուց, հառաչելով լացաւ, ու հեծկլտալով սկսաւ ապաշխարել.

— Տէր կը սոսկամ խղճիս բողոքէն. խղճիս հակառակ, մանկութենէս մինչեւ ծերութիւն . . . այն խղճիս հակառակ գործեցի. մասնեցի, զրպարանցի, կողոպտեցի, սրբապղծեցի: Ես պիղծ և սակայն սուրբ սիրտ, մաքուր հոգի կեղծեցի. մաքուր հոգիներ, մաքուր պատիւներ արատաւորեցի. ես սրիկայ . . . և անմեղները սրիկայ կոչեցի. սուար, կեղծիքը, նենգութիւնը լեզուիս զէնք գործածեցի, և ընկերութեան մէջ աւերակ ու կրակ թողուցի: Տէր, հիմա երեսէդ ընկած, խղճէս հալածուած, սակայն դարձեալ սիրտ առած,

զուժգ կ'աղաչեմ, անզուժ գործերուս զթու-  
թիւն կը պաղատիմ: Ապաշխարողին զու-  
միայն ես յոյս ու խրախոյս ...

Ան տոաջ չի տարաւ իր աղօթքը, զլուխը  
զարկաւ պատուհանի պատին, սկսաւ լալ-  
երկինքը լուռ էր իր ձայնին, երկինքէն զթու-  
թեան կաթիլ շրնկաւ անոր սրտին մէջ, խոտի-  
քը դեռ աւելի զայրացաւ, ինքզինքը ամէն  
կողմէն լքուած գտաւ, յուսահատութիւնը  
պաշարեց անոր միտքը, ապուշ ու շուարած  
քարացաւ մնաց: Վահրամ զայն հոն չի թու-  
ղուց, բոնեց թեւէն, քաշեց տարաւ:

— Հումակ զթութիւնս կը սահմանափա-  
կեմ, ահա կրօնական պարտքդ ալ կատա-  
րեցիր, հիմա իմ ձեռքս ես, արդարութեան  
բեմին առջեւ:

Ըսաւ ու կապեց անոր թեւերը, կապեց  
ոտուրները: Հումակ անձնատուր էր այլ  
եւս, և այնքան տազնապած ու շուարած որ  
բնաւ զթութիւն խնդրելու կարողութիւն չու-  
նէր: Վահրամ զայն կոնակին վրայ պառ-  
կեցուց, յետոյ իր դարանէն գնաց բերաւ  
մեծ պայուսակ մը, ուր պահած էր վիրա-  
բութութեան կարեւոր գործիներ և դեղեր:  
Եթերով անդպայացուց անոր լեզուն և մա-  
տուրներուն ջղերը, յետոյ վարպետութեամբ  
լեզուին մէջ օրերասիտն մը կատարեց, բա-

րակ սուր դանակով մը ձեռաց մատուրնե-  
րուն երկրորդ յօդուածները կարեց նեանց:

— Հումակ, այսքան, այս է միայն պա-  
տիժդ. ահա կը քակեմ կասպանքդ. դու ալ  
ազատ ես. մեր գաշաերուն մէջ թափառէ,  
հոյ՛ուէ մեր անասունները, թափառէ լեռնե-  
րուն վրայ, աղբիւրներուն, գետերուն առջե-  
զնա լաց մեղքերդ. և ապրուստդ ինձմէ սպա-  
սէ. ես զքեզ անօթի չեմ թողուր:

Վահրամ վերջացուց իր խօսքերը, ու  
կարգի գրաւ վիրարութեան գործիքները և  
հեռացաւ անէն:

Հումակ կզակը կը շարժէր, լեզուն կը  
շարժէր և ազազակ մը կուրծքէն կը սլայ-  
թէր, անկասկ, անյօդ ազազակ մը: Ան համ-  
բացած էր . . .

Վահրամ մինակ առանձնացած, ձմեռուան  
արևուն ասկ ման կու գար սան մօտ մար-  
դապետնին վրայ. իր աչքը դէս ի քաղաք,  
դէս ի սարերը գարձնելով կը հառաչէր ու  
կը մաածէր:

ՀԱՅԿԱՆՈՒՇ տեսնելով իր բարեգործութեան և իր ընկերական մարդասէր գործին մասնութիւնը, այլ ևս բողոքովին չբուսած, օրերը մտածկոտ ու շուարած կ'անցընէ: Հայրն ալ յուսահատած ու ահաբեկած, թէ՛ իր և թէ՛ աղջկան տագնապին դարման մը կ'ուզէ ընել: Անոր գառամեալ երեւակայութեան՝ բաց ի բռնակալ միջոցներէն՝ ուրիշ համոզիչ դարման մը չի ներկայանար: Վճոնց վահրամը ձերբակալել տալ: Մասնիչ ծեր Հումակէն լսած էր որ վահրամի այդ կրթական ընկերութիւնը քաղաքական գործերու մէջ մտած, տէրութեան գէժ կը գործէ: Ողորմելի աղան կը մտածէ որ այդ ընկերութեան այս գործը մասնելով, կը բանտարկուի ընկերութեան հոգին վահրամը, և այն ատեն Հայկանուշ կ'ազատի վահրամի ձեռքէն: Իր մտածութիւնը շատ համոզիչ երեւցաւ. փութաց կատարել որոշածը. կ'անչեց դոնապան Յուսիկը, որ մեքենաբար շուտով արձանացաւ դիմացը:

— Յուսիկ — բտաւ աղան — դու բութմբութեանդ մեղքը՝ այս երկու օրուան մէջ

ճարպիկ հաւատարմութեամբդ քաւեցիր: Ապրիս, հիմա ինձի նայէ՛. ահա գիտցած բլլաս որ ես այսօր անէն բացակայ եմ. գիշերս աչքդ Հայկանուշի և Աբուսին վրայէն մի հեռացրնիր: Եթէ երբէք գէպքով մը անոնք դարձեալ փախուստ տան և խան կամ ուրիշ կրթական գործի մը երթան, գիտցիր պիտի տուժես և շարաշար պիտի տուժես:

— Բայց ադա ջան, ներեցէ՛ք. դեռ անմիջապէս զիս չի կանչած՝ երկուքն ալ անէն հեռացան:

— Ինչ կ'ըսես. զիտե՛ս թէ ուր գացին...

— Ինչու, տեղեկութիւն չունիմ:

— Փոյթ չէ, ցերեկ ատեն Հայկանուշի կրթական գործով ինքզինքը չի մատներ, շատ հաւանական է որ՝ զաշնակի տեսրակ մը գնելու գացեր է. հոգ չէ, դու այս գիշեր արթուն եգիր:

Գանապան Յուսիկը խոստացաւ լիուրի հաւատարմութիւն և արթնութիւն: Իսկ ադան շուտով ստիկանատուն գիմեց. հոն կառավարութեան մատնեց զՎահրամ և քսանը հինգ սկիւով կաշառեց ստիկանութիւնը, որ իսկոյն հինգ վեց զինուոր իրեն յանձնեց: Նոյն ատուն շատ ցուրտ ու սառուցիկ քամի մը կը փչէր: Ադան իր թանձր մուշտակին մէջ փաթթուած ձիաւոր զինուորներէն երե-



սուն բայց ասա՞ անցնելով կը բշէ իր ձին,  
անոնք բոնեցին Արդալիտայի ուղից ճամբան:



Դէպ թ Արդալիտ կը գիմեն ուրիշ երկու  
ձիւտարներ՝ Հայկանուշ և Արուս, բայց ասոնք  
խոտոր աւ կարճ ճամբով կ'անապարեն: Հայ-  
կանուշ յտեսես աւ մաղձոտ գաղափարնե-  
րով կաշկանդուած, վճռած էր վերջ տալ իր  
կենաց, բայց նախ կ'ուզէր տեսնել իր վաճ-  
րամբ: Ըճանապարհին շատ անգամ Հայկա-  
նուշ խելագար աւ շուտրած, կը փորձէ ձիով  
գաճալիտի անդունդներէն, սակայն Արուս  
թոյլ չի տար, կը համոզէ, որ վաճրամբ  
չի տեսած, այդ բայլը շտնէ:

Արևը կը բարձրանայ, իր ճառագայթ-  
ները շեշտակի կ'իյնան ձիւնապատ բլուրնե-  
րու և լեռանց շղթաներուն վրայ, հեղեղա-  
ները հալած ձիւներու յորդառատ ջրով ու-  
ղողուած են, շատ տեղ Հայկանուշ և Արուս  
ամենամեծ վտանգներէ կ'ազատին, լեռանց  
գաղաթններէն հալած ձիւնը ահուկի ջրվէժներ  
ձեւացուցած է, սահանքները մոնչելով, փր-  
փրալով կը Փշան գէպ թ անդունդ:

Հետուէն, երկու գինուած կարիճներ կը  
սուլեն, ձորերը անոնց արձագանգը կը  
ստուարացընեն, սակայն փախստականները  
անփոյթ կը վազեն, կը շարունակեն ճամ-

բանին: կտրիճները, անդադար կը սուլեն. սակայն պատասխան չեն առներ. ատոնք ուժի տասիկաններն են, կ'ուզեն կեցընել փախտականները, կարծելով որ անոնք զաշխիշներ (ծուխ փախցնող) են. իրենց ոչ սք մտիկ կ'ընէ. յօդս կը պարպեն հրացանի հարուածներ, սակայն ի զուր. Հայկանուշ և Արուս կը մտնեն կիրճերու մէջ, այլ եւս անոնց աշուրներէն կը հեռանան, կ'ազատին. և կտրելով խորտուրորտ նեղ և վտանգաւոր ճամբայ մը, կէս ժամէն կը բարձրանան բլուրն ի վեր, ահա գիմացնին կը տարածուի ձիւնապատ երկար և լայնածաւալ շիտակ դաշա մը: Այլ եւս սրարշաւ կը ճախրեն. փոյթ չէ սառուցիկ քամին, որ կը զարնէ անոնց երեսին: Երկուքն ալ բանկած ու տագնապած, կը փախչին, կը փութան վահարամը գանելու: Դեռ Արղալիայի հասնելու մէկ ժամ կը մնայ: Անոնք կը մտնեն երկու խիտ անտառներով եղբուած ծառուղիին մէջ:

Չոր ճիւղերով հիսուած խրճիթի մը առջեւ, ստուերի կերպարանքով անձ մը թաշկինակ կը շարժէ. կը հասկնան որ օգնութեան նշան մըն է այն: Արուս ձին գէպ ի հոն կը բռնէ: Ստուերը սիրուն երիտասարդ մըն է, որուն մօտ ճերմակ ձի մը կու լայ՝

օրհասական: Հոն կը փութայ և Հայկանուշ,  
երիտասարդին լեզուն կը բռնուի, զայն խրճի-  
թին մէջ կը տանին, կը շփեն անոր ստամ-  
աքամինը: Խեղճը կը գանձ ինքզինքը և կը  
հարցնէ.

— Մեր կ'երթաք . . .

Երկուքն ալ կը տեսնեն, որ ան անմեղ  
հայ պատանի մըն է. կը փութան կը պա-  
տասխանեն թէ իրենք Արղալիա կը գիմեն:  
Կարեւոր գործ մը ունին: Երիտասարդը ա-  
չուրները կը սեւեռէ Հայկանուշի վրայ: Եւ  
տարակուսական շեշտով կը հարցնէ.

— Օրիորդ, դու հարուստ ընտանիքէ կ'ե-  
րելա. եթէ չեմ սխալիր . . . զքեզ մէկ ան-  
գամ տեսեր եմ. դու զիս կրնաս ճանչնալ  
անուամբ:

— Պատանի, յայտնի խօսէ. դու ո՞վ ես,  
ի՞նչ կ'ուզես. իմ ո՞վ ըլլալս քեզի ինչ փոյթ:

— Ես վիրաւորուած եմ, բայց ահա հիմա  
միտքս կը պայծառանայ, յիշողութիւնս զիս  
չի խարհր . . . Փառք Աստուծոյ. ս'հ ինչ  
զուգադիպութիւն. այո՛ չեմ սխալիր. ձեռքդ,  
առաքինի օրիորդ . . . ձեռքդ տուր որ համ-  
բուրեմ . . . Հայկանուշ . . .

Հայկանուշ զարմացած, կը հարցընէ.

— Դու ո՞վ ես, պատանի: Աճապարէ՛  
խօսէ՛, յայտնէ՛:

— Վաճառման քեզի սուրհանդակ եկող  
Վաղարշը :

Երեքին սրտին մէջ ուրախութեան փայլակ  
մը կը ծագի. երեքն ալ յանկարծական սար-  
սուռ մը կը զգան , շուարած իրարու երես  
կը նային : Յետոյ Հայկանուշ կ'ուզէ իմանալ  
Վաղարշին սուրհանդակութեան պատճառը :  
Վաղարշ իր այն անակնկալ ուրախութիւնով  
կ'ազդուրուած , կը քանայ բերանը :

— Հայկանուշ ես Արդալիայէն մեկնած  
կու զայի քեզ իմացընելու , որ Հումակ մեր  
ընկերութեան նամակարեք ճգնաւորը մաս-  
նեք է զմեզ իրբեւ քաղաքական գործիչ , և  
բացեք է քու ամէն նամակներդ . և իր այդ  
ոճիրը յայտնի է Վաճառման , պիտի իմա-  
ցընէի որ Հումակ այժմ Վաճառման ձեռքն  
է , մեր ընկերութեան այդ համակրելի ու պաշ-  
տելի զլուխը պիտի պատժէ զայն համբար-  
նելով այդ մասնչին լեզուն : Հումակին ոճիրը  
Վաճառման իր այս նամակով քեզի մանրա-  
մասնօրէն նկարագրած պիտի բլլայ :

Մոցէն կը հանէ նամակը , և զայն կը  
յանձնէ Հայկանուշին . ու ինքը կը շարու-  
նակէ խօսակցութիւնը .

— Ես սուրհանդակութեան պաշտօն կա-  
տարելու վրայ էի , ահա զիս պաշարեցին  
բէժիի զինուորներէն վեց սասիկան , սրտնք

կարծելով որ ես ծուխ կը փախցընեմ, վրաս  
 հրացան քաշեցին. ես անձնատուր շեղայ.  
 խիզախօրէն ճախրեցի, յայտնելով որ ծուխ  
 չունիմ. սակայն վատերուն միտքը զիս մեր-  
 կացնել, կողոպտել էր. անուշաղիր իմ յայտ-  
 նութեանս, զիս և իմ ձիս իրենց գնդակ-  
 ներով գետին տասպալեցին. կողոպտեցին  
 դրամներս և հեռացան:

Այս ամէն յայտնութիւնները գետ աւելի  
 յուզեցին զՀայկանուշ: Նոյն վայրկենին իր  
 յուսահատ գաղափարներուն շուրջ մտիկ  
 րնել. հրամայեց Արուսին որ մօտ աեղերէն  
 ձի մը վարձէ. քսակէն անոր յանձնեց դրամ:  
 Արուս իր ձիով փութաց հրամանին: Հայ-  
 կանուշ քննեց Վաղարշի վերքը: Երիտասար-  
 դը ծունկի յօդուածէն վիրաւորուած էր, ջախ-  
 ջախուած էր ծնգոսկրը. Արուս մինչեւ որ  
 ձին բերու, Հայկանուշ վայրկենաբար ուզեց  
 դարձանել Վաղարշի բեկեալ սոկրը. խեղճ  
 երիտասարդը, ահուելի ցաւով կը տանջուի.  
 գունատ ու հիւժած կը տառապի. անտառ-  
 ները կը հնչեն երիտասարդին սրտաձմրիկ  
 թառանչքով. Հայկանուշ իր բժշկական ա-  
 բիութեամբ դարձանումը առաջ կը տանի:  
 Քիչ տանէն Արուս կը հասնի, Վաղարշը  
 կը բարձրացընեն ձիուն վրայ և երեքը  
 միասին կը դիմեն Արղալիս: Վաղարշի ձիուն

տէրը՝ հետիտան կ'ընկերէ : Անտառին մէջ  
 վիրատորեալ մահամերձ ձին , իր վերջին  
 հառաչներով կու լայ անտէրունչ խղճալի  
 վիճակը , ու անտառը կը լացընէ իր տխուր  
 խրխինջներու արձագանգով :

✽

Արդալիա՝ շպարուած , գեղեցկացած է ձեան  
 արեղնափայլ ճաճանչազեղ փաղփիւնով , ալէ-  
 ձեւ բլուրները և մշտադաւար ծառոց ճիւղերը  
 բեռնաւորեալ խաւ խաւ ձիւնով , խրճիթնե-  
 րուն նկարչական հրապոյր մը տուած են :  
 Օրը զուարթ է , անգործ գիւղացին զալալը  
 (հովուական սրինգ) բերանը՝ կը հնչէ տե-  
 դական երգեր , ամէն բլուրներէ սուլոցներու  
 հնչուն երկարումը սրինգներու ներդաշնակ  
 ձայնին հետ միացած կ'իջնեն հեղեղաանե-  
 րու մէջ , ուր սահանքներու խրոխտ շառա-  
 շոյ բամբիւնը կը նուաճէ անոնց անոյշ մրմուն-  
 ջը : Զուարթ է և գեղջուկ մանկութիւնը , Ար-  
 դալիայի ընդարձակ դաշտին վրայ աղաք-  
 ները ձեան գնդակներով կը հալածեն թանձ-  
 րամարմին թռչունները :

Կէսօրէն ժամ մը տասջ , Հայկանուշ և  
 ընկերները Արդալիա կը հասնին : Վահրամի  
 փոքրիկ եղբայրը Քարեղին , աղոց խմբին մէջ  
 է , ան ալ ճարպիկութեամբ թռչող տարմե-  
 րուն կտուէն ձեան գնդակ կը հասցընէ :

Հայկանուշ զայն նշմարելուն, բովը կը կան-  
չէ ու կը հարցնէ.

— Գարեգին, վահրամը տունն է:

Գարեգին կը պատասխանէ որ վահրամ  
նայն ժամուն կը գտնուի Ս. Յարութիւն մա-  
տրան վարժարանին մէջ: Հայկանուշ իր ու-  
ղեկիցներուն կ'ըսէ՝ որ իրենք վահրամին  
տունը՝ երթան, իսկ ինքը ուղղակի գնալ ի  
Ս. Յարութիւն բլուրն ի վեր կը բարձրա-  
նայ:

=

Վահրամ ուխտատեղւոյն կից, փոքրիկ  
վարժարանի աշակերտները զեռ նոր արձա-  
կած էր. իսկ ինքը մատուռ մտած, աղօթե-  
լով ընկերական զօրծի մասնութիւնը կ'ուզէր  
անփորձ պահել: Հայկանուշ վարժարանի  
պատուհաններէն երկար դիտեց, փնտռեց իր  
վահրամը, սակայն ի դուր. վարժարանը  
թափուր էր, հոն չի գտաւ զանիկա:  
Մտքէն բնաւ չէր կրնար անցընել, որ բժիշկ  
վահրամը մատուռ աղօթքի գացած ըլլալ-  
ուակայն պարզ հետաքրքրութեան համար,  
մատրան մէկ նեղքէն ուզեց խուզել, պրպակել,  
տեսաւ զայն հոն, զարմացաւ, յանկարծա-  
կան ուշաբերումով մը, յիշեց վահրամին  
այն մէկ ծածուկ նամակը՝ որով յայտնած  
էր թէ մտքով նխութապաշտ է իսկ խղճով

գուտ հաւատացեալ: Վահրամի այս նկարագիրը իրեն համար միշտ անլուծանելի գաղանիք մը մնաց. անոր վրայ շուրջ մտածել, հրեց մատրան գուռը. Վահրամ հիասթափած նայեցաւ իր արծաթթաթիկ խարախշազեղ Հայկանուշին. երկու գաղափարական կոյս մտերիմները յուզուած արձանացան: Տիրամօր պատկերի առջեւ՝ մութ առաստաղէն կախուած լապտերին կարմիր բոցը, վարդ նազելի բրքմափայլ ներկով կը ներկէ այդ հրեշտակային սրտերու մոզիչ պատկերը. միայն երկնային հոգիները վկայ էին անոնց գերբնական անրիժ կուսութեան. սուրբ էր և սրովբէական անոնց մտերմութեան գաղափարը:

Երկուքն ալ իրարու շատ ըսելիք ունէին. մասուռը իրենց խօսակցութեան տեղը չէր. գուրս ելան և մտան վարժարան: Վահրամ զարմացած հարցուց.

— Հայկանուշ այս եղանակին հո՞ս, բա՛լս և ի՞նչպէս . . .

— Այո՛ պատեհ ժամանակին . . . գոհ եմ որ գտայ զբեզ: Իմ վերջալոյսս բու ջինջ սրտիդ հորիզոնէն կ'ուզեմ որ անցնի ու . . . նուազի յաւիտենական խաւարին մէջ:

— Հայկանուշ դու գեո յոտեսես գաղափարներով կը հիւժիս: Մեացուր ախրութեանդ



չար ոգին. սչ, շարժեր խօսիլ մաղձոտ ե-  
րագներու վրայ: Գործիչներ ուխտեցինք ըլ-  
լալ. ուրեմն նախ մենք մեր տխուր գաղա-  
փարները նուաճենք, թէ սչ, սչ մենք շատ  
ծաղրական կ'ըլլանք... Հայկանուշ կ'աղա-  
չեմ սրաէզ ջնջէ՛ մեղամաղձոտ պատկեր-  
ները: Մեր պատմութիւնը ունի իր տոամ-  
ները. հիմա զանոնք կարողալու ժամանակն  
է. ընկերութեան փրկութիւնը պէտք է մտա-  
ծենք. գտիր ինքզինքդ, վշտերու զեղը խի-  
զախութիւնն է: Դէմքդ սրտաճմլիկ է. ներոզ  
տագնաօլի հրդեհ մը կ'երազեմ. սակայն եթէ  
խոտիքդ անհատական է, արհամարհէ ամէն  
լլկանք, յաղթանակդ ասոր մէջն է:

— Կը վիրաւորես զիս. անհատական  
խոտիքը իմ մէջս ... սչ, սչ, սչ. ես ինք-  
զինքս երբ տեսնեմ անհատական իղձերու  
կամ վշտերու մասնուած, մի և նոյն վայր-  
կեան կմախքս զիակիս գերեզման կ'ընեմ.  
եսիս համար ապրիլ ... սչ, այդ ապշու-  
թիւն է, եսիս համար վշտանալը կամ ու-  
րախանալը ինծի համար զարշանք է: Ես  
տխուր եմ, ես մաղձոտ, ես հիւժած, հոգիս  
թաւնաւորուած է... վասն զի այլ ես ինծի  
գործելու ասպարէզ չի մնաց, և եթէ պիտի  
չի գործեմ, ինչո՞ւ ապրիմ, ինչո՞ւ սիրեմ  
կեանքը, այն ի՞նչ հրճուանք, ինչ սփոփանք

ունի : Սիրելի Վահրամ ես ճանապարհին  
 խմացայ որ Հումակ, մասնիչ ծերը իմ նա-  
 մակներս փոխանակ բեզի հասցնելու հօրս  
 ճիրաններուն մասներ է. բնականաբար դու  
 տեղեակ չես իմին այս վերջին ամէն հոգե-  
 կան վշտերուս, իմ գասն և լեզի պատմու-  
 թիւնս բեզի ծանօթ չէ :

Հայկանուշ պատմեց իր գլխէն անցած  
 տխուր գէպքերը . յետոյ խմացուց Վաղար-  
 շին գլխուն պատահածը : Սակայն տեսնելով  
 Վահրամին լուրջ ու պերճատեսիլ անխոտ  
 դիրքը, դարմանալով ակնարկեց .

— Վահրամ, սիրուն արձան մը կտրեր  
 ես, աշուրներդ զգացմունքի լոյսը կորսնցու-  
 ցեր են, կը սխալիմ, թէ ըսեմ . . . անգութ  
 ես . . .

— Կ'ըմբռնեմ, կեանքդ ամբողջովին գաս-  
 նութիւն է, զոր իմին լացով ու կոծովս չեմ  
 կրնար բազցրացնել. Վաղարշի պատահարը  
 աստուտալով չեմ կրնար դարմանել : Անզգայ  
 չեմ, սակայն չեմ ուզեր անդարմանելի  
 պատահարները արատարագին տխրութեամբ  
 սղալ, այլ ես համոզուած եմ, որ լացը,  
 սորը մեր ոգեկան ուժը կը հիւժեն, ուստի  
 ինձի մի խօսիր տխուրը և տխրունին :

— Վահրամ դրական խմաստասէր կ'ու-  
 ղես բլլալ, սակայն . . . զգացմունքը գեացիր

երբէք չի կրնար բարանալ: Ես կ'ըմբռնեմ որ դու այդ անտարրեր խորիս լեզուդ բանեցնելով, կ'ուզես մեղմել իմ վշտերս. այդ ալ միջոց մըն է, վայրկենաբար զիս թմրեցրնելու ազնիւ միջոց մը: Բայց կը ցաւիմ որ այլ եւս բու ամբողջ հոգեկան պաշտելի կորսովովդ զիս պիտի չի կարենաս մխիթարել և ինչ որ սոսկալի է ... պիտի չի կարենաս որոշածս արդիւնել:

— Որոշածդ ... ինչ, ինչ է այդ որոշածդ:

Հայկանուշ, ծոցէն հանեց փոքրիկ շիշ մը. դայն ցոյց տալով վահրամին, ըսաւ.

— Հոս է կեանքիս սեւ պատանքը, հոս է հոգւոյս սեւ ներկը. կեանքը զիս ծաղրեց, յոյսը զիս խաբեց. յիշատակդ, անկեղծութեանդ կոյս տիպարը երազներուս միակ մխիթարութեան հրեշտակը եղաւ. բեզի համար ապրիլ և բեզի պէս շկարենալ գործել, ինձի համար մեռելութիւն է. ուրեմն լաւ է իրօք մեռնիլ, քան յախաննականօրէն սղբալ կենդանի մահր:

— Հայկանուշ, մաղձստութիւնդ ջախջախեր է աննացի կորովդ. իրօք, դու կ'երազես: Օ՛ն, ի դ՞ուր, յոսեակս զաղափարներով մի կործաներ կեանքիդ պաշտելի տաճարը, պահէ դայն իր գոս պերճութեան մէջ: Հայ-

բական բնութիւնը բու անհատական շէնքդ  
հիմնադատակ ընելու ուժ շունի: Կը ցախմ  
որ դու մաղձոտութենէդ մղուած շատ թոյլ,  
շատ տկար ու տխուր գաղափարներ կը  
յայտնես:

Սակայն Հայկանուշ իրօք կորսնցուցած  
էր իր խիզախօրէն և ըմբոստօրէն գործելու  
ու խորհելու նկարագիրը: Յանցանքը իր  
նկարագրին չէր, այլ հօրը բնական միջոց-  
ներուն, սրով խեղճ առաքինի աղջկան մէջ  
ծաւալեցաւ մաղձոտութեան լեզին: ան  
նուաճեց այն կորովի սրտին հոգեկան գա-  
ղափարները: Հիմա խեղճը իր սիրելի Վահ-  
րամին ուժգին խրախոյսները միխիթարական  
չէր գաներ: Վճռած էր վերջ առլ կեանքին,  
որոշածը անդխմադրելի կը նկատէր: Վահրա-  
մի խօսքերուն վրայ, այսերուն վարդ կապոյտ  
նազելի գոյնը համակ աշտպաստարային նուազ-  
կոտ լուսնակի շոյն կ'աննէ, փափկիկ թա-  
թիկներուն մէջ բնած թունալից շիշը կը  
գողզրդայ, մանիշակապոյն բարակ շրթունքին  
կը մօտեցնէ շիշը, Վահրամ՝ գայն տեսնելուն՝  
փայլակնացայտ արթնութեամբ կը խլէ ձեռ-  
քէն այն մահաոխիժ շիշը, գայն կը ջախջա-  
խէ մատրան շեմին վրայ: Կը բննէ Հայկա-  
նուշի ձեռուրները և սրտազբաւ յանդիմա-  
նութեամբ կը ցնցէ հիւանդ Հայկանուշի և-  
րեակայութիւնը:

— Հայկանուշ այլ եւս դու յայտնի ցոյց տուիր քու ախար հիւանդութիւնդ. ուրախ եմ որ նկարագրիդ վաղանցուկ, խեղկատակ վայրկեանին, միայն եւ ներկայ գանուեցայ. հիմա սթափէ, միտ դիր ձայնիս որ քեզի միշտ անկեղծ ներգաշնակութեամբ մեշեր է ճշմարիտը, բարին. դու հիւանդ ես, թող որ զքեզ բժշկեմ:

— Վահրամ անկեղծութեանդ շհատալը ինձի համար սճիր մըն է. սակայն կը խնդրեմ զիս մի առողջացրնեք. անդորձ առողջ ապրիլը. գիացիր որ սղջ սղջ գերեզմանի մէջ թաղուիլ մըն է. ս՛չ, ալ այս տեսակ երկարատեւ տանջանքի չեմ կրնար տակալ: Գուջախջախեցիր թոյնիս շիշը, որ պիտի ըլլար կեանքիս փրկիչը: Հիմա եթէ անդութ չես, կարէ՛ փզիս մէկ լարը, անշնչացուր զիս, թող իջնէ կեանքիս սեւ վարագոյրը . . .

— Հայկանուշ . . . դու իմ մտքիս շատ ներհակ կը խօսիս, ու կը խորհիս: Մտածէ՛. դու չե՛ս կրնար ազատիլ հօրդ բնակալ ճիրաններէն . . .

Հայկանուշ շուտով չի պատասխանեց. մտածեց, բացաւ իր գեղանոյշ աշուրները, մտքով հարցութորձի մէջ բնկզմեցաւ: Վահրամի անխոսով խօսակցութիւնը զինքը բաւական սթափեցուց. լրջօրէն մտածեց, մէկ քանի

վայրկեան վահրամի խիզախ խօսքերը նկատողութեան առաւ, հոգւոյն մէջ ծագեցաւ ըմբոստութեան փայլակը. արիացաւ ու պատասխանեց:

— Վահրամ ըմբոստութիւնը իմ միակ փրկիչս է:

— Սիրէ այդ փրկիչը: Ահա իմ կարճ պատուէրս. հայրդ կը մտածէ շատ անմիաբանակալ կոպտութեամբ: Իր ազիտութիւնը սճրագործութեան դուար քեզի ցոյց կու տայ. ըմբոստութիւնը այս պարագայիս սրբութիւն մըն է: Հիմա ինձի սուշ դիր: Աքումաւենին իր վերջին նամակներով գեղեցիկ գաղափար մը յղացած է, զոր իրագործելու համար կարօտ է քու աջակցութեանդ:

Այս յայտնութեան վրայ, Հայկանուշի դէմքը այն հրապոյրը առաւ, ինչ որ սովորական է մրրկալից գիշերուան յաջորդող ծիրաներփեան հօրիզոնին:

— Վահրամ զիս կը մազնխասցնես. հոգիս գերեզմանէն կը քաշես, կը հեռացնես: Խօսէ, ես կ'ողևւորիմ:

— Մեր ըրջամիտ Աքումաւենին կ'ուզէ արտասահմանի մէջ հայ աղջկանց բարձրագոյն լիկիոն մը բանալ եւ կազմակերպել մասնագիտական հաստատութիւն մը, որուն հովանաւորութեան ներքեւ կ'ուզէ պատրաստել հայ ուսանողուհիներ:

— Ո՛հ ինչ գեղեցիկ գաղափար ...

— Արմաւենին այլ եւս համազուած է որ Հայաստանի մէջ այդ տեսակ կրթական կազմակերպութիւն մ'ունենալը անհնարին է . յայտ յայտնի ըմբռնած է , ինչպէս ե ես , որ մեր կրթական գործը , քանի որ գաղանի միջոցներով ի գործ կը գրուի ու մեր ամէն անարատ գործունէութիւնը մասնութեամբ , կամ կասկածներով կ'արատաւորուի , կը ջլատուի , անարակոյս մեծ յառաջադիմութիւն մը յուսալը ազայամտութիւն է : Հիմա մենք առանց լքանելու՝ որչափ որ հանգամանքները կը ներեն , պարտական ենք ծաւալել կրթական գործի ուժը . մեր Հայաստանի ամէն անդամները նոյն ու աւելի եռանդուն կրակով կը շարունակեն իրենց գաղանի գիտական բանախօսութիւնները , ժողովրդական ակումբներ կը կազմեն , մշակ գասակարգին կը սիրցնեն գրքի լոյսը , կը սիրցընեն գրչի հմայքը : Վարժարանական մեր ամենէն մեծ ուժը կ'ուզենք հոսեցնել Արարատականի կողմերը : Բայց կը մտարեւրենք որ մեր լուսաւորութեան բոցը միշտ մոայլ է , զմեզ շրջապատող ամպերու սեւ թանձրութիւնը պէտք է նկատողութեան առնենք : Արմաւենին եթէ յաջողի իրագործել իր գաղափարները , այն ատեն մեր իզական

սեւր կ'ունենայ գիտութեան ուխտասեղին ,  
ուր խաւարը կը հալածուի . . .

— Պաշտելի է Արմաւենիի այդ մաքի  
յղացումը . սակայն այդ տեսակ կազմակեր-  
պութիւն մը պահելու համար՝ բարոյական  
ուժին հաւասար պէտք է նիւթականն ալ  
մտածել :

— Ինձի համար բարոյական ուժը դու  
ու Արմաւենին կը ներկայացնէք . իսկ նիւ-  
թականը մեր ընկերութեան գիտնալիքն է .  
մենք կ'ապահովցնենք այդ կարեւոր աջակ-  
ցութիւնը : Գիտցիր Հայկանուշ , մեր մէջ կան  
շատ գրամատէրներ , որ արդիւնք մը տես-  
նելնուն՝ յանուն ազգային բարեշրջումի սուրբ  
գործին պատրաստ են սիրով առատաձեւ-  
նութեամբ օգնելու և խրախուսելու . ահա  
տես մեր կրթական գործին սրշափ լուելեան  
բարերարներ ծնան . այժմ համոզուած եմ  
որ արդիւնք ու վստահութիւն ցուցնելնուս՝  
մեզի չեն պակսիր նիւթական աջակիցներ :

— Վահրամ , ինձի յարութիւն տուիր .  
ես ինչպէս սրախ կուտքը չընեմ գրեզ : Ես  
միշտ դադափարիդ երկրպագուն եղայ , բու-  
թերափոյ գարձեալ հոգւոյս խորանին վրայ  
կանդուն կը մնայ : Կը լսեմ ձայնիդ , այժմ  
պարագաներ կան որ ըմբոստութիւնը սրբու-  
թիւն է : Անձնասպանութեամբ ես սճրագործ



մը պիտի բլլայի: Հիմա ես արթնցայ, սթափեցայ: Արմաւենիին աջակիցը ես կ'բլլամ: Կ'ըմբռնեմ որ շղթաները ստքիս անցուցած՝ բնաւ գործ մը տեսնելու ունայն երազներով շեմ կրնար սպրիլ. բմբոստութիւնը, ահա կը խզէ այդ անգութ ու բիրտ կապանքը: Չեմ անանար, քեզմէ հեռանալուս, փութով ու ծածուկ ճամբորդութեան կը պատրաստուիմ, իմ անհատական գանձովս և հօրս ինծի պարգեւած ամէն նուէրներովը կը զիմեմ Արմաւենիին, և Արուստ կ'ուզեմ որ ինծմէ անբաժան մնայ:

Երկու մտերիմներու խօսակցութեան ատեն Արուստ հե ի հե շնչահեղձ անոնց առջեւ կը անկուի, այլագունած, յուզուած, շփոթած. անոնց կը գուժէ.

— Մասնուեր ենք ...

Անոնք յանկարծակի կու գան, շեն հասկընար եղելութիւնը. շուարած կը հարցնեն Արուստին:

— Արուստ որոշ խօսէ. ինչ կայ:

— Հայկանուշ հայրդ վահրամին տունը ստաիկաններով կոխեր է. կը սպառնայ մօրը, որ եթէ վահրամը ստաիկաններուն չի յանձնէ, տունը կրակի պիտի տայ. անխնայ զիրենք պիտի հալածէ:

Երկու մտերիմները սրտատրոփ կ'ընդ-  
միջեն .

— Արուս . . .

— Տխուր իրականութիւն մըն է գուժու :  
Հայկանուշ , հայրդ կ'ըսէ որ վահրամն է  
զբեղ զլիսէ հանողը . վահրամը բաղաբական  
գործիչ , խոտվարար ներկայացուցած է . ոս-  
տիկանները հօրդ հետ կը նեղեն վահրամի  
մայրը , խեղճը մարեցաւ ընկաւ , վաղարչ  
զինքը արթնցուց ես շերեւցայ հօրդ , ահա  
սճապարեցի , եղելութիւնը ձեզի իմացնելու .  
այս պարագային ինչ պէտք է գործել . ես  
չեմ գիտեր ըսելիքս . միայն կը գուշակեմ  
որ մատնութիւնը տխուր հեռեանք մը պի-  
տի ունենայ :

վահրամ թէեւ բնաւ չէր կարծեր անանկ  
ահաւոր հարուածի մը , այսու հանդերձ իր  
ներքին խոտլը զսպեց . մտածեց որ մատ-  
նուելուն վախճանը ջլատիչ է , ազատումը  
գժուար : Հայկանուշ հօրը այդ աստիճան  
զգուելի մատնութենէն դարշելով , զայրացած  
բարկութենէն կ'արատասուէր . վահրամին կը  
նայէր թէ ինչ փրկարար միջոց մը կրնայ  
գտնել : վահրամ մեղմ ու տխուր ձայնով  
սկսաւ խօսիլ .

— Հայկանուշ ես մատնուած եմ , փախ-  
չիլը աննպատակ է , բանի որ ոստիկաննե-

բը բսա իրենց օրէնքին, եթէ անձնատուր չըլլամ, կ'այրեն իմ օճախս, կը շարշարեն իմ խեղճ մայրս:

— Ուրեմն, ինչ... կ'ուզես արդարացնել հօրս մատնութիւնը... կ'ուզես բանտ նետուիլ և փճանալ. բնկերութիւնը... հապա կրթական մեր գործունէութիւնը... վահրամ լաւ մտածէ, պարագաներ կան, ուր իմաստասիրական անտարբերութիւնը, համակամութիւնը և անխոստութիւնը շատ փաստակար կրնան ըլլալ. բսա իս այժմ դու համակամ պէտք չես ըլլալ:

Այս խօսակցութեան ատեն, սասիկանները սկսեցին էին բլուրն ի վեր բարձրանալ. Հայկանուշի հայրը զանոնք կ'առաջնորդէր: Կամակարեր Հումակը նշաններով յայտնած էր վահրամին գտնուած տեղը, շար ծերը մինչեւ վերջը կ'ուզէր շար ապրիլ: Հայկանուշերը տեսաւ ձերբակալող խումբը, սպանացաւ վահրամին.

— վահրամ պէտք է խոյս տալ ու ծածկուիլ. անձնատուր ըլլալը լաւ չէ...

— Հայկանուշ, քանի որ մատնուել եմ, ուր որ ալ ըլլամ սասիկանութիւնը զիս և բնկերութիւնս հանգիստ պիտի չի թողու. հիմա բսա իս լաւ է որ ձերբակալուիմ, դատաստանի ատեն կը տեսնեն որ ես արդար

եմ, և արդէն կ'ըմբռնեմ որ հայրդ զիս մատ-  
ներ է այն նպատակաւ, որ ես վրայդ ազ-  
գեցութիւն չունենամ. այն տակն իր միաբաժ-  
նու իրեն ստրուկ կ'ըլլաս. ոչ. հիմա քու  
վրայ կը ծանրանայ նաեւ իմ գործունէու-  
թեանս մէկ մասը. փութա՛ւ այն գործին, ինչ  
որ յարմար և օգտակար տեսանք. փութա՛ւ  
Արմաւենիին ...

Խօսքը շաւարտած անոնք պաշարուեցան. հայկանուշի հայրը տեսնելով իր աղջիկը իր  
ազատիներ հոն. գայրացաւ, դժոխային բար-  
կութեամբ բնկեցաւ. սրտաց.

— Գուր ալ հաս ... սիլ աղջիկ, ան-  
սրտախ աղջիկ. դեռ կը շարունակես ալդ  
գարշելի բնութացրդ ... Ահա հիմա դու խել-  
քի կու գաս, հիմա կ'ազատիս քու այս ա-  
նուանարկ բնութացրէդ. Հեռացիր Վահրամէն.  
Գու զիգացի խոտփարար, տունս կրակ ձգող  
չար երխտասարդ, դու խորամանկ Վահրամ,  
հիմա այլ ես իմ ուսկանիս մէջն ես, քու  
ամբողջ ասպատամբողական գործերդ այլ ես  
բարի Հումակին մկայութեամբը յայտնի են  
աւրութեան. ես համարձակ զքեզ կը մատ-  
նեմ աւրութեան, և փո՛ւրք երկնքին ասով  
քու նիրաններէդ կ'ազատեմ ամբողջ միամիտ  
ծնող բներու գաւակները, կ'ազատեմ ձեռքէդ  
իմին Հայկանուշս, որ քու խնթ գաղափար-  
ներուդ սուշաողն եղաւ.

Հայկանուշ կը կատարէր, Վահրամ անխոսով լուս կը մնայ: Ահա վրայ կը հասնի Վահրամի մայրը հերարձակ, վայնասուսով ա իեղագար, կը տեսնէ որ Հայկանուշի հօր հրամանով ստաիկանները իր գաւկիճն սաքը շղթայ կ'անցընեն: Անէձքներ կը նեակ այն ազային գլխուն, կու լայ կը սպասանայ, սակայն ի գուր, ազան բանկամ գլուխ մըն էր, յամառ իր սրոշամին վրայ և ըտրատիրտ, կը հրամայէ ստաիկաններուն որ Վահրամը շուտով ձիուն գրայ նեան:

Վահրամ կը լռէ, իսկ Հայկանուշ սրաւն կը պոթիկայ:

— Հայր, զիս անշնորհք լեզուովդ կ'անարգես, այլ փոյթ չէ, արգարութիւնը ինձի հաւատարիմ կը մնայ... Այս տեսարանը, այս եղանական պատկերը գարշելի կասկածներուդ հեռեանքն է, մտածէ որ անմեղներ կը թշուսացընես, համեստ առաքիճի օճախ մը կը փլցընես...

Խօսքը կ'ուզէր տաջ տանիլ, Վահրամ ձեռքէն բաշեց և անոր ականջին փսփոսաց.

— Հայկանուշ խոստումդ կատարէ, ի դուր մի գիմագրեր, անխուսափելի է իմ գիրքս, հոգ մ'ըներ, հօրդ կասկած մի տար, կատարէ սրոշամդ, զնա Ալմաւենիին, ես իմ գործս բանալն ալ կը կատարեմ, գրչով

իմ աջակցութիւնս կը կրկնապատակեմ, բանար, առանձնութիւնը աւելի ինծի պիտի օգնեն, ես դեռ աւելի լաւ պիտի մտածեմ...

Աղան անհամբեր, ընդմիջեց վաճարամին խօսակցութիւնը.

— Բաւական է վաճարամ, լռէ՛. նոյն խկ աչքիս առջեւ կը յանդգնիս . . . և դեռ կը շարունակե՛ս . . .

— Աղա եթէ ըմբռնէիր խօսքիս սրբութեան աստիճանը . . .

— Լռէ՛: Հայկանուշ դու ալ բաշուէ. ալ բաւական է, զիս բարկութենէս կաթուածահար պիտի բնես:

Աղան ոստիկաններուն կը հրամայէ որ փութան վաճարամը ձերբակալեն ու հեռանան: Վաճարամի մայրը և Հայկանուշ քաջայանդուզն ջղային ուժգին թափով ոստիկանները կը հրեն կը յիմանեն: Սակայն ի զո՛ւր, բռնակալ բրաութեան՝ փափկիկ զիմադրութիւնը վարդէ խարազան մըն է: Այդ զիմադրութիւնը վաճարամին սիրաբը կը շարժէ, ազերսելով կ'աղաչէ.

Մայր . . . հոգի՛ս, իմ ամբողջ սէրս, պաշտելի մայր . . . և դու Հայկանուշ բնքուշ, սուրբ անկեղծութիւնս. համակամ եղիք, ինծի հետ համակամ. զիմադրութիւնը ուժշունի, թողուցէք զիս. իմ դատս ես արդա-

բութեան ձգեր եմ, հիմա գարշ մատնութեան զոհ կ'ըլլամ, փոյթ չէ . . . իսլամի օրէնքը գուցէ այս Աղային խղճէն աւելի արգար գանուի, իսլամի օրէնքը գուցէ ահսնէ արդարութիւնս և ինծի անդութ շըլլայ այս բրիտանոնեայ աղային պէս : Մի դիմադրէք, դիմագրութիւննիդ միայն կրնայ ինծի յանցանք մը, արաս մը համարուիլ, թողուցէք զիս իմ անարատութեանս մէջ : Աղա, վկայ Ս. Յարութիւնս, վկայ այս մեր պապերուն գերեզմանը, զիտցիր որ զիս անիրաւ տեղ կը մատնես, վիշտը, արցունքը պիտի խղզեն հոգիդ, ահա ես ինքնաբերաբար անձնատուր կ'ըլլամ արդարութեան ատեանին, եթէ մեր երկնքին տակ կայ արդարութեան ձայնը լսող . . . շուտով շղթաներս կը լուծուին, արգարութիւնս խղճիդ իայթը կ'ըլլայ ու կը սպառէ հիւծած կեանքդ :

Յետոյ Հայկանուշին ահանջին կը փոփոսայ.

— Հայկանուշ, օճախիս հոգը քեզի կը յանձնեմ . . . մնաս բարով անմոտանալիս, յիշատակդ բանախ հոգեզմայլ ուրուականը պիտի ըլլայ, ես քեզի հետ եմ . . .

Հայկանուշ լացաւ, փոխադարձ փոփոսաց հաւատարմութիւն մինչև գերեզման, և խոստացաւ այն օճախին հոգ ու խնամք տանիլ :

Վահրամ մօրը վզին պլլուելով, իմացուց

անոր որ շի մտածէ օճախին աւերումը, Հայ-  
կանուշ իրեն աղջիկն է, տան նխթական  
հրեշտակը:

✽

II. Յարութեան վրայ միայն վաճառմի  
մայրը փայտ կտրած մնաց: Աղան ստախ-  
կաններով հեռացաւ, ձերբակալուած վաճ-  
րամը արցունքստ աչքով կը դիտէր մօրը  
ստուերը. կը դիտէր օճախը: Աղան իրեն  
հետ բաշեց տարաւ Հայկանուշը և Արուօրը:

Վաղարշ վաճառմին տան մէջ մինակ կե-  
ցած, կը դիտէ վաճառմի ձերբակալուած տա-  
րադրումը. սկսած է լալ, փղձկելով լալ-  
պատուհանէն թաշկինակ կը շարժէ, լալով կը  
մտղթէ.

— Աստուած հետդ, արդարութիւնդ հետդ  
. . . սրտանելի ստաջնորդ . . .

Վաճառմ հեռացած էր, ահա Գարեգին  
ուշ ատեն անտատէն կը դաննայ շոր ձիւ-  
նապատ ճիւղերու խորձը շալակին: Կը  
տեսնէ վաղարշին լացը. աչուրները ամպո-  
տած կը հարցնէ.

— Վաղարշ, ինչո՞ւ կու լաս.

— Գարեգին ևս վէրք ունիմ, ան դիտ կը  
տանջէ: Գու հոգ մ'ըներ. գնայ մաման գտիր,  
ան II. Յարութիւն գնաց:

— Հիմա հո՞ն է.



— Այո՛, հոն պիտի ըլլայ:

Պարեգին վազեց, կայծակի պէս թուաւ, ըլլուրն ի վեր թուաւ: Խեղճ ազան տեսաւ որ մայրը, քար կարած գետին փռուած էր: Շուարեցաւ, հոս հոն նայեցաւ, ապշած մնաց, ու ահա ահռելի զիչ ձայնով լաց մը փրցուց. սրուն ձայնէն սթափեցաւ մայրը:

Արեւը անհոգ զուարթութեամբ կը լուսաւորէ այդ սգաւոր պատկերը: Մայրը աշուրներբ հեռու հորիզոնին վրայ սեւեռած կը մտածէ, միտքը խանգարուած է, մէկ քանի վայրկեանէն վերջը զգաստացաւ, իմացաւ իր վէրքին կսկիծը, տեսաւ իր Պարեգինը որ նոյնպէս ապուշ կարած՝ լացը աչքին վրայ սառած իրեն կը նայի: Չի կրցաւ գիմանալ ջլատիչ խոր վէրքին. վահրամի կորուստը խորտակած էր այդ քաջարի կնկան անուկան ուժը. ան լացաւ, կողկողագին լացաւ: Պարեգին այլ եւս ինքն իրմէ զուրս ելած զարհուրելի ձայնով սկսաւ լալ, պլլուեցաւ մօրը վզին. ու հինինալով հարցուց.

— Մամա ... ինչո՞ւ կու լաս:

Պատասխան չի կար, այլ ողբ, լաց, տաղ-նայ . . .

